

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ
ԳԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական
խորհուրդ՝

Ն. Թովմասյան
Ա. Գյուլումյան
Ֆ. Թոխյան
Ա. Թունյան
Ա. Խաչատրյան
Ն. Նազարյան
Ա. Պետրոսյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1(93)
2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

* ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԲԱՑԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
Լուսինե ԱԼԱՎԵՐԴՅԱՆ5

• ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1438-1450)

* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՐՏԻ 6-Ի՝
«ԵՐԵՒԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒԻ, ԵՐԵՒԱՅԻ
ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏ ՆՇՄԱՆԱԿԵԼՈՒԻ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒԻ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒԻ ՄԱՍԻՆ» N 275-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ 8-ՐԴ ԿԵՏԻ
3-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ «Բ» ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1438, 15 հունվարի 2019 թվականի).....20

* ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 41-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՎ
«ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 49-ՐԴ ԳԼԽՈՒՄ
ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՈՐՄԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1439, 22 հունվարի 2019 թվականի).....35

* 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ԱԶՍԱԿԱՆԱՅՄԱՆ, ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1440, 22 հունվարի 2019 թվականի).....52

* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՕԶՈՆԱՅԻՆ
ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄՈՆԻՏՈՒՄ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿԻԳԱԼԻԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1441, 22 հունվարի 2019 թվականի).....56

* ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՁԵՐԲԱԿԱԼ ՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՅ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ, ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 59-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 98-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ
ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ՝ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ
ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ԵՎ ՈՒՂԴԻՉ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ
3-Ի N 1543-Ն ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ
231-ՐԴ ԿԵՏԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՆԱԽԱՐԱՍՈՒԹՅԱՆ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1442, 5 փետրվարի 2019 թվականի).....61

* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ,
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1443, 12 փետրվարի 2019 թվականի).....81

* 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԶԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՄ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1444, 12 փետրվարի 2019 թվականի)104

* 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՈՒ ԴՐԱ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՄՅՈՒՄ ԿՈՂՄԻՑ, ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ
ԳՈՏՈՒ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1445, 12 փետրվարի 2019 թվականի)113

* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 376¹-ՐԴ ԵՎ 478.2-ՐԴ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1446, 19 փետրվարի 2019 թվականի).....126

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԷՐԵՐՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 2800-ԱՄՅԱԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 10-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1447, 26 փետրվարի 2019 թվականի).....140

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 24-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 30-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1448, 19 մարտի 2019 թվականի).....156

- * ԳԱՅԱՆԵ ՀԱՅՐՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 109-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 9-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 105-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1449, 19 մարտի 2019 թվականի).....171

- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1450, 19 մարտի 2019 թվականի).....187

Լուսինե ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
 Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ ԲԱՑԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Օրենսդրության մեջ առկա բացերը հայրենական իրավունքի թերևս ամենաարդիական հիմնախնդիրներից են: Իրավակիրառ գործունեության մեջ հաճախ է իրեն զգացնել տալիս կոնկրետ հարաբերության իրավական կարգավորման բացակայության կամ թերի կարգավորման արդյունքում ծագող գրեթե փակուղային իրավիճակը: Այս երևույթը համարժեք բնորոշելու նկատառումով հետազոտողները զուգահեռաբար օգտագործում են «օրենսդրական բաց» և «իրավունքի բաց» եզրույթները: Այսպես, Լ.Վ. Տիխամիրովան իրավունքի բացը դիտում է որպես կոնկրետ իրավահարաբերության իրավական կարգավորման ամբողջական կամ մասնակի բացակայություն¹: Ըստ Վ.Վ. Լազարևի՝ իրավունքի բացը նորմատիվ սահմանման ամբողջական կամ մասնակի բացակայությունն է, որի առկայության անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակական հարաբերությունների զարգացմամբ, գործող օրենսդրության հիմնական սկզբունքներով, էությամբ և բովանդակությամբ²: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ իրավունքի բացը ոչ լրիվ իրավական կարգավորումն է և իրավական կարգավորման անորոշությունը. այն կարող է լինել ոչ միայն հասարակական հարաբերությունների ոչ լիարժեք կարգավորվածության, այլև նորմատիվ պատվիրանների բովանդակության անորոշության հետևանք³: Ինչ վերաբերում է «օրենսդրական բաց» եզրույթին, ապա այն իրավունքի բացի տարատեսակներից է: Ա.Վ. Պոլյակովը օրենսդրական բացը սահմանում է որպես օրենսդրական կոնկրետ նորմերի բացակայություն⁴:

Սույն հոդվածի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում քննարկել իրավունքի բացի տարատեսակ հանդիսացող օրենսդրա-

¹ Տե՛ս **Тихомирова Л.В., Тихомиров М.Ю.** Юридическая энциклопедия / Под ред. Тихомирова М.Ю. - 5-е изд., доп. и перераб. - М.: Издание Тихомирова М. Ю., 2002, էջ 707:

² Տե՛ս **Лазарев В.В.**, Пробелы в праве и пути их устранения. - М.: Юридическая литература, 1974, էջ 37:

³ Տե՛ս «Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպության 2008 թվականի հունիսի 14-ի վեհաժողովին 22-ի կողմից ներկայացված ազգային զեկույց, էջ 1:

⁴ Տե՛ս **Поляков А.В., Тимошина Е.В.** Общая теория права: учебник. - СПб.: Изд-во юрид. ф-та СПбГУ, 2005 էջ 472:

կան բացը հատկապես այն **հաղթահարելու միջոցների**⁵ տեսանկյունից՝ կարևորելով վերջիններիս արդյունավետությունը, քանզի գաղտնիք չէ, որ օրենսդրական բացի առկայությունը⁶ ոչ միայն խախտում է օրենսդրության համակարգը, այլ նաև հանգեցնում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների խախտմանը⁷:

Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում կարևոր դերակատարություն ունեն սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինները⁸: Վերջիններս հաճախ են բախվում օրենսդրական բացի հիմնախնդրին հատկապես կոնկրետ և վերացական վերահսկողության շրջանակներում: Օրենսդրական բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու տեսանկյունից եվրոպական երկրների սահմանադրական դատարանները կարելի է պայմանականորեն խմբավորել հետևյալ կերպ.

- սահմանադրական դատարաններ, որոնք չեն հետազոտում և գնահատում օրենսդրական բացերի սահմանադրականությունը՝ չունենալով իրավագործություն⁹,

⁵ Օրենսդրական բացը կարելի է վերացնել, կարելի է և հաղթահարել: Օրենսդրական բացի վերացման հիմնական միջոցը նորմատիվ գործունեությունն է: Այս դեպքում բացերի վերացումը ենթադրում է իրավունքի նոր նորմերի ստեղծում կամ արդեն իսկ առկա նորմերի լրացում: Այս առումով օրինաստեղծ գործունեությունը և բացի վերացման գործընթացը հարաբերակցվում են ինչպես ամբողջն ու մասը: Սակայն պրակտիկայում այս եղանակով օրենսդրական բացի վերացումը պահանջում է երկարատև ժամանակահատված: Այդ իսկ պատճառով բացը կարելի է **հաղթահարել** իրավունքի իրացման գործընթացում: Այդ դեպքում իրավունքի նոր նորմ չի ստեղծվում, իսկ բացը լրացվում է օրենքի և իրավունքի անալոգիայի միջոցով: Օրենսդրական բացերի հաղթահարումը տեղի է ունենում նաև դատական մարմինների, մասնավորապես՝ սահմանադրական արդարադատության մարմինների գործունեության շրջանակներում: Այս առնչությամբ մանրամասն տե՛ս <https://cyberleninka.ru/article/n/zakonodatelnye-probely-i-sposoby-ih-preodoleniya>:

⁶ Ինչպես նշում է **Վ.Վ. Լազարևը**՝ բացերը նաև օգտակար են, քանի որ հնարավորություն են տալիս դատավորին քննելու և լուծելու ինքնատիպ գործեր՝ էլնելով արդարության վերաբերյալ սեփական հայեցողությունից:

⁷ Գրականության մեջ օրենսդրական բացի առաջացման տարբեր պատճառներ են մատնանշվում. մասնավորապես, իրավական նորմը սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի կողմից ճանաչվել է հակասահմանադրական, սակայն իրավասու իրավաստեղծ մարմինը չի գործում բավարար օպերատիվությամբ, այն է՝ ողջամիտ ժամկետներում միջոցներ չի ձեռնարկում հակասահմանադրական ճանաչված իրավական նորմով կարգավորված իրավահարաբերությունները կանոնակարգող նոր նորմ ընդունելու համար, կամ երբ օրենսդրությունը կյանքից հետ է մնում նոր հասարակական հարաբերությունների ծագման արդյունքում, կամ երբ ընթացիկ օրենսդրությունը հետ է մնում սահմանադրական կարգավորումից և այլն:

⁸ Սահմանադրական արդարադատության առջև դրված հիմնական նպատակներից մեկը, ի թիվս այլնի, յուրաքանչյուր անձի սահմանադրական իրավունքների պաշտպանումն է և պաշտպանության համակարգի գործունակության երաշխավորումն է՝ մարդու և քաղաքացու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորման միջոցով: Մանրամասն տե՛ս 22 Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր.: «Իրավունք», 2010, էջ 916:

⁹ Բռնիչ և Շերցեգովինա, Բուլդարիա, Դանիա, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Կիպրոս, Նորվեգիա, Վրաստան: Մանրամասն տե՛ս «Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպության 2008 թվականի հունիսի 14-ի վեհաժողովին ներկայացված զեկույց, էջ 31:

- սահմանադրական դատարաններ, որոնք հետազոտում և գնահատում են օրենսդրական բացերի սահմանադրականությունը՝ ունենալով սահմանադրորեն կամ օրենսդրորեն ամրագրված հատուկ լիազորություններ¹⁰,

- սահմանադրական դատարաններ, որոնք հետազոտում և գնահատում են օրենսդրական բացերի սահմանադրականությունը՝ չունենալով սահմանադրորեն կամ օրենսդրորեն ամրագրված հատուկ լիազորություններ¹¹:

ՀՀ Սահմանադրության մեջ և սահմանադրական դատարանի գործունեությունը կանոնակարգող սահմանադրական օրենքում կամ այլ իրավական ակտում բացահայտ (էքսպլիցիտ) կերպով չեն նախատեսվում օրենքներում և մյուս իրավական ակտերում թույլ տրված օրենսդրական բացերը հետազոտելու և գնահատելու՝ Սահմանադրական դատարանի լիազորություններ: Այդքանով հանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայով և «Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպության 2008 թվականի հունիսի 14-ի վեհաժողովին ներկայացված ազգային զեկույցում¹² արտահայտված դիրքորոշմամբ պնդում է, որ ՀՀ Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ հիմք են տալիս ենթադրելու, որ սահմանադրական դատարանն ունի օրենսդրական բացերի սահմանադրականության հետազոտման և գնահատման իմպլիցիտ իրավունք: Այսպես, նշված զեկույցի համաձայն՝ ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը, որը Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, փաստորեն, հանդի-

¹⁰ Եվրոպական երկրներից միայն Պորտուգալիայի Սահմանադրությունն է ամրագրել սահմանադրական դատարանի՝ օրենսդրական բացերի սահմանադրականության հետազոտման և գնահատման լիազորությունը, (հոդված 283/1): Մի շարք պետություններում, օրինակ Գերմանիայում, Էստոնիայում, Հունգարիայում և Սլովենիայում, սահմանադրական դատարանների՝ օրենսդրական բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու լիազորություններն ամրագրված են սահմանադրական դատարանի գործունեությունը կանոնակարգող օրենքներում: Մանրամասն տե՛ս Զեկույց, էջ 34:

¹¹ Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այն սահմանադրական դատարանները, որոնք, չունենալով սահմանադրորեն կամ օրենսդրորեն ամրագրված հատուկ լիազորություններ, այդուհանդերձ հետազոտում և գնահատում են օրենսդրական բացերի սահմանադրականությունը՝ հիմնավորելով այդպիսի լիազորության քողարկված (իմպլիցիտ) առկայությունն իրավական համակարգում Սահմանադրության գերակայությամբ: Այդպիսի երկրներ են, մասնավորապես, Բսպանիան, Լիտվան, Բուլղարիան, Լեհաստանը, Շվեյցարիան, Ռումինիան և այլն: Մանրամասն տե՛ս Զեկույց, էջ 26:

¹² Տե՛ս http://www.concourt.am/armenian/national_report/index.htm:

սահմանադրական արդարադատության հարցերով բարձրագույն դատական ատյանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանադրական դատարանի կարգավիճակի վերաբերյալ ամրագրում է սկզբունքային դրույթ՝ սահմանելով, որ սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վերջինս իրականացնում է իր գործունեությունը՝ հիմնվելով գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի վրա, որի էությունը բացահայտվում է հիշյալ օրենքի 19-րդ հոդվածում: Համաձայն նշված հոդվածի գործի բոլոր հանգամանքները սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե՝ չսահմանափակվելով սահմանադրական դատավարության մասնակիցների միջնորդություններով, առաջարկություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ պետության մեջ սահմանադրական օրինականության, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովման հարցերում սահմանադրական դատարանի դերի և տեղի նման ընկալումն իմպլիցիտ կերպով հաստատում է օրենսդրական բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու իր լիազորությունը: **Կարծում ենք նաև, որ ՀՀ սահմանադրական դատարանին նման լիազորության վերապահումը բխում է նաև վերջինիս որոշումների իրավական բնույթից և իրավաբանական ուժից**¹³: Սահմանադրական դատարանի որոշումների վերաբերյալ դատողություններ կարելի է կատարել վերջիններիս բնորոշ հատկանիշների լույսի ներքո: Այսպես, սահմանադրական դատարանի որոշումներին բնորոշ են պարտադիրությունը

¹³ Ինչպես հայտնի է՝ յուրաքանչյուր իրավական ակտ օժտված է իրեն բնորոշ հատկանիշներով, որոնց շնորհիվ այն առանձնանում է իրավական ակտերի ընդհանուր զանգվածից և որոնց միջոցով սահմանվում է դրա իրավաբանական ուժն ու իրավական բնույթը:

/համապարտադիրությունը^{14/}, վերջնական լինելը¹⁵, անմիջական

¹⁴ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի՝ գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Նշյալ դրույթը ՀՀ-ում դատական ակտերի պարտադիրության ընդհանուր կանոնի մասնավոր դրսևորումներից է: Այս կանոնը բխում է իշխանությունների տարանջատման և դրա վրա հիմնված՝ դատարանի անկախության սահմանադրական սկզբունքներից: Սակայն սահմանադրական դատարանի որոշումների պարտադիրությունը նաև այլ նրբերանգներ ունի՝ համեմատած ընդհանուր իրավասության կամ վարչական դատարանների դատական ակտերի պարտադիրության հետ: Առկա տարբերությունը պայմանավորված է այն առանձնահատկություններով, որոնք կան սահմանադրական դատարանի և ընդհանուր իրավասության դատարանների կամ վարչական դատարանի դատական ակտերի գործողության ոլորտների միջև: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ այս կամ այն վիճարկվող ակտը կամ դրա դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ իր որոշման իրավական հետևանքները կապվում են ոչ միայն տվյալ ակտի, այլ նաև դրա հիման վրա կայացված դատական կամ վարչական ակտերի իրավական հետևանքների, այդ ակտերի հիման վրա մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության հետ՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Ինչպես նշվում է Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի դատավոր Բրոսսի՝ 2008 թվականի հուլիսի 14-15-ը Ադրբեջանում կայացած «Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը» խորագրով խորհրդաժողովի ժամանակ ներկայացված զեկույցում, սահմանադրական դատարանի որոշումների յուրահատկությունը կայանում է նրանում, որ այն չի վերաբերում միայն տվյալ գործի կողմնակից. սահմանադրական դատարանի որոշումները շոշափում են հասարակական և պետական բոլոր շերտերը: Մանրամասն տե՛ս CDL-JU(2009)001: ՀՀ քաղաքացիական, քրեական, վարչական դատավարության օրենսգրքերը դիտարկում են սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները որպես դատական ակտերի վերանայման հիմք՝ անկախ որևէ հանգամանքից և առանց որևէ բացառության կամ վերապահման: Սահմանադրական դատարանի որոշումների և դատական մյուս ակտերի միջև տարբերությունները պայմանավորված են նաև նրանով, որ եթե ընդհանուր իրավասության դատարանների կամ վարչական դատարանի դատական ակտերը վերաբերում են կոնկրետ գործով պայմանավորված իրավահարաբերություններին, ապա սահմանադրական դատարանի խնդիրը վիճարկվող իրավական նորմի հետագա իրավաբանական ճակատագրի որոշումն է: Կախված սահմանադրական դատարանի որոշումից՝ վիճարկվող իրավական ակտը կամ կորցնում է իր իրավաբանական ուժը, կամ շարունակում է պահպանել իր գործողությունը: Այդ իսկ պատճառով սահմանադրական դատարանի որոշումները տարածվում են ոչ միայն վիճարկվող նորմի կիրառման հետ կապված կոնկրետ գործի վրա. վիճարկվող նորմատիվ ակտի հակասահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումն ունի գործողության այնպիսի ոլորտ, ինչպիսին որ ունի նորմատիվը մարմնի նորմատիվ ակտը: Մանրամասն տե՛ս Մ.А.Зарев.И.В. Правовые позиции Конституционного Суда России. М.: Городец, Формула права, 2003, էջ 152: Հետևաբար, կարծում ենք, որ Օրենքում ավելի ճիշտ կլիներ խոսել սահմանադրական դատարանի որոշումների ոչ թե պարտադիրության, այլ՝ համապարտադիրության մասին, քանի որ տվյալ դեպքում Օրենքի 61-րդ նշյալ դրույթն ավելի շատ ընդհանուր բնույթ ունի. այն մատնացույց է անում այն, ինչը բնորոշ է ցանկացած դատական ակտի՝ առանց հաշվի առնելու սահմանադրական դատարանի գործունեության առանձնահատկությունները: Նշենք, որ տարբեր երկրների դատական արակտիկայի և օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ շատ հաճախ հենց սահմանադրական դատարաններն իրենք են իրենց իրավական դիրքորոշումներում սեփական որոշումները դիտում որպես համապարտադիր բնույթ ունեցող ակտեր: Այսպես, վերոնշյալի հետ կապված՝ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ դաշնային սահմանադրական դատարանի որոշումներն ունեն համապարտադիր բնույթ: Մանրամասն տե՛ս [http://jurizdat.ru/editions/official/lcrf/archive_list.htm](http://www.codices.coe.int/NXT/gateway.dll?f=idSid=-codicesid:r:1dd3bb8Scid=CODICESIDST=document frame.htmSan=1d.desc.ENGROMS3:Բացի այդ, Գերմանիայի Հիմնական օրենքի մեկնաբանություններում Հիմնական օրենքի 94-րդ հոդվածի մեկնաբանության ժամանակ նշվում է, որ դաշնային սահմանադրական դատարանի որոշումներն օժտված են համապարտադիր ուժով (Allgemeinverbindlichkeit): Մանրամասն տե՛ս u GG Kommentar zum Grundgesetz, 2008, Carl Heymanns, էջ 2004: Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը ևս երբեմն իր սեփական որոշումները բնութագրում է որպես համապարտադիր: Այսպես, 1996 թվականի ապրիլի 22-ի N10-կ որոշման եզրափակիչ մասի 5-րդ կետում նշվում է տրված համապատասխան մեկնաբանության համապարտադիրության մասին: Մանրամասն տե՛ս Сохрание законодательства Российской Федерации. 1996. N18, էջ 2253: <a href=):

¹⁵ Ինչպես արդարացիորեն նշում է Պ. Ե. Կոնդրատովը՝ «սահմանադրական դատարանի որոշումները վերջնական լինելու հատկանիշով օժտելը կարևոր նախապայման է իրավական կարգավորման կայունության և հաջողականության պահպանման համար»: Բացի այդ, Սահմանադրությամբ և Օրենքով ամրագրված այս հատկանիշն ուղղված է պետական մարմինների պատասխանատվության բարձրացմանը՝ կապված իրենց կողմից ընդունվող իրավական ակտերի սահմանադրականությունն ապահովելու հետ: Իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք պետք է հստակորեն գիտակցեն, որ եթե իրենց կողմից ընդունված իրավական ակտը դառնա սահմանադրական արդարադատության օբյեկտ, ապա սահմանադրական դատարանը ընդունելու է այնպիսի որոշում, որը ենթակա չի լինելու բողոքարկման: Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանի

գործողությունը¹⁶: Հենց այս հատկանիշներն էլ պայմանավորում են սահմանադրական դատարանի որոշումների իրավական բնույթն ու իրավաբանական ուժը: Ընդ որում, գրականության մեջ սահմանադրական դատարանի ակտերի և իրավական համակարգում զբաղեցրած դերի վերաբերյալ առկա են ամենատարբեր, այդ թվում՝ խիստ իրարամերժ տեսակետներ: Մի խումբ հեղինակներ սահմանադրական դատարանի որոշումները համարում են իրավունքի աղբյուր, նրա ճյուղերից մեկը՝ նորմատիվ-իրավական ակտի ձևով¹⁷ կամ համանորմատիվ նշանակության նորմատիվ բնույթ ունեցող ակտեր¹⁸ կամ դատական նախադեպ¹⁹: Հեղինակների մեկ այլ խումբ սահմանադրական դատարանի որոշումները դիտում է որպես պաշտոնական սահմանադրական դոկտրինայի բովանդակություն²⁰ կամ որպես մեկնաբանության ակտեր, որոնք չեն ստեղծում իրավունքի նորմ²¹, կամ իրավակիրառական ակտեր²², կամ պրեյուդիցիար նշանակության ակտեր²³: Ինչպես տեսնում ենք՝ այս հիմնախնդրի վերաբերյալ առկա մոտեցումները հիմնականում բաժանվում են երկու տեսակետի. առաջինի համաձայն՝ սահմա-

որոշումների բողոքարկման արգելքը լրացուցիչ երաշխիք է սահմանադրական դատարանի գործունեության անկախության ապահովման համար: Նման արգելքը զգալիորեն նվազեցնում է սահմանադրական դատարանի վրա արտաքին ներգործության ազդեցության հնարավորությունը: Սահմանադրական դատարանի որոշումների այս հատկանիշը նշանակում է նաև, որ այդ որոշումները չեն կարող վերանայվել այլ մարմինների կողմից:

¹⁶ Նշենք, որ այս հատկանիշը, ի տարբերություն ներպետական օրենսդրության, ամրագրված է մի շարք երկրներում, մասնավորապես՝ Ռուսիայի Սահմանադրության 145-րդ հոդվածի 2-րդ պարբերության որոշումների համաձայն՝ սահմանադրական դատարանի որոշումները պարտադիր են անմիջական կատարման համար, և դատական իշխանության մարմինների պարտականությունն է կոնկրետ դեպքում ապահովել դրանց իրականացումը: Ինչպես նշվում է Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի որոշումների մեջ սահմանադրական դատարանի որոշումների իրականացումը, մասնավորապես որոշումից բխող գործողությունների կատարման անհրաժեշտությունը չի կարող կախվածության մեջ դրվել որևէ պաշտոնատար անձի հայեցողությունից: Սահմանադրական դատարանի որոշումները վիճարկվող օրենքի հակասահմանադրականության վերաբերյալ գործում են անմիջականորեն, այդ իսկ պատճառով հակասահմանադրական ճանաչված օրենքի վերացումն այն ընդունված մարմնի կողմից չի պահանջվում, քանի որ այն համարվում է վերացված, այսինքն՝ չգործող սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահից: Մանրամասն տե՛ս Собрание законодательства Российской Федерации. 2000. N 16, էջ 1744: http://jurizdat.ru/editions/official/lcrf/archive_list.htm:

¹⁷ **Срашун Б.А.** Решения Конституционного Суда Российской Федерации как источник права. Конституционное правосудие. Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. N 4 (14) 2001 - 1 (15) 2002, էջեր 154-167:

¹⁸ **Шульженко Ю.Л.** Конституционный контроль в России.-М., 1995, էջ 15:

¹⁹ Общая теория государства и права /Под ред. В.В. Лазарева.- М., 1994, էջ 131:

²⁰ **Богданова Н.А.** Конституционный суд Российской Федерации в системе конституционного права //Вестник Конституционного Суда Российской Федерации. 1997, N 3, էջ 65:

²¹ Теория государства и права.- Екатеринбург. 1996, էջեր 374-375:

²² **Нерсисянц В.С.** Суд не законодательствует и не управляет, а применяет право //Судебная практика как источник права.- М., 1997, էջեր 34-41:

²³ **Морщакова Т.Г.** Разграничение компетенции между Конституционным Судом и другими судами Российской Федерации //Вестник Конституционного Суда Российской Федерации. 1996, N 6:

նադրական դատարանները միայն իրավակիրառ մարմիններ են և չեն ստեղծում իրավունքի նոր նորմեր, մյուսի համաձայն՝ իրավակիրառ գործունեության հետ զուգահեռ սահմանադրական դատարանները իրականացնում են նաև իրավաստեղծ գործառույթ, այսինքն՝ սահմանադրական դատարանի որոշումներն օժտված են նորմատիվ բնույթով՝ հանդիսանալով իրավունքի, այդ թվում՝ սահմանադրական իրավունքի աղբյուր: Լիովին համամիտ լինելով երկրորդ մոտեցան հետ՝ կարծում ենք, որ իրավաստեղծ մարմինների շարքին պետք է դասել նաև սահմանադրական արդարադատության մարմիններին, որոնք իրավաստեղծ գործառույթ են իրականացնում նորմատիվ-իրավական ակտերի սահմանադրականությունը գնահատելիս²⁴:

Սահմանադրական դատարանի որոշումներին բնորոշ առանձնահատուկ իրավական բնույթն ու իրավաբանական ուժը, ի թիվս այլնի, հնարավորություն են տալիս խոսելու սահմանադրական դատարանի՝ օրենսդրական բացերի սահմանադրականության հետազոտման և գնահատման իմպլիցիտ լիազորության մասին:

Իրավունքի և օրենսդրական բացի հիմնախնդրին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010 թվականի փետրվարի 5-ի ՄԴՌ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավա-

²⁴ Սահմանադրական դատարանի իրավաստեղծ դերի բացառման կողմնակիցները (օրինակ, Վ. Ս. Ներսեսյանցը և ուրիշները), հիմնվելով ռոմանագերմանական իրավական ընտանիքի առանձնահատկությունների վրա, նշում են, որ այստեղ բացակայում է դատական նախադեպը, քանի որ, ի տարբերություն անգլոսաքսոնական համակարգի, ռոմանագերմանական իրավունքը ստատուտային, կոդիֆիկացված իրավունք է՝ իրավունքի հիմնական աղբյուրի՝ օրենքի գերակայությամբ: Հայտնի է, որ հիմնական իրավական համակարգերում գոյություն ունեն դատական որոշումների ընդունման տարբեր մոդելներ: Ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներում դատական որոշումների ընդունման ժամանակ նախապատվությունը տրվում է օրենքին՝ ի տարբերություն ընդհանուր իրավունքի երկրների, որտեղ դատական որոշումներ կայացնելիս առաջին հերթին ղեկավարվում են բարձրագույն դատական ատյանների՝ նախադեպի տեսքով որոշումներով՝ որպես իրավունքի աղբյուր: Վերոնշյալի հետ կապված իրավական գիտության մեջ տարբեր կերպ է ընկալվում նաև իրավական նորմը: Կոնտինենտալ իրավունքում նորմը թխում է օրենսդրությունից, ընդհանուր իրավունքում՝ դատական պրակտիկայից: Սակայն արդի ժամանակաշրջանում, ելնելով իրավական համակարգերի մերձեցման գործընթացներից, կարծում ենք՝ կարելի է փաստել, որ դատական նախադեպը, թեև պատմականորեն ձևավորվել է որպես անգլիական իրավունքին բնորոշ ինստիտուտ, այսօր արդեն չի հանդիսանում ընդհանուր իրավունքի երկրների մենաշնորհը:

սուրջան շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանության ու կիրառման, որը **խախտում է կամ կարող է խախտել** կոնկրետ սահմանադրական իրավունք: Ջարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Այսինքն, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-914 որոշմամբ սահմանել է այն չափանիշները, որոնցից որևէ մեկի առկայության պարագայում օրենսդրական բացը հանդիսանում է սահմանադրական վերահսկողության օբյեկտ:

Անհատական դիմումների նախնական քննարկման ժամանակ ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմերը, ղեկավարվելով օրենսդրական բացի հաղթահարման վերաբերյալ Սահմանադրական դատարանի սահմանած վերոնշյալ չափանիշներով, մերժում են գործի քննության ընդունումը, եթե առկա չէ դրանցից որևէ մեկը: Այսպես, 2016 թվականի հոկտեմբերի 18-ի ՄԴԴԿՈ/2-28 որոշմամբ²⁵ ՀՀ սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը, քննության առնելով Վ. Սարգսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը, մերժեց անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ արձանագրելով, մասնավորապես՝ «... խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողի փաստարկներն առ այն, որ «... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածը չի պարունակում վճարել բողոքը վարույթ ընդունելու հարցի քննարկումն ապահովելու համար ընթացակարգեր, չի

²⁵ Մանրամասն տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/judicial/2016/pdf/10.18.pdf>:

վարվում քվեարկությունների գրանցամատյան... , ինչի արդյունքում խախտվում է և ոչ իրատեսական է դառնում վճռաբեկ դատարանի՝ որպես դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը», ակնհայտ անհիմն են, քանի որ դիմողի հանդեպ կայացված ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի ապրիլի 27-ի որոշման ուսումնասիրությունը վկայում է, որ այն ստորագրել են պալատի նախագահը և թվով 8 դատավոր այն պարագայում, երբ համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 52-րդ հոդվածի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը կազմված է պալատի նախագահից և ինը դատավորից, իսկ խնդրո առարկա իրավակարգավորման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ՝ պալատի նախագահի և առնվազն հինգ դատավորի կազմով, վճռաբեկ բողոքը համարվում է վարույթ ընդունված, եթե դրան կողմ է քվեարկել նիստին ներկա դատավորների մեծամասնությունը: Այսինքն, ակնհայտ է խնդրո առարկա իրավակարգավորմամբ նախատեսված պահանջների պահպանված լինելու հանգամանքը: Հետևաբար, բացակայում են այն չափանիշները, որոնցից որևէ մեկի առկայությամբ պայմանավորված հնարավոր կլինե՞ր դիմողի կողմից վկայակոչված «օրենսդրական բացը» սահմանադրական դատարանի քննության առարկա դարձնելը»: Մեկ այլ՝ 2017 թվականի մայիսի 15-ի ՍԴԴԿՈ/1-11²⁶ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմը, քննության առնելով Ա. Հակոբյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը, մերժեց անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ արձանագրելով, մասնավորապես՝ «...խնդրո առարկա գործով դիմողն առաջ է քաշում օրենսդրական բացի խնդիր՝ փաստարկներ ներկայացնելով առ այն, որ «...վիճարկվող դրույթները չեն նախատեսում գրավի կիրառելիության ժամկետային սահմանափակում, և առաջացած օրենսդրական բացի արդյունքում չի ապահովվում իր՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի իրացումը...»: Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ կիրառված գրավը կալանավորման ժամկետով պայմանավորված չլինելը չի ենթադրում, որ

²⁶ Մանրամասն տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/judicial/2017/pdf/05.15.pdf>:

անձը զրկված է գրավի՝ որպես խափանման միջոցի տեսակի հետագա պահպանումը վիճարկելու հնարավորությունից, յուրաքանչյուր պահին համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերջինս իրավասու է հանդես գալ խափանման միջոց գրավը փոխելու կամ վերացնելու միջնորդությամբ, իսկ այն մերժվելու դեպքում կայացված որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կարող է բողոքարկվել համապատասխան մարմիններին, *ուղղված է այն դեպքերին, երբ անձինք, որոնց նկատմամբ կիրառվել է գրավը որպես կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց, չեն ցանկանում, որ իրենց նկատմամբ շարունակվի այն կիրառվել, կարող են վարույթն իրականացնող մարմնին դիմել այն վերացնելու միջնորդությամբ, իսկ մերժման դեպքում՝ օգտվել վարույթն իրականացնող մարմնի որոշման իրավաչափությունը ստուգելու՝ օրենսդրությամբ նախատեսված հնարավորություններից*: Օրենսդրական բացի առնչությամբ դիմողի կողմից առաջ քաշված փաստարկներն առ այն, որ «... վիճարկվող դրույթները չեն նախատեսում գրավի կիրառելիության ժամկետային սահմանափակում...», վերաբերում են մի իրավիճակի, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ինչի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Բացի այդ, ՀՀ քրեական դատարավության օրենսդրությամբ նախատեսված խափանման միջոցներին վերաբերող իրավակարգավորումները ոչ բոլոր խափանման միջոցների համար են նախատեսում կիրառելիության ժամկետային սահմանափակումներ: Վերոշարադրյալի համատեքստում դիմողի կողմից վկայակոչած օրենսդրական բացն իր բնույթով այնպիսին չէ, «որ թույլ չի տալիս ապահովել այս կամ այն իրավունքի՝ խնդրո առարկա գործի համատեքստում՝ սեփականության իրավունքի, իրացման հնարավորությունը...»:

Այժմ անդրադառնանք այն իրավիճակներին, երբ ՀՀ սահմանադրական դատարանն անհատական դիմումի հիման վրա գործն ընդունում է քննության՝ արձանագրելով, որ խնդրո առարկա գործով վկայակոչված օրենսդրական բացը, բավարարելով վերոնշյալ չափանիշներից որևէ մեկը, հանդիսանում է սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Գրականության մեջ առանձնացվում է

սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների կողմից օրենսդրական բացի հաղթահարման մի քանի միջոց: Անդրադառնանք ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայում դրանցից առավել հաճախ կիրառելիներին: Այսպես.

- օրենսդրական բացի հաղթահարում *նորմի իրական սահմանադրաիրավական իմաստի բացահայտման միջոցով*: Այս դեպքում նորմի մեկնաբանումը, որի ընթացքում տեղի է ունենում վերջինիս սահմանադրաիրավական իմաստի բացահայտումը, նպատակաուղղված չէ նոր նորմի ստեղծմանը: Մեկնաբանումը բացահայտում է նորմի այն բովանդակությունը, որն ի սկզբանե բնորոշ էր դրան: Ընդ որում, այդ բովանդակությունն ավելի լայն է, քան ենթադրել էր իրավակիրառողը, և ներառում է հասարակական հարաբերություններ, որոնք ավելի վաղ թվացել էին չկարգավորված: ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք գործերով կիրառել է հենց այս միջոցը՝ Հիմնական օրենքով ամրագրված սահմանադրական իրավունքի խախտման պատճառ հանդիսացած թվացյալ օրենսդրական բացը հաղթահարելիս: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՄԴՈ-1310 որոշմամբ²⁷ արձանագրել է, որ «... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է վճարել բողոք բերելու իրավունք ունեցող անձանց ցանկը, որում ներառված չէ գործին մասնակից չդարձված անձը՝ որպես առանձին սուբյեկտ: ... Թեև օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասում ձևականորեն առկա է օրենքի բաց, սակայն առկա է այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիք: Որպես այդպիսի երաշխիք է հանդես գալիս օրենսգրքի 229-րդ հոդվածի 3-րդ մասը»: Սույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է նաև, որ «... օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի և 229-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների միջև առկա չէ որևէ ներքին հակասություն, քանի որ 229-րդ հոդվածի 3-րդ մասը, ի լրումն 223-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սուբյեկտների, նախատեսում է վճարել բողոք բերելու իրավունք ունեցող ևս մեկ

²⁷ Սույն գործով դիմողը, վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասը, գտնում էր, որ գործին մասնակից չդարձված անձի կողմից դատական ակտը բողոքարկելու իրավունքը, ինչպես նաև առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի դատական ակտերն ըստ դատական ատյանների բողոքարկելու իրավունքը վիճարկվող դրույթում ուղղակիորեն և հստակ սահմանված չէ, ինչը հնարավորություն է տալիս ՀՀ վճարել դատարանին մի դեպքում, ՀՀ վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված վճարել բողոքն ընդունել վարույթ, իսկ մեկ այլ դեպքում՝ ՀՀ վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված վճարել բողոքն առանց քննության թողնելու եղանակով այն վարույթ չընդունել:

սուբյեկտ՝ գործին մասնակից չդարձված անձանց, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատական ակտ է կայացվել: Հետևաբար, օրենսգրքի 229-րդ հոդվածի 3-րդ մասի առկայության պարագայում օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ վճարելի բողոք բերող սուբյեկտների ցանկը սպառնիչ չէ, և 229-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է կիրառվի նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-րդ մասի հետ համադրված»: Սույն որոշման եզրափակիչ մասում Դատարանն արձանագրել է. «... Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վճարելի բողոք բերելու իրավունք ունեցող անձանց ցանկը նույն օրենսգրքի 229-րդ հոդվածի 3-րդ մասի առկայության պարագայում սպառնիչ չէ և չի արգելափակում գործին մասնակից չդարձված անձանց՝ վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճարելի բողոք բերելու իրավունքը, երբ այդ ակտերը վերաբերում են տվյալ անձանց իրավունքներին և պարտականություններին»²⁸ :

Գրականության մեջ որպես օրենսդրական բացի հաղթահարման առանձին միջոց նշվում է նաև Սահմանադրության նորմերի անմիջական կիրառումը²⁹: Կարծում ենք, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում այս միջոցը կիրառում է օրենսդրական բացի հաղթահարման վերոնշյալ միջոցի հետ համատեղ: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2013 թվականի սեպտեմբերի 24-ի ՍԴՈ-1115 որոշման³⁰ մեջ արձանագրել է, որ «...դատական ակտերի հարկադիր կատարման շրջանակներում պահանջատիրոջը վերապահված իրավունքներն իրենց էությամբ կիրառելի են նաև իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետության նկատմամբ: Փաստորեն

²⁸ Մանրամասն տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1310.pdf>:

²⁹ Մանրամասն տե՛ս **Зорькин В.Д.**, Современный мир, право и Конституция.- М.: Норма, 2010, էջ 180,

Бондарь Н.С., Судебный конституционализм в России в свете конституционного правосудия.- М.: Норма: ИНФРА М, 2011, էջ 262:

³⁰ Սույն գործով դիմողը, վիճարկելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը, գտնում էր, որ այն պարունակում է օրենսդրական բաց և այդ բացով պայմանավորված՝ իրավական անորոշություն, քանի որ պարզ չէ, թե ինչու է կատարողական թերթի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի համարելու հնարավորություն ընձեռվել միայն քաղաքացուն:

ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համահունչ՝ օրենսդիրը դիտարկվող օրենքով սահմանել է պահանջատեր հանդիսացող սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառելով ոչ միայն քաղաքացուն, այլև իրավաբանական անձին: ... Անդրադառնալով իրավակիրառական պրակտիկային՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող դրույթի ձևակերպման ընկալումը և մեկնաբանությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցրել է նրան, որ էապես նեղացվել է ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական կարգավորման շրջանակը...»: Սույն որոշման եզրափակիչ մասում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «... «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սահմանադրական դատարանի կողմից դրա սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման վրա հիմնված հետևյալ բովանդակությամբ. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «քաղաքացի-պահանջատիրոջ» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանել և կիրառել ՀՀ սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը համահունչ՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է նաև իրավաբանական անձանց, քանի որ այն իր էությանը կիրառելի է վերջիններիս նկատմամբ»³¹: Կարծում ենք, որ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն օրենսդրական ենթադրյալ բացը հաղթահարել է՝ կիրառելով և՛ սահմանադրական նորմերի անմիջական կիրառման, և՛ նորմի սահմանադրաիրավական իմաստի բացահայտման միջոցները,

- սահմանադրական արդարադատության մարմինների կողմից օրենսդրական բացի հաղթահարման միջոցներից է նաև ժամանակավոր իրավակարգավորումներ նախատեսելը՝ մինչև օրենսդրի կողմից համապատասխան նորմերի ստեղծումը: Այս միջոցը բնորոշ է նաև ՀՀ սահմանադրական դատարանին: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2015 թվականի փետրվարի 15-ի ՍԴՈ-1190 որոշմամբ³² փաստել է, որ «... մի կողմից, օբյեկտիվորեն

³¹ Մանրամասն տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2013/pdf/sdv-1115.pdf>:

³² Սույն գործով դիմողը գտնում էր, որ վիճարկվող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով բացառում է վարչական գործի վարույթը կարճելու վերաբերյալ վարչական դատարանի դատական ակտերի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելը, հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածներին:

հնարավոր չէ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման՝ «հետաձգված բողոքարկման» շրջանակներում վիճարկումը, իսկ մյուս կողմից՝ գործող իրավակարգավորումների պայմաններում բացակայում է գործի վարույթը կարճելու մասին որոշման՝ անմիջական բողոքարկման շրջանակներում վերանայման հնարավորությունը: Այլ կերպ ասած, ամրագրելով գործի վարույթը կարճելու հետ կապված իրավահարաբերությունները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկել գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը՝ բացառելով նաև դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, մինչդեռ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման համատեքստում»: Այդ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրեց, որ «... Հետևաբար, մինչև Ազգային ժողովի կողմից գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման վերանայման համապատասխան իրավակարգավորումներ և ընթացակարգեր նախատեսելն իրավակիրառական պրակտիկան պետք է ընթանա այն մոտեցմամբ, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կանոններով՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և դրա կարևոր բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ³³»:

³³ Մանրամասն տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1190.pdf>: Նման պրակտիկան ծանոթ է նաև Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանին: Այսպես, ՌԴ սահմանադրական դատարանը 2002 թվականի ապրիլի 9-ի թիվ 68-Օ որոշմամբ արձանագրեց հետևյալ բացը. «Պատվավոր դոկտորի մասին» օրենքով պարզևատրված անձանց համար նախատեսվում էր բնակարանային և կոմունալ վճարումների համար արտոնություններ, սակայն օրենքը չէր սահմանում, թե ինչ միջոցների հաշվին են տրվելու դրանք: Դատարանն արձանագրեց, որ արտոնությունները պետք է տրվեն դաշնային բյուջեի հաշվին, մինչև համապատասխան պատշաճ իրավակարգավորումների սահմանումը: Մանրամասն տե՛ս *Собрание законодательства Российской Федерации. 22.07.2002. № 29. էջ 3004*: Նշենք նաև, որ Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը հաճախ կիրառում է նաև անալոգիան՝ որպես օրենսդրական բացի հաղթահարման միջոց: Այսպես, Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 5/Պ որոշմամբ արձանագրել է բացի առկայություն «Ակցիոներական ընկերությունների» մասին օրենքում՝ գտնելով, որ օրենքում ամրագրված չէ այն անձանց շրջանակը, որոնք կարող են դատարան դիմել այն գործարքներն առոչինչ ճանաչելու պահանջով, որոնց կատարման հարցում նրանք շահագրգռված են: Դատարանը այդ գործով արձանագրել է, որ վիճարկվող դրույթը պետք է մեկնարանել ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ կետի և քաղաքացիական օրենսդրության այլ հիմնական սկզբունքների համատեքստում: Մանրամասն տե՛ս *Собрание законодательства Российской Федерации. 28.04.2003. № 17. էջ 1656*:

Այսպիսով, օրենսդրական բացերը, ընդհանուր առմամբ, անցանկալի, սակայն յուրաքանչյուր պետության իրավական համակարգին բնորոշ անխուսափելի երևույթներից են: Ուստի խիստ կարևորվում է դրանց արդյունավետ հաղթահարումն իրավասու սուբյեկտների կողմից: Ընդ որում, այս գործընթացում կարևոր գործոններ են ոչ միայն սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների հեղինակությունը, ապաքաղաքականացվածությունը, հենց որոշումների սահմանադրաիրավական մշակվածության աստիճանը, այլ նաև վերջիններիս պատշաճ կատարումը հասցեատերերի կողմից: Թվարկված գործոնների միաժամանակյա առկայությունն է վկայում երկրում օրենսդրական բացերի արդյունավետ հաղթահարման մասին:



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի՝ «ԵՐԵՒԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ
ՆՊԱՍՏԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԵՐԵՒԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ
ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 275-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ
8-ՐԴ ԿԵՏԻ 3-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ «Բ» ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հունվարի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (գեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա.Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Կառավարության,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի՝ «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 275-Ն որոշման N1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 275-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2014 թվականի մարտի 6-ին, ՀՀ վարչապետի կողմից ստորագրվել է 2014 թվականի մարտի 27-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի ապրիլի 3-ից:

Որոշման «Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու և վճարելու կարգ» վերտառությամբ N1 հավելվածի (այսուհետ՝ Կարգի) 8-րդ կետը, որը վերջին անգամ փոփոխվել և լրացվել է 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1178-Ն որոշմամբ, սահմանում է.

«8.Նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս՝ հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված (անկախ բնակության (հաշվառման) վայրից)՝

1) նոր ծնված երեխայի ծնողներից (հորից և մորից) սերված երեխաները և զավակները (նոր ծնված երեխայի հարազատ քույրերն ու եղբայրները).

2) նոր ծնված երեխայի մորից սերված երեխաները և զավակները՝ բացառությամբ այն դեպքի, երբ անչափահաս տարիքում նրանց խնամքը դատարանի որոշմամբ հանձնվել է այլ անձի, կամ մայրը դատական կարգով զրկվել է ծնողական իրավունքներից.

3) նոր ծնված երեխայի հորից սերված երեխաները և զավակները, եթե

ա. նրանց մայրը մինչև նոր ծնված երեխայի ծննդյան օրը մահացել կամ օրենքով սահմանված կարգով ճանաչվել է մահացած կամ անհայտ բացակայող, կամ դատական կարգով ճանաչվել է անգործունակ,

բ. դատարանի որոշմամբ նրանց խնամքն անչափահաս տարիքում հանձնվել է նոր ծնված երեխայի հորը, կամ՝

գ. այդ երեխաների մայրը զրկվել է ծնողական իրավունքներից, կամ

դ. դատական կարգով հաստատված է այն փաստը, որ նրանց մայրը չարամտորեն (միտումնավոր) խուսափել է ծնողական իրավունքները և պարտականությունները կատարելուց (չի կատարել ծնողական իրավունքները և պարտականությունները) և անչափահաս տարիքում այդ երեխաների խնամքը (երեխաների դաստիարակությունը, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունը) իրականացրել է նոր ծնված երեխայի հայրը»:

Գործի քննության առիթը ՀՀ վարչական դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է ՀՀ վարչական դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 22-ի ՎԴ/11309/05/17 գործով «Վարչական գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով վիճարկվող իրավական ակտը և վերջինիս հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Ե Ց** .

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը կարծում է, որ Արոշման N1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված՝ ՎԴ/11309/05/17 գործով կիրառման ենթակա դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին, քանի որ խտրական մոտեցում է նախատեսում մի կողմից այն հայր ծնողների նկատմամբ, որոնց նախորդ ամուսնությունից ծնված երեխաներն անչափահաս տարիքում բնակվել են իրենց հետ, իրենք են իրականացրել այդ երեխաների խնամքը՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա (քանի որ առկա չի եղել ծնողների միջև փոխադարձ համաձայնություն), և մյուս կողմից՝ այն հայր ծնողների նկատմամբ, որոնց նախորդ ամուսնությունից ծնված երեխաներն անչափահաս տարիքում բնակվել են իրենց հետ, իրենք են իրականացրել այդ երեխաների խնամքը՝ երեխաների մոր հետ փոխադարձ համաձայնությամբ (ուստի բացակայել է դատական կարգով հարցը լուծելու, հետևաբար՝ նաև դատական ակտի անհրաժեշտությունը):

Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմով խտրական վերաբերմունք է դրսևորված նաև հայր և մայր ծնողների միջև՝ վերջիններիս սեռով պայմանավորված, քանի որ, Կարգի 8-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվում նոր ծնված երեխայի մորից սերված երեխաները և զավակները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահաս տարիքում նրանց խնամքը դատարանի որոշմամբ հանձնվել է այլ անձի, կամ մայրը դատական կարգով զրկվել է ծնողական իրավունքներից:

Դիմողը գտնում է, որ Կարգի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթից բխում է, որ մայրը, որը փոխադարձ համաձայնությամբ չի իրականացրել նախորդ ամուսնության ընթացքում ծնված երեխաների խնամքը, նոր ամուսնության ընթացքում երեխա ունենալու դեպքում կարող է հավակնել երեխայի ծննդյան միանվագ նպաստի ավելի մեծ չափի գումար ստանալուն, քանի որ նոր ամուսնության ընթացքում նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի են առնվում իրենից սերված և նախորդ ամուսնությունից ծնված երեխաները, նույնիսկ այն դեպքերում, երբ այդ երեխաների խնամքին ինքը չի մասնակցել, իսկ հայր ծնողը, որն իրականացրել է նաև այդ կնոջից ծնված երեխաների խնամքը, նոր ամուսնության ընթացքում երեխա ունենալու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի ավելի մեծ չափի գումար ստանալուն չի կարող հավակնել, քանի որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս չեն կարող հաշվի առնվել նախորդ կնոջից ծնված երեխաները, քանի որ, թեև ինքն է փաստացի իրականացրել այդ երեխաների խնամքը, սակայն բացակայում է դրա վերաբերյալ դատական ակտը:

Դիմողը նշում է, որ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով նախատեսված կարգավորումների պայմաններում չեն բացառվում դեպքեր, երբ ամուսնալուծությունից հետո երեխաների դաստիարակությունը, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունը ծնողների փոխադարձ համաձայնությամբ իրականացնի հայրը, որի հետ էլ բնակվեն երեխաները, իսկ համաձայնության առկայության պայմաններում դատական ակտի անհրաժեշտությունն առհասարակ բացակայում է:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը նշում է, որ կան դեպքեր, երբ ծնողների ամուսնալուծությունից հետո երեխաների հաշվառումը չի փոխվում: Նման դեպքերում ստեղծվում է իրավիճակ, երբ նոր ծնված երեխայի հորից սերված՝ փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող

նրա երեխաները շարունակում են հոր հետ միևնույն բնակության վայրում հաշվառված մնալ, սակայն այդ երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացնում է մայրը: Այսինքն, **հոր երկրորդ ամուսնությունից հետո ստեղծված ընտանիքը չէ, որ իրականացնում է նոր ծնված երեխայի և այդ երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխաների խնամքն ու դաստիարակությունը:**

Հաշվի առնելով նման իրավիճակի առկայության հնարավորությունը և նպատակ ունենալով երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն բխեցնելու նրա լավագույն շահերից պատասխանողը գտնում է, որ անհրաժեշտ է սահմանել լրացուցիչ կարգավորումներ հստակ որոշելու համար այն ընտանիքը, որն իրականացնում է թե՛ նոր ծնված երեխայի և թե՛ նրա կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխաների խնամքն ու դաստիարակությունը:

Ըստ պատասխանողի՝ ոլորտը կարգավորող իրավանքները միտված են բացառելու հնարավոր չարաշահման դրսևորման այնպիսի դեպքեր, երբ, օրինակ, նոր ամուսնությունից ծնված երեխայի միանվագ նպաստի ավելի մեծ չափով գումար ստանալու նպատակով նախորդ ամուսնությունից ծնված երեխաների թիվը կարող է օգտագործել այն ծնողը, որն առհասարակ չի մասնակցել այդ երեխաների խնամքին ու դաստիարակությանը (միաժամանակ, արդարացի է այն ծնողի կողմից նախորդ ամուսնությունից ծնված երեխաների թիվն օգտագործելը, որն իրականացրել է այդ երեխաների խնամքն ու դաստիարակությունը):

Պատասխանողը պնդում է, որ «երեխայի խնամքը հորը հանձնված լինելը կարող է հավաստվել միայն դատական ակտով» ուղղակի պահանջի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ, նախ գործնականում ավելի հաճախ հանդիպում են մոր կողմից երեխային խնամելու դեպքերը ծնողների ամուսնալուծության դեպքում, և ապա՝ միայն դատական ակտով կարող է անառարկելիորեն որոշվել այն հարցը, թե ով է իրականում եղել երեխայի խնամքով զբաղվող ծնողը:

Պատասխանողի կարծիքով վիճարկվող նորմում դատական ակտի առկայությամբ պայմանավորված խտրականությունն արդարացված է՝ որպես իրավաչափ նպատակ իր հիմքում ունենալով երեխայի ծնողներից մեկի հետ բնակվելու փաստի բացահայտման անհրաժեշտությունը:

Պատասխանողը միաժամանակ տեղեկացնում է, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված է որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «դ» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ:

3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցադրումները

Վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

ա) արդյո՞ք սոցիալական ապահովության իրավունքի իրացման հարցում նշված դրույթով նախատեսված տարբերակված մոտեցումն ունի օբյեկտիվ հիմք, հետապնդում է իրավաչափ նպատակ և չի խախտում Սահմանադրությամբ նախատեսված խտրականության արգելքի ու կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքները (Սահմանադրության 29 և 30-րդ հոդվածներ),

բ) արդյո՞ք նման իրավակարգավորման պայմաններում երաշխավորված են ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս կնոջ և տղամարդու հավասար իրավունքները (Սահմանադրության 35-րդ հոդվածի 2-րդ մաս),

գ) արդյո՞ք վիճարկվող իրավակարգավորումը չի սահմանափակում ծնողների իրավունքների և պարտականությունների իրացման հնարավորությունները (Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մաս), և արդյո՞ք այդ իրավակարգավորման պայմաններում երեխայի շահերն առաջնահերթ ուշադրության են արժանանում (Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մաս),

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, **բազմազավակության**, հիվանդության, հաշմանդամության, աշխատավարձում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»: Յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքի ծավալը

որոշվում է օրենքով: Օրենքով են ամրագրվում նաև այդ իրավունքի իրացման կարգը և պայմանները: Այսինքն՝ օրենսդիրը պարտավոր է ընդունել սոցիալական ապահովության իրավունքը երաշխավորող օրենսդրական կարգավորումներ, և միաժամանակ, օգտվում է լայն հայեցողությունից, թե ինչպիսի կարգավորումներ պետք է ամրագրի: Մահմանադրության 83-րդ հոդվածում ամրագրված իրավունքի երաշխավորման է ուղղված «Պետական նպաստների մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք):

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետական նպաստների տրամադրման նպատակն է՝ 1) անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրավատթարացումը կանխելը. 2) ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը. 3) ժողովրդագրական իրավիճակի բարելավումը. 4) սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը»:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ **երեխայի ծննդյան միանվագ նպաստը** պետական նպաստների տեսակներից մեկն է:

Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի տարբերակում՝ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվով՝ հաշվի առնելով նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների թիվը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու կարգը, նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու համար մյուս երեխաներին և զավակներին հաշվի առնելու պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Օրենքի իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը 2014 թվականի մարտի 6-ին ընդունել է «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» քննության առարկա որոշումը:

Օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով՝ **երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է ծնված յուրաքանչյուր երեխայի համար**: Հետևաբար՝ ցանկացած նոր ծնված երեխա, անկախ որևէ հանգամանքից իրավունք ունի ստանալու միանվագ նպաստ, իսկ

պետությունն իր հերթին պարտավոր է այն տրամադրել երեխայի ծնողներին կամ ծնողին՝ հորը կամ մորը, կամ օրինական ներկայացուցիչներին, կախված կոնկրետ իրավիճակից:

4.2. Որոշման N1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համապատասխան նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս՝ հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված նոր ծնված երեխայի **հորից** սերված երեխաները և զավակները, **եթե դատարանի որոշմամբ նրանց խնամքը հանձնվել է նոր ծնված երեխայի հորը**: Հարկ է ընդգծել, որ վերոնշյալ դրույթը լրացվել է Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1178-Ն որոշմամբ և նախկինում չի գործել:

Օրենքի՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքն ամրագրող 24-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար դիմելու իրավունք ունեն **ծնողը**, որդեգրողը կամ խնամակալը, իսկ երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է, եթե **ծնողը** և նոր ծնված երեխան բնակվում են (հաշվառված են) Հայաստանի Հանրապետությունում բնակչության վայրի հասցեով: **Օրենքը չի նշում, թե կոնկրետ ո՞ր ծնողը, ուստի ինչպես մայրը, այնպես էլ հայրն օժտված են վերը նշված նպաստի համար դիմելու և այն ստանալու իրավունքով**: Օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելիս նոր ծնված երեխայի, նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների բնակչության (հաշվառման) վայրը որոշվում է բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների հիման վրա: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում տարածքային կենտրոնը ճշտում է նոր ծնված երեխայի ծնողի կողմից ներկայացված տվյալների հավաստիությունը և որոշում է ընդունում երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու կամ նշանակումը մերժելու մասին:

Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված իրավական նորմերի աստիճանակարգության պահպանման տեսանկյունից օրենքներն ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ, քան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:

Այնուհանդերձ, Որոշմամբ սահմանված իրավակարգավորումը պահանջում է նախորդ երեխաների խնամքն ու դաստիարակությունը նոր ծնված երեխայի **հորը** հանձնված լինելու վերաբերյալ

դատական ակտի առկայություն: Կառավարությունը, փոխելով Որոշման համապատասխան դրույթը, լրացնելով ու սահմանելով դատարանի որոշում ներկայացնելու պահանջը, **նպատակ է հետապնդել խուսափել հնարավոր չարաշահումներից և բացառել այն դեպքերը, երբ ավելի մեծ չափի նպաստ կարող է ստանալ ծնողը, որը փաստացի չի իրականացրել նախորդ ամուսնությունից ծնված երեխաների խնամքը:**

Որոշման համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս նոր ծնված երեխայի հորից սերված երեխաները և զավակները հաշվի են առնվում միայն այն դեպքում, եթե վերջիններիս խնամքը նոր ծնված երեխայի հորը **հանձնվել է դատարանի որոշմամբ:**

Փաստացի սույն սահմանադրաիրավական վեճը վերաբերում է երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելիս տարբերակված մոտեցում դրսևորելուն՝ կախված այն հանգամանքից, թե նոր ծնված երեխայի հորից սերված մյուս երեխաների և զավակների խնամքը նոր ծնված երեխայի հորը հանձնվել է **դատարանի որոշմամբ, ծնողների փոխադարձ համաձայնությամբ, թե՛ խնամատարության պայմանագրի հիման վրա:**

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ երեխայի ծնողները (նրանցից մեկը) փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կարող են երեխաների դատարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերի վերաբերյալ տարաձայնությունները լուծելու համար դիմել խնամակալության և հոգաբարձության մարմին կամ դատարան, ինչպես նաև՝ նույն հոդվածի 3-րդ մասի համապատասխան, ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը դատարանը որոշում է այդ մասին ծնողների միջև համաձայնության բացակայության պարագայում: Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները **կարող են ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները:**

Այսպիսով, գործող օրենսդրական կարգավորումներից բխում է, որ երեխայի խնամքը նրա ծնողներից մեկին կարող է հանձնվել կա՛մ ծնողների համաձայնությամբ, կա՛մ դատարանի որոշմամբ:

Հետևաբար, դատարանի որոշումը երեխայի խնամքը հորը հանձնված լինելու վերաբերյալ, ըստ էության, **լրացուցիչ փաստաթուղթ է**, որը պետք է ներկայացվի ըստ անհրաժեշտության, այն դեպքում, երբ բացակայում է ծնողների համաձայնությունը:

Մինչդեռ, քննության առարկա ենթաօրենսդրական ակտից հետևում է, որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվում նոր ծնված երեխայի հորից սերված այն երեխաները և զավակները, որոնց խնամքը հանձնվել է հորը՝ **միայն դատարանի որոշմամբ**, և հաշվի չի առնվում օրենքով նախատեսված խնամքի հանձման այնպիսի եղանակը, ինչպիսին է ծնողների փոխադարձ համաձայնությունը:

Արդյունքում ստացվում է, որ օրենսդիրն ամրագրել է երեխաների խնամքը ծնողներից մեկին կամ մյուսին կամ այլ անձի հանձնելու մեկից ավելի եղանակ, սակայն Կառավարությունը նպաստ ստանալու իրավունքի ծագումը կապում է այդ եղանակներից բացառապես մեկի՝ խնամքը հորը հանձնելու մասին դատարանի որոշման հետ: Նման կարգավորմամբ մի կողմից սահմանափակվում են ծնողի՝ օրենքով նախատեսված հնարավորությունները, մյուս կողմից տարբերակված մոտեցում է ցուցաբերում մոր և հոր նկատմամբ:

4.3. Խտրականության արգելքի ու կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքները երաշխավորվում են Սահմանադրությամբ (29 և 30-րդ հոդվածներ), ՀՀ ընտանեկան օրենսգրքով (1-ին հոդված), ինչպես նաև մի շարք միջազգային կարևորագույն փաստաթղթերով՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (7-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (26-րդ հոդված), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (14-րդ հոդված) և այդ կոնվենցիային կից 12-րդ Արձանագրությամբ: Սահմանադրության 35-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է նաև, որ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդն ունեն հավասար իրավունքներ:

Այդ իրավադրույթներից բխում է, որ պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակ ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն հավասարության և խտրականության արգելքի վերոհիշյալ սկզբունքները:

Սահմանադրական դատարանը խտրականության արգելքի սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելքի սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է դիտարկվել որպես խտրականություն: Խտրականության արգելքի սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (ՄԴՈ-881, 04.05.2010թ.):

Քննության առարկա դրույթի համատեքստում տարբերակված մոտեցումը ցուցաբերվել է նույն կատեգորիայի անձանց ծնողների նկատմամբ:

Որոշմամբ ամրագրված տարբերակված մոտեցումը զուրկ է օբյեկտիվ հիմքից, քանի որ օրենսդիրն, ըստ էության, նախատեսել է երեխայի խնամքի հարցը որոշելու մի քանի ընթացակարգ, և անձի կողմից այս կամ այն ընթացակարգի ընտրությունը չի կարող վերջինիս համար բացասական իրավական հետևանքներ առաջացնել երեխայի ծննդյան միանվագ նպաստը ստանալու իրավունքի իրացման տեսանկյունից:

Հիշյալ տարբերակված մոտեցումը չի կարող հետապնդել իրավաչափ նպատակ այն համատեքստում, որը միտված է բացառելու հնարավոր չարաշահումները: Այդպիսի չարաշահումները բացառելու համար օրենսդիրի կամ գործադիրի կողմից կարող են նախատեսվել այլ կառուցակարգեր, և այդ նպատակի իրացումը չի կարող կատարվել նույն կատեգորիայի անձանց նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու եղանակով:

4.4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային պրակտիկայից հետևում է, որ սոցիալական ապահովության ոլորտում քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը դատարանն անդրադարձել է խտրականությունը բացառելու առումով՝ կենսաթոշակների և նպաստների վճարման, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով ուղղակիորեն չնախատեսված այլ իրավունքների պաշտպանության համատեքստում:

ՄԻԵԴ-ը գտել է, որ սեփականության նկատմամբ հարգանքի իրավունքի մասին նորմը «չի սահմանափակում Կոնվենցիայի կողմերին սոցիալական ապահովության կամ կենսաթոշակային հա-

մակարգի ձևի ազատ ընտրության հարցում, ինչպես նաև նպաստների տեսակը և չափը սահմանելու հարցում: Այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ պետությունը նախատեսում է նպաստների կամ կենսաթոշակների վճարում, դա պարտավորություն է ստեղծում պետության համար և հանգեցնում է քաղաքացիների գույքային իրավունքների առաջացմանը, որոնք արդեն գտնվում են Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության ազդեցության ներքո» (**«Stec and Others v. The United Kingdom», 12/04/2006, app. no. 65731/01, 65900/01, §53**):

Չնայած նրան, որ հիշյալ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը սոցիալական ապահովության որևէ վճար ստանալու իրավունք չի նախատեսում, եթե պայմանավորվող պետությունն ունի գործող օրենսդրություն, որի համաձայն՝ նման վճարումն իրենից ենթադրում է բարեկեցությանն ուղղված նպաստ ստանալու իրավունք, անկախ այն փաստից՝ պայմանական է այն, թե՛ ոչ, այդ օրենսդրությունը պետք է որակվի գույքային իրավունք առաջացնող և այդ հոդվածի պահանջները բավարարող անձանց համար պետք է դիտարկվի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում (**«Andrejeva v. Latvia», 18/02/2009, app. no 55707/00, § 77, «Moskal v. Poland», 01/03/2010, app. no. 10373/05, § 38**):

Ծնողական կարգավիճակի հիմքով նպաստի վճարման մերժման մեկ այլ գործով ՄԻԵԴ-ը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «մայրական նպաստի վճարման մերժումը դիմումատուներին հանդիսանում է տարբերակված մոտեցում» և «որ այդ իրավունքից օգտվող անձանց լայն շրջանակը հաստատում էր, որ **նպաստը տրամադրվում է նորածին երեխաներին և նրանց խնամող ողջ ընտանիքին օժանդակելու համար, այլ ոչ միայն մոր՝ ծննդաբերության հետևանքով առաջացած բարդությունների նվազեցման նպատակով**: Հետևաբար, դիմումատուի կարգավիճակը կարելի էր համեմատել այն ընտանիքների և նրանց անդամների կարգավիճակի հետ, որոնք իրավունք ունեն օգտվել մայրական նպաստից: Այնուամենայնիվ, ո՛չ ազգային իշխանությունները և ո՛չ էլ կառավարությունը չէին ներկայացրել որևէ ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում կենսաբանական հայրերին նպաստի վճարման ընդհանուր կանոնից բացառելու վերաբերյալ, որը տրամադրվում էր այն անձանց, ովքեր խնամում են նորածին երեխաներին, այն դեպքում, երբ մայրերը, որդեգրող ծնողները և խնամակալները օգտվում էին այդ նպաստից» (**«Weller v. Hungary», 31/03/2009, app. no. 44399/05**):

4.5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ծնողներն իրենց երեխաների օրինական ներկայացուցիչներ են և ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

Սահմանադրությունն ամրագրում է, որ.

ա. երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին հոգ տանելը ծնողների միաժամանակ և՛ իրավունքն է, և՛ պարտականությունը (36-րդ հոդվածի 1-ին մաս),

բ. երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան (37-րդ հոդվածի 2-րդ մաս):

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, որին մասնակից է նաև Հայաստանի Հանրապետությունը, 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրում է.

«1. Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերի առավել ապահովմանը:

2. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ նկատի ունենալով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները»:

Սահմանադրությունը չի ամրագրում երեխաներին հատկացվող նպաստին անմիջապես վերաբերող դրույթ, սակայն այդ իրավունքը պետք է դիտարկել երեխաների իրավունքներին նվիրված Սահմանադրության 37-րդ հոդվածի համատեքստում:

«Երեխայի իրավունքների մասին» օրենքի 8-րդ հոդվածն ամրագրում է երեխայի անհրաժեշտ կենսապայմանների իրավունքը՝ «յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը

կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները: Ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն» (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի):

Նույն օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հիմնական պարտականություններից է: Հիշատակված օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է երեխայի նպաստ ստանալու իրավունքը, որի նշանակման և վճարման կարգը սահմանում է Կառավարությունը:

Երեխային հասանելիք գումարը՝ միանվագ նպաստի տեսքով տրամադրվում է վերջինիս ծնողներին կամ ծնողներից մեկին կամ օրինական ներկայացուցչին և նպատակաուղղված է երեխաների խնամքի, դաստիարակության և կրթության հետ կապված հարցերը լուծելու համար:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում անդրադարձել է Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների տրամաբանությանը և վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ ընտանեկան իրավահարաբերություններում «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և հանդիսանում է ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք (ՄԴՈ-919, 05.10.2010թ.):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ երեխայի լավագույն շահերի առավել ապահովման նպատակով, մինչև վիճարկվող դրույթը սույն որոշման պահանջներին համապատասխանեցնելը, իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի այնպիսի մոտեցմամբ, որ որևէ էական տարբերություն չպետք է լինի այն հարցում, թե նոր ծնված երեխայի հորից սերված երեխաների խնամքը հոր կողմից իրականացվել է դատարանի որոշմամբ, թե երեխայի մոր հետ փոխադարձ համաձայնությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 275-Ն որոշման N1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին, 35 և 37-րդ հոդվածների 2-րդ մասերին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

15 հունվարի 2019 թվականի
ՍԴՈ - 1438



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 41-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՎ «ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 49-ՐԴ ԳԼԽՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՈՐՄԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

22 հունվարի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի «Դատարանի լիազորությունները» վերտառությամբ 41-րդ հոդվածը սահմանում է

«1. Դատարանը լիազորված է իր նիստերում քննել և լուծել ստացված գործերը և նյութերը: Արդարադատություն իրականացնելուց հրաժարվելն անթույլատրելի է:

2. Դատարանի լիազորություններն են, մասնավորապես՝

1) որոշումներ կայացնել կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին, օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները:

2) գործը դատական քննության նախապատրաստելու հետ կապված որոշումների ընդունումը:

3) քրեական գործերի քննությունն առաջին ատյանի, վերաքննության և վճարեկության կարգով:

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմելը:

- 5) դատավճիռն ի կատար ածելու ուղարկելը.
- 6) դատավճիռն ի կատար ածելիս ծագող հարցեր լուծելը.
- 7) դատվածությունը հանելու հետ կապված հարցեր լուծելը.
- 8) օրենքով նախատեսված դեպքերում այլ հարցեր լուծելը:

3. Գործը քննող դատավորի որոշմամբ կարող է անցկացվել արտագնա դատական նիստ, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից»:

Օրենսգրքի ընդունումից հետո հողվածը փոփոխվել, լրացվել և խմբագրվել է 25.05.06 ՀՕ-91-Ն, 21.02.07 ՀՕ-93-Ն և 28.11.07 ՀՕ-270-Ն օրենքներով:

Օրենսգրքի «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ 49-րդ գլխում ընդգրկված են հետևյալ վերնագրերով հողվածները

Հողված 427. Դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը և դրանց ի կատար ածումը,

Հողված 428. Դատարանի որոշումը կատարման հանձնելու կարգադրությունը,

Հողված 429. Դատական որոշումը ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքների ապահովումը,

Հողված 430. Դատական որոշման վերաբերյալ կասկածների և անհստակությունների լուծումը,

Հողված 431. Դատական որոշման կատարման հետաձգումը,

Հողված 431.1. Տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելը,

Հողված 432. Պատիժը կրելուց ազատելը հիվանդության պատճառով,

Հողված 433. Այն դատապարտյալին պատժից ազատելը, որի նկատմամբ դատական որոշման կատարումը հետաձգված է, ինչպես նաև դատական որոշման կատարման հետաձգումը վերացնելը,

Հողված 434. Պատժից պայմանական վաղակետ ազատելը և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելը,

Հողված 434¹. Դատապարտյալի հետախուզումը,

Հողված 436. Բուժական հիմնարկում գտնվելու ժամանակի հաշվանցումը պատժի ժամկետի մեջ,

Հոդված 437. Դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերը լուծող դատարանները,

Հոդված 438. Դատական որոշման կատարման հետ կապված հարցերի լուծման կարգը:

Գործի քննության առիթը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 22-ի ԱԸԴ/0011/15/18 գործով «ՀՀ սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի և այլ իրավական ակտերի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Գ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի դատական պաշտպանության իրավունքը տարածվում է նաև օրինական ուժի մեջ մտած դատավճիռների կատարման փուլում ծագող հարցերի վրա, ինչը նշանակում է, որ դատավճիռների կատարման փուլում ևս անձն իրավունք ունի դիմելու դատարան իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու կամ կանխելու հարցերով, իսկ օրենսդիրն իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան պետք է հստակ սահմանի այդ բողոքները քննելու իրավասու դատարանը (վարչական, թե ընդհանուր իրավասության) և դատավարական անհրաժեշտ ընթացակարգերը և կառուցակարգերը, որպեսզի անձի իրավունքը լինի իրական, այլ ոչ թե պատրանքային:

Ըստ դիմողի՝ տարբեր իրավական ակտերի վերլուծությունից պարզ չի դառնում, թե որ դատարանը պետք է քննության առարկա դարձնի ՔԿՀ պետի որոշումների և գործողությունների դեմ բողոքները՝ վարչական, թե ընդհանուր իրավասության: Բացի դրանից, եթե նման գործերը պետք է քննեն ընդհանուր իրավասության դատարանները, ապա դիմողի կարծիքով հստակ չէ, թե ինչ ժամկետներում, ինչ կարգով, ինչ լիազորություն ունի կամ պետք է ունենա դատարանը քննարկվող որոշումների և գործողությունների դեմ բողոքների վերաբերյալ որոշում կայացնելիս:

Դիմողը գտնում է, որ քրեադատավարական օրենսդրությունը դատական ակտերի կատարման փուլը կանոնակարգող Օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերով կարգավորում է բացառապես դատական իշխանության գործունեությունն այն սահմաններում (այն լիազորությունների մասով), որոնք վերաբերում են բացառապես Օրենսգրքի 360-րդ հոդվածին համապատասխան դատավճռում լուծված հարցերին: Դիմողը նշում է, որ գործող քրեական դատավարության օրենսդրությամբ պատժի կատարման հետ կապված բացառապես այն հարցերի առնչությամբ կարող է քրեադատավարական կարգով հարց բարձրացվել և լուծվել, եթե դրա նյութաիրավական հիմքը քրեական օրենսդրությունն է: Դրանից ելնելով դիմողը եզրահանգում է, որ գործող քրեադատավարական օրենսդրությունը չի կարգավորում այնպիսի իրավահարաբերություններ, որոնք թեև առաջանում են մեղադրական դատավճռի կատարման հետ կապված, սակայն չեն վերաբերում այդ դատավճռում լուծված հարցերին, օրինակ, ՔԿՀ պետի կողմից դատապարտյալին տույժի ենթարկելու իրավաչափությունը ստուգելը, քանի որ դրա նյութաիրավական հիմքը քրեական օրենսդրությունը չէ, այլ քրեադատարողական օրենսդրությունն է:

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1215 որոշման դրույթները դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 49-րդ գլխի կանոնները և դրանցից բխող անհրաժեշտ դատավարական գործողությունների կատարման իրավակարգավորումները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին՝ վտանգի տակ դնելով դատապարտյալի իրավունքներն ու օրինական շահերը:

Եզրափակելով, դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 41-րդ հոդվածը և 49-րդ գլխի դրույթներն այնքանով, որքանով չեն նախատեսում դատապարտյալի կողմից ՔԿՀ պետի որոշումների և գործողությունների դեմ բողոք ներկայացնելու ժամկետները, դատավարական կարգը, հիմքերը, պայմանները, այդ բողոքների քննության դատավարական կարգը, վարույթին մասնակցելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը, դատարանի լիազորությունների շրջանակը և դրա հետ կապված այլ հարցեր, հակասում են Սահմանադրության 61, 63, 75 և 79-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը դատավարական, ինչպես նաև քրեադատարողական օրենսդրության համապարփակ վերլուծության արդյունքում գտնում է, որ օրենսդիրը ՀՀ քրեադատարողական օրենսգրքի

7, 59, 60, 94 և 97-րդ հոդվածներով սահմանել է, որ պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն օրենքով իրենց վերապահված գործողություններ, որոնցում օրենսդրի կողմից հստակ ամրագրվել է, որ պաշտոնատար անձանց գործողությունների կատարումը կարող է բողոքարկվել դատարան կամ օրենքով նախատեսված այլ մարմին:

Մյուս կողմից՝ պատասխանողը նշում է, որ պատիժը կրելու սահմանված կարգը խախտելու համար ազատագրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել նկատողություն, խիստ նկատողություն, պատժախուց տեղափոխելը մինչև տասնհինգ օր, իսկ անչափահաս դատապարտյալին՝ մինչև տասն օր ժամկետով, որտեղ սահմանված տույժի միջոցները կիրառվում են բացառապես ներքին կանոնակարգով նախատեսված դեպքերում և կարգով:

Պատասխանողը նշում է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ գործերի առարկայական ընդդատությանն առնչվող 10-րդ հոդվածով հստակ ամրագրված է, որ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա չեն պատժի կատարման հետ կապված գործերը, մինչդեռ, ՀՀ դատական օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քրեական գործերը, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված օրենքով նախատեսված գործերը քննում է միայն քրեական մասնագիտացման դատավորը, բացառությամբ առանձին տեսակների:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծության արդյունքում պատասխանողը գտնում է, որ վերջինս, համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվելով վերոգրյալ իրավանորմերի հետ, սահմանել է դատարանի լիազորությունների շրջանակը և ամրագրել դատարանի մի շարք լիազորությունների հետ մեկտեղ դատարանի կողմից օրենքով նախատեսված դեպքերում այլ հարցերի լուծման լիազորությունը նույնպես (Օրենսգրքի 41-րդ հոդված)՝ այդպիսով ապահովելով պատժի կատարման հետ կապված օրենքով նախատեսված գործերով դատարանի մատչելիության իրավունքի իրացման իրավական երաշխիքը:

Բացի դրանից, պատասխանողը շեշտում է, որ համապատասխան ոլորտում օրենսդիրը հաշվի է առել մի շարք միջազգային ստանդարտներ և հանձնարարականներ:

Ամփոփելով վերոգրյալը՝ պատասխանողը նշում է, որ ընդհանուր առմամբ սահմանված են պատժի կատարման հետ կապված գործերի բողոքարկմամբ պայմանավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովման և արդար դատաքննության իրավունքների իրացման հայեցակարգային հարցերը, և գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերը համապատասխանում են Սահմանադրության պահանջներին:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Հաշվի առնելով այն, որ դիմողը վիճարկվող դրույթների համատեքստում բարձրացնում է, ըստ էության, երկու հարց՝ պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող վեճերը լուծող պատշաճ դատարանի որոշման և համապատասխան վեճերի լուծման դատավարական կարգի բացակայության հետ կապված, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը՝

- արդյո՞ք Օրենսգրքի 41-րդ հոդվածի՝ դատարանի լիազորությունները սահմանող դրույթները համապատասխանում են Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքին՝ միաժամանակ ապահովելով պատիժը կրող դատապարտյալի՝ Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրականացման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում միաժամանակ նշել, որ դիմողի կողմից վիճարկվող Օրենսգրքի 49-րդ գլխում ներառված նորմերն իր վարույթում գտնվող գործին չեն առնչվում: Այսպես, ԱԲԴ/0011/15/18 գործով բողոքաբերը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանից բեկանել, փոփոխել և վերացնել իրեն տույժի ենթարկած ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի որոշումները վերացնելու պահանջը մերժած Արմավիրի մարզի առաջին ատյանի

դատարանի 10.07.2018 թվականի որոշումը: Օրենսգրքի 49-րդ գլխի նորմերը, նախատեսելով դատական որոշումների կատարման կարգը, անմիջականորեն չեն առնչվում քրեակատարողական հիմնարկների պաշտոնատար անձանց գործողությունները (անգործությունը) դատապարտյալի կողմից բողոքարկման հետ կապված հարցերին: Ուստի, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումը մասամբ չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, և սույն գործի վարույթը մասնակի՝ «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի մասով ենթակա է կարճման «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի հիմքերով:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ յուրաքանչյուր դատապարտյալ, ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաև անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Այս իրավունքները վերաբերելի են նաև դատապարտյալի կողմից պատիժը կրելու ընթացքում իր իրավունքների և շահերի դատական պաշտպանությանը: Ավելին, ընդունելով այն հանգամանքը, որ դատապարտյալները գտնվում են ոչ նպաստավոր վիճակում, նրանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, դրանց երաշխավորման անհրաժեշտ միջոցների նախատեսումը պետք է լինեն օրենսդրի հատուկ ուշադրության կիզակետում: Այդ առումով հարկ է նշել նաև, որ մի շարք միջազգային ակտերով նախատեսված են ազատությունից զրկված անձանց դատական պաշտպանության նվազագույն երաշխիքներ:

Մասնավորապես, ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված՝ «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» 36-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա բողոքներով և պահանջներով դիմելու քրեակատարողական մարմիններին, դատական իշխանություններին կամ այլ իրավասու մարմիններին:

Քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածը նախատեսում է դատապարտյալի հիմնական իրավունքների համակարգը, որի կարևորագույն բաղկացուցիչն է «իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմ, նրանց վերադաս մարմիններ, **դատարան**, դատախազություն, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական միավորումներ և կուսակցություններ, զանգվածային լրատվության միջոցներ, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ կամ կազմակերպություններ»: Բացի դրանից, Քրեակատարողական օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքի համաձայն՝ պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն օրենքով իրենց վերապահված գործողություններ, ընդ որում՝ «Պաշտոնատար անձանց գործողությունների կատարումը կարող է բողոքարկվել դատարան կամ օրենքով նախատեսված այլ մարմին»:

Հստակեցնելով դատապարտյալի դատական պաշտպանության այս հիմնարար իրավունքի իրականացման հնարավորությունները՝ Քրեակատարողական օրենսգրքի 18-րդ հոդվածը նշում է, որ. «Օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանը քննարկում է դատապարտյալի բողոքները՝ պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ»:

Այսպիսով, Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը միջազգային իրավունքի պահանջներին համահունչ ամրագրում է դատապարտյալի՝ պատժի կրման ընթացքում դատարան դիմելու իրավունքը:

4.2. Դիմողի կողմից բարձրացված հարցադրումների շրջանակներում Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատապարտյալների կողմից քրեակատարողական հիմնարկների պաշտոնատար անձանց գործողությունների և անգործության բողոքարկման հետ կապված գործերի ենթակայության և ընդդատության հարցերին՝ հաշվի առնելով նաև այն հանգաման-

քը, որ պատշաճ դատարանի որոշման հարցը դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովման կարևորագույն երաշխիքներինց է:

Քրեակատարողական օրենսդրությունը, թեև ամրագրում է դատապարտյալի իր իրավունքների խախտումների մասով դատարան բողոք ներկայացնելու իրավունքը, սակայն չի հստակեցնում վարչակա ն, թե ընդհանուր իրավասության դատարան կարող է դիմել: Ըստ այդմ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել նաև այլ իրավական ակտերի կարգավորումները:

«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի», իսկ նույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քրեական գործերը, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված **օրենքով նախատեսված** գործերը քննում է միայն քրեական մասնագիտացման դատավորը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի»: Բացառությունների շարքին են դասվում այն դեպքերը, երբ Բարձրագույն դատական խորհուրդը քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից ընտրում է դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, քննում են առանձին տեսակի (անչափահասների, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված և անօրինական պահվող երեխաների վերադարձի, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների և այլն) գործեր:

4.3. Օրենսգրքի՝ «Առաջին ատյանի դատարաններին ընդդատյա գործերը» վերտառությամբ 44-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը քննում է բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ:

Համադրելով վերոգրյալ դրույթը Օրենսգրքի 41-րդ հոդվածում ոչ սպառիչ թվարկված դատարանի լիազորությունների հետ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավճիռն ի կատար ածելու ուղարկելը, ինչպես նաև դատավճիռն ի կատար ածելիս ծագող հարցեր լուծելն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իրականացնում է քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործերի (նյութերի) քննության շրջանակներում: Իսկ քրեադատավարական օրենսդրությամբ դատարանի այդ լիազորությունների իրականացման կարգը սահմանված է Օրենսգրքի «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ 49-րդ գլխում, որին համապատասխան՝ դատարանի կողմից լուծման ենթակա հարցերը վերաբերում են, մասնավորապես, դատարանի որոշումը կատարման հանձնելու կարգադրությանը, դատական որոշումը ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքների ապահովմանը՝ կապված դատական որոշման կատարման հետ, դատական որոշման վերաբերյալ կասկածների և անհատակությունների լուծմանը, դատական որոշման կատարման հետաձգմանը, տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելուն, պատիժը կրելուց ազատելուն հիվանդության պատճառով, այն դատապարտյալին պատժից ազատելուն, որի նկատմամբ դատական որոշման կատարումը հետաձգված է, ինչպես նաև դատական որոշման կատարման հետաձգումը վերացնելուն, պատժից պայմանական վաղալետ ազատելուն և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելուն, դատապարտյալի հետախուզմանը, բուժական հիմնարկում գտնվելու ժամանակի հաշվանցմանը պատժի ժամկետի մեջ:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետին, համաձայն որի՝ դատարանի լիազորությունների շարքին է դասվում նաև «օրենքով նախատեսված դեպքերում այլ հարցեր լուծելը», ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեադատավարական օրենսդրությամբ, այդ թվում՝ այլ օրենքով, այս կամ այն հարցի, գործի կամ նյութի քննությունը կհամարվի դատարանի ընդդատությանը վերապահված, եթե այդ օրենքով այն ուղղակիորեն նախատեսված կլինի որպես քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանի լիազորություն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, վերոհիշյալ կանոնակարգումների համաձայն, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են պատժի կատարման հետ կապված միայն օրենքով նախատեսված գործերը: Այդ պատ-

ճառով սահմանադրական օրենքը քրեական մասնագիտացման դատավորին ընդդատյա՝ պատժի կատարման հետ կապված գործերը որոշակիացնելու համար ընտրել է օրենքով հատուկ նախատեսված լինելու կանխատեսելի չափանիշը:

Ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում այդպիսին են Օրենսգրքի 49-րդ գլխով սահմանված հարցերը կամ գործերը:

4.4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործերի առարկայական ընդդատությունը» վերտառությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև **պատժի կատարման հետ կապված** գործերը: Այս նորմի բովանդակությունից հետևում է, որ պատժի կատարման հետ կապված ոչ մի գործ վարչական դատարանի կողմից քննվել չի կարող: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված դրույթը չի սահմանում որևէ չափանիշ, որը թույլ կտար հստակեցնել, թե ո՞ր դատարանին են ընդդատյա այդ գործերը, ինչը կարող է հանգեցնել համակարգային անորոշության:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, ինչպես նաև Վարչական դատավարության օրենսգրքում ընդդատության հարցերը սահմանելիս օրենսդիրը կիրառել է «պատժի կատարման հետ կապված» հասկացությունը, մինչդեռ Օրենսգրքում խոսվում է դատական որոշումների (այդ թվում դատավճռի) կատարման հետ կապված հարցերի քննության մասին, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այդ հասկացությունների բովանդակությանը:

Օրենսգրքի 429-րդ հոդվածի համաձայն՝ դատական որոշումն ի կատար ածելու փուլն ընդգրկում է դատական որոշումն ի կատար ածելու հանձնելը և դատական որոշումը կատարելը: Այսինքն՝ դատական ակտի կատարման հետ կապված հարաբերություններն Օրենսգրքով սպառիչ ձևով նախատեսված քրեադատավարական հարաբերություններ են: Միաժամանակ, դատական ակտերի կատարումը, որպես կանոն, ենթադրում է այդ ակտերով նախատեսված պատիժների կատարում:

Մյուս կողմից՝ պատիժների կրման ընթացքում կարող են ի հայտ գալ բազմաթիվ իրավահարաբերություններ, որոնք իրենց բնույթով քրեակատարողական հարաբերություններ են, մասնավորապես, Քրեակատարողական օրենսգրքով նախատեսված՝ դատապարտյալին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, դատապարտյալի կողմից քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողություններն ու անգործությունը բողոքարկելը և այլն:

Բացի դրանից, պատժի կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն Օրենսգրքով և Քրեակատարողական օրենսգրքով, այլև իրավական այլ ակտերով: Մասնավորապես՝ «Պրոբացիայի մասին» օրենքի 45-րդ հոդվածը պրոբացիայի շահառուի համար, ի թիվս այլնի, նախատեսում է պրոբացիայի ծառայության (որն օրենքով սահմանված կարգով կատարում է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժները) գործողությունները կամ անգործությունը դատարան բողոքարկելու իրավունք: Բացի դրանից, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի համաձայն՝ հարկադիր կատարման ծառայության կողմից կատարվում են նաև քրեական գործերով դատավճիռները՝ գույքի բռնագրավման մասով, ինչը ևս պատժի կատարում է: Նույն օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ կատարողական վարույթի ընթացքում կողմերն իրավունք ունեն բողոքարկել հարկադիր կատարողի գործողությունները:

Այդ առումով, կիրառելով «պատիժների կատարման հետ կապված գործեր» հասկացությունը՝ օրենսդիրը մի շարք դեպքերում նկատի չի ունեցել պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող բոլոր գործերը: Դա է վկայում նաև այն հանգամանքը, որ Քրեակատարողական օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ առանց հատուկ թույլտվության պատիժը կատարելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն դատավորները, որոնք օրենքով սահմանված կարգով քննում են **պատիժը կատարելու հետ կապված հարցերը**, դատապարտյալի իրավունքների և ազատությունների խախտման, ինչպես նաև **պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ ներկայացված բողոքները**: Այսինքն՝ որոշակի հարցերին վերաբերող բողոքները հստակ տարանջատված են պատիժը կատարելու հետ կապված հարցերից և դուրս են այդ հասկացության բովանդակությունից:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկով անդրադարձել է քննարկվող հարցին և դիրքորոշում արտահայտել առ այն, որ «պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի իրավասությանը վերապահված գործողություններն ու որոշումները հանդիսանում են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու քրեաիրավական ինստիտուտի գործադրման համար անհրաժեշտ տարրեր, հետևաբար դրանք նույնպես բխում են քրեաիրավական հարաբերություններից, և դրանց դեմ բերված բողոքները ենթակա են քննության քրեաիրավական նորմերի կիրառմամբ: Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ այս դեպքում մասնավոր անձը (դատապարտյալը) վիճարկում է վարչական մարմնի՝ իր շահերին առնչվող որոշման կամ գործողության օրինականությունն ու հիմնավորվածությունը, այնուհանդերձ, տվյալ վեճը չի կարող համարվել հանրային իրավահարաբերություններից բխող այնպիսի վեճ, որի լուծումն ընդդատյա է վարչական դատարանին» (2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԾԴ2/0007/15/12 որոշում):

Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ դիրքորոշումը ձևավորվել է «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում առկա կարգավորման բացակայության պայմաններում և օբյեկտիվորեն չէր կարող արտացոլել քննարկվող խնդրին վերաբերող իրավական բոլոր նորմերի համալիր վերլուծության արդյունքները:

Ելնելով վերոգրյալից Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի հետ համադրության մեջ Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է ընկալել այն իմաստով, որ **վարչական դատարանին ընդդատյա չեն հանրային հարաբերություններից բխող այն գործերը, որոնց քննության իրավասությունն օրենքով հատուկ վերապահված է այլ դատարանի:**

Այս համատեքստում հարկ է նաև ընդգծել, որ համանման մոտեցմամբ վարչական դատարանը քննում է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 13-րդ հոդվածով սահմանված մի շարք դատապարտյալի իրավունքներից գրեթե չտարբերվող իրավունքների ենթադրյալ խախտումների հետ կապված գործերը:

4.5. Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշմամբ անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ նշել է. «իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի»:

Մի շարք այլ որոշումների (ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) համատեքստում, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, Սահմանադրական դատարանը գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Այս առումով վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությամբ նախատեսված որոշակիության սկզբունքին, և ընդհանուր իրավասության դատարանի՝ Օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները հստակ են և կանխատեսելի:

4.6. Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները սահմանադրական այն հիմնարար իրավունքներից են, որոնց իրացմամբ երաշխավորվում են սահմանադրական մի շարք այլ իրավունքների հարգումն ու պաշտպանությունը, ուստի «անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» (ՍԴՈ-1249):

Հարկ է նշել, որ, ինչպես դատական պաշտպանության, այնպես էլ մյուս հիմնարար իրավունքների պատշաճ իրացման նկատառումներից ելնելով, Սահմանադրությամբ նախատեսվել է նաև հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ամրագրման պահանջ նախատեսող դրույթ, համաձայն որի հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հիմնական իրավունքի կենսագործումն առավել իրական և արդյունավետ է դառնում բոլոր այն դեպքերում, երբ օրենսդրությամբ առկա են այդ իրավունքի իրացման համապատասխան կառուցակարգեր և ընթացակարգեր, դրանք հստակ են և որոշակի:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որ դատարանի հստակեցման պարագայում, հարց է առաջանում, թե ինչ դատավարական կարգով պետք է առաջնորդվել դատապարտյալի կողմից ՔԿՀ պետի որոշումների դատական կարգով բողոքարկումները քննելիս, Սահմանադրական դատարանը փաստում է, որ վերոհիշյալ հարցերի կարգավորման իրավասությունը վերապահված է օրենսդրին, որի կողմից առաջարկվող լուծումները կարող են առնչություն չունենալ սույն գործով վիճարկվող դրույթների հետ: Մասնավորապես, պատժի կրման ընթացքում դատապարտյալի իրավունքների դատական պաշտպանության վերաբերյալ իրավակարգավորումները կարող են նախատեսվել ինչպես վարչական դատավարության, այնպես էլ քրեական դատավարության կամ այլ օրենսդրության շրջանակներում:

Սահմանադրական դատարանը նաև նշում է, որ **մինչև Ազգային ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին:**

Միաժամանակ, Օրենսգրքի 41-րդ հոդվածում՝ դատապարտյալի բողոքները քննելու դատարանի լիազորության բացակայությունը չի կարող փոխհատուցվել Օրենսգրքի 49-րդ գլխով նախատեսված ընդհանուր ընթացակարգերի կիրառմամբ, քանի որ դրանցով չեն լուծվում մի շարք առանցքային հարցեր, մասնավորապես՝ տարածքային ընդդատության, բողոքի քննության ժամկետների, կարգի առանձնահատկությունների, ապացուցման բեռի բաշխման, ինչպես նաև կայացվելիք դատական ակտի բովանդակության և դրա բողոքարկման հետ կապված խնդիրները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60, 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը, մասնակի՝ «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի մասով, կարճել:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ հոդվածի 8-րդ կետում նշված «օրենքով նախատեսված դեպքերում այլ հարցեր լուծելը» դատարանի այն լիազորություններն են, որոնք քրեադատավարական օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված են որպես քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանի լիազորություններ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

22 հունվարի 2019 թվականի
ՍԴՈ-1439



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հունվարի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի փետրվարի 14-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի փետրվարի 14-ին Երևանում:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները

- Հայաստանի Հանրապետության տարածքում ճապոնական կողմի ներդրողներին և նրանց ներդրումներին տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը նմանատիպ հանգամանքներում տրամադրում է իր սեփական ներդրողներին և նրանց ներդրումներին՝ ներդրումային գործունեության մասով,

- Հայաստանի Հանրապետության տարածքում ճապոնական կողմի ներդրողներին և նրանց ներդրումներին տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը նմանատիպ հանգամանքներում տրամադրում է պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողներին և նրանց ներդրումներին՝ ներդրումային գործունեության մասով,

- Հայաստանի Հանրապետության տարածքում ճապոնական կողմի ներդրողների ներդրումներին տրամադրել օտարերկրացիներին տրամադրվող ռեժիմի նվազագույն չափորոշիչ, միջազգային իրավունքին համապատասխան, ներառյալ արդար և հավասար ռեժիմ, ինչպես նաև լիարժեք պաշտպանություն ու անվտանգություն,

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ճապոնական կողմի ներդրողներին տրամադրվի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը նմանատիպ հանգամանքներում տրամադրում է իր սեփական ներդրողներին կամ պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողներին բոլոր ստյանների մակարդակով նման ներդրողների իրավունքների և իրացման, և՛ պաշտպանության նպատակով դատարանների և վարչական մարմինների հասանելիության մասով,

- Հայաստանի Հանրապետության տարածքում ճապոնական կողմի կամ պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողի ներդրումային գործունեության հետ կապված չսահմանել կամ չկիրառել Համաձայնագրով (6-րդ հոդված) նշված պահաջներից որևէ մեկը կամ չպարտադրել ստանձնել որևէ պարտավորություն կամ հանձնառություն,

- ապահովել, որ անհապաղ հրապարակվեն կամ որևէ այլ կերպով հանրությանը հասանելի դառնան Հայաստանի Հանրապետության օրենքները, կանոնակարգերը, վարչական ընթացակարգերը, վարչական գործերով որոշումներն ու դատարանի ընդհանուր կիրառության որոշումները, ինչպես նաև միջազգային համաձայնագրերը, որոնք առնչվում կամ ազդում են Համաձայնագրի կիրառման և գործողության վրա,

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության օրենքներին և կանոնակարգերին համապատասխան միջոցառումներ և ջանքեր գործադրվեն Համաձայնագրով կարգավորվող հարցերի շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ,

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության օրենքներին և կանոնակարգերին համապատասխան բարյացակամորեն քննարկվեն ճապոնական կողմի քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձի և ճապոնական կողմի ձեռնարկությունում աշխատող անձնակազմի և գործադիր ղեկավարի, կառավարչի և տնօրենների խորհրդի անդամի մուտքի, կացության և բնակության համար դիմումները, որոնք ցանկանում են մուտք գործել Հայաստանի Հանրապետության տարածք և ներդրումային գործունեություն իրականացնելու նպատակով մնալ այնտեղ,

- չօտարել կամ չազգայնացնել ճապոնական կողմի ներդրողի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ներդրումները կամ չձեռնարկել ցանկացած միջոց, որը համարժեք է օտարմանը կամ ազգայնացմանը, բացառությամբ Համաձայնագրով (12-րդ հոդված) նախատեսված դեպքերի և կարգով,

- ապահովել, որ ճապոնական կողմի ներդրողներին, որոնք իրենց ներդրումների մասով կրել են կորուստ կամ վնաս Հայաստանի Հանրապետության տարածքում զինված ընդհարման կամ արտակարգ իրավիճակի հետևանքով, վերականգնման, հատուցման, փոխհատուցման կամ որևէ այլ լուծման մասով տրամադրվի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը տրամադրում է իր սեփական ներդրողներին կամ պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողներին՝ կախված, թե որն է առավել բարենպաստ ճապոնական կողմի ներդրողների համար, միաժամանակ ապահովելով, որ ցանկացած վճարում լինի արդյունավետորեն իրացվելի, ազատ փոխանցելի և ազատ փոխարկելի՝ ազատ կիրառելի արժույթների շուկայական փոխարժեքով,

- երաշխավորել, որ ճապոնական կողմի ներդրողի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրման հետ կապված բոլոր փոխանցումներն ազատորեն կատարվեն դեպի Հայաստանի Հանրապետության տարածք և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առանց հետաձգման,

- տրամադրել և ապահովել մտավոր սեփականության իրավունքների համապատասխան և արդյունավետ պաշտպանություն, խթանել արդյունավետությունն ու թափանցիկությունը մտավոր սեփականության պաշտպանության համակարգում,

- ապահովել, որ հայցվորի և պատասխանողի միջև ներդրումային վեճերի առկայության դեպքում նախ վեճը լուծվի խորհրդակցության և բանակցության միջոցով, ինչը կարող է ներառել ոչ պարտադիր բնույթ ունեցող, երրորդ կողմի մասնակցությամբ ընթացակարգեր:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև տնտեսական հարաբերությունների ամրապնդմանը, ինչպես նաև ներդրումների համար կայուն, բարենպաստ, թափանցիկ պայմանների ստեղծմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2018 թվականի փետրվարի 14-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

22 հունվարի 2019 թվականի
ՍԴՈ-1440



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՕՁՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՄՈՆԻՏԵԱԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻԳԱԼԻԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հունվարի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Ի. Ղափլանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հոկտեմբերի 15-ին ստորագրված՝ «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության Կիզալիի փոփոխու-

թյուն» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2018 թվականի նոյեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության Կիզալիի փոփոխություն» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի հոկտեմբերի 15-ին Կիզալիում՝ օգոնաքայքայիչ նյութերին այլընտրանք հանդիսացող հիդրոֆտորածխածինների (այսուհետ՝ ՀՖԱ) գործածման փուլային կրճատում իրականացնելու նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որ 12 ամսվա ընթացքում, որն սկսվում է 2019 թվականի հունվարի 1-ին, և դրան հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածում F հավելվածով կարգավորվող նյութերի՝ իր սպառման հաշվարկային մակարդակը՝ արտահայտված CO2 համարժեքով, չգերազանցի այն տոկոսը, որը սահմանված է 2J հոդվածի 1-ին կետի «a»-«e» ենթակետերում նշված համապատասխան տարիների համար, F հավելվածով կարգավորվող նյութերի՝ իր սպառման հաշվարկային մակարդակների տարեկան միջինը 2011, 2012 և 2013 թվականների համար՝ գումարած C հավելվածի I Խմբով կարգավորվող նյութերի՝ 2F հոդվածի 1-ին կետով սահմանված՝ իր սպառման հաշվարկային մակարդակի 15%-ը՝ արտահայտված CO2 համարժեքով. a) 2019-2023թթ.՝ 90%, b) 2024-2028թթ.՝ 60%, c) 2029-2033թթ.՝ 30%, d) 2034-2035թթ.՝ 20%, e) 2036թ. և դրանից հետո՝ 15% (Համաձայնագրի «Փոփոխություն» վերտառությամբ I հոդված, Հոդվ. 2J, կետ 1.),

- ապահովել, որ F հավելվածով կարգավորվող նյութեր արտադրելու դեպքում 12 ամսվա ընթացքում, որն սկսվում է 2019 թվականի հունվարի 1-ին, և դրան հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածում F հավելվածով կարգավորվող նյութերի՝ իր արտադրության հաշվարկային մակարդակը արտահայտված CO2 համարժեքով, չգերազանցի այն տոկոսը, որը սահմանված է ստորև բերված «a»-«e» ենթակետերում նշված համապատասխան տարիների համար, F հավելվածով կարգավորվող նյութերի՝ իր արտադրության հաշվարկային մակարդակների տարեկան միջինը 2011, 2012 և 2013 թվականների համար գումարած C հավելվածի I Խմբի կարգավորվող նյութերի՝ 2F հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ իր արտադրության հաշվարկային մակարդակի 15%-ը արտահայտված CO2 համարժեքով. a) 2019-2023թթ.՝ 90%, b) 2024-2028թթ.՝ 60%, c) 2029-2033թթ.՝ 30%, d) 2034-2035թթ.՝ 20%, e) 2036թ. և դրանից հետո՝ 15% (Համաձայնագրի «Փոփոխություն» վերտառությամբ I հոդված, Հոդվ. 2J, կետ 3.),

- ապահովել, որ C հավելվածի I Խմբի կամ F հավելվածով նախատեսված նյութեր արտադրելու դեպքում 12 ամսվա ընթացքում, որն սկսվում է 2020 թվականի հունվարի 1-ին, և դրան հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածում F հավելվածի II Խմբի նյութերի՝ իր արտանետումները, որոնք առաջացել են յուրաքանչյուր արտադրության օբյեկտում, որն արտադրում է C հավելվածի I Խմբի կամ F հավելվածի նյութեր, հնարավորինս ոչնչացվեն օգտագործելով նույն 12-ամսյա ժամանակահատվածում Կողմերի հաստատած տեխնոլոգիաները (Համաձայնագրի «Փոփոխություն» վերտառությամբ I հոդված, Հոդվ. 2J, կետ 6.),

- ապահովել, որ C հավելվածի I Խմբի կամ F հավելվածի նյութեր արտադրող գործարաններում առաջացած՝ F հավելվածի II Խմբի նյութերի ցանկացած ոչնչացում կատարվի բացառապես Կողմերի հաստատած տեխնոլոգիաներով (Համաձայնագրի «Փոփոխություն» վերտառությամբ I հոդված, Հոդվ. 2J, կետ 7.),

- համաձայնել, որ Արձանագրության 4-րդ հոդվածի 1 sept կետի ուժի մեջ մտնելուց հետո արգելվի F հավելվածով կարգավորվող նյութերի ներմուծումը Արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետությունից (Համաձայնագրի «Փոփոխություն» վերտառությամբ I հոդված, Հոդվ. 4, կետ 1 sept),

- համաձայնել, որ Արձանագրության 4-րդ հոդվածի 2 sept կետի ուժի մեջ մտնելուց հետո արգելվի F հավելվածով կարգավորվող նյութերի արտահանումը Արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետություն (Համաձայնագրի «Փոփոխություն» վերտառությամբ I հոդված, Հոդվ. 4, կետ 2 sept),

- ապահովել, որ 4B հոդվածի 2 bis կետի ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում ներդրվի և կիրառվի F հավելվածով կարգավորվող նոր, օգտագործված, վերամշակված և վերականգնված նյութերի ներմուծման և արտահանման լիցենզավորման համակարգ (Համաձայնագրի «Փոփոխություն» վերտառությամբ I հոդված, Հոդվ. 4B, կետ 2 bis),

- ապահովել, որ հայկական կողմը քարտուղարությանը ներկայացնի F հավելվածի II Խմբի կարգավորվող նյութերի իր տարեկան արտանետումների վիճակագրական տվյալները ըստ օբյեկտի, համաձայն Արձանագրության 3-րդ հոդվածի 1(d) կետի (Համաձայնագրի «Փոփոխություն» վերտառությամբ I հոդված, Հոդվ. 7, կետ 3 ter) և այլն:

3. Միաժամանակ, Համաձայնագրի V հոդվածով «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության յուրաքանչյուր Կողմ ցանկացած ժամանակ՝ մինչև իր համար սույն Փոփոխության ուժի մեջ մտնելը, կարող է հայտարարել, որ ինքը ժամանակավորապես կիրականացնի Արձանագրության 2J հոդվածում սահմանված կարգավորման միջոցառումներից ցանկացածը և կկատարի 7-րդ հոդվածում սահմանված ներկայացման համապատասխան պարտավորությունները մինչև ուժի մեջ մտնելը:

4. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Համաձայնագրում հղում է կատարվել մի շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես.

- «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիա՝ ստորագրված 1985 թվականի մարտի 22-ին (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1999թ. ապրիլի 28-ին Ազգային ժողովի Ն-328-1 թվակիր որոշմամբ (ՄԴՈ-145),

- «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրություն՝ ստորագրված 1987 թվականի սեպտեմբերի 26-ին (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1999թ. ապրիլի 28-ին Ազգային ժողովի Ն-329-1 թվակիր որոշմամբ (ՄԴՈ-145),

- «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության Պեկինյան փոփոխություն՝ ստորագրված 1999

թվականի դեկտեմբերի 3-ին (Հայաստանի Հանրապետությունը միացել է 2008թ. սեպտեմբերի 29-ին Ազգային ժողովի Ն-095-4 թվակիր որոշմամբ (ՄԴՈ-745),

- «Կլիմայի փոփոխության մասին» Ռիո դե Ժանեյրոյում 1992 թվականի մայիսի 9-ին ստորագրված շրջանակային կոնվենցիան (վավերացվել է 1993թ. մարտի 31-ին ՀՀ Գերագույն խորհրդի Հ.Ն-0780-1 թվակիր որոշմամբ),

- «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրություն՝ ստորագրված 1997 թվականի դեկտեմբերի 11-ին (վավերացվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին Ազգային ժողովի Ն-323-2 որոշմամբ (ՄԴՈ-394):

5. Մահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Մահմանադրության 12 և 13-րդ հոդվածների դրույթներին, մասնավորապես՝ նպատակաուղղված են շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը ու վերականգնումը խթանելուն և բնական պաշարների ողջամիտ օգտագործելու նպատակով պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Մահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2016 թվականի հոկտեմբերի 15-ին ստորագրված՝ «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության Կիզալիի փոփոխություն» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Մահմանադրությանը:

2. Մահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

22 հունվարի 2019 թվականի
ՄԴՈ-1441



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ, ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 59-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 98-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ՝ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի N 1543-Ն ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ 231-ՐԴ ԿԵՏԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

5 փետրվարի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժո-

դովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-
կան փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժ-
նի պետ Ա. Քոչարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Կառավարու-
թյան,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-
րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և «Սահմանադրական դատա-
րանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարդու
իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա «Ձերբակալված
և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդ-
վածի 4-րդ մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդ-
վածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ
կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադա-
տության նախարարության քրեակատարողական ծառայության՝
կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների
ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոս-
տոսի 3-ի N 1543-Ն որոշմամբ հաստատված ներքին կանոնակարգի
231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասության՝ Սահմա-
նադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբեր-
յալ» գործը:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին»
ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է
2002 թվականի փետրվարի 6-ին, Հանրապետության Նախագահի
կողմից ստորագրվել 2002 թվականի մարտի 7-ին և ուժի մեջ է
մտել 2002 թվականի ապրիլի 1-ից:

Օրենքի «Պատժախցում կալանավորված անձանց պահելու
առանձնահատկությունները» վերտառությամբ 36-րդ հոդվածի 4-րդ
մասը, որը լրացվել է 2008 թվականի ապրիլի 4-ի ՀՕ-16-Ն և 2015
թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-191-Ն օրենքներով, սահմանում է.
«Պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձանց ար-
գելվում են նամակագրությունը, տեսակցությունները, բացառու-
թյամբ օրենքով նախատեսված դեպքերի և փաստաբանի կամ
պաշտպանի հետ տեսակցությունների, լրացուցիչ սննդամթերք,
առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելը, ծանրոցներ,
հանձնույններ ստանալը, դրամական փոխանցումներ կատարելն ու
ստանալը, հեռուստադիտումները, սեղանի խաղերից օգտվելը»:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 24-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2005 թվականի հունվարի 18-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 10-ից:

Օրենսգրքի՝ «Դատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժի միջոցները» վերտառությամբ 59-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են դրամական փոխանցումները, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը և աշխատելը»:

Նույն Օրենսգրքի՝ «Դատապարտյալին պատժախցում պահելու պայմանները» վերտառությամբ 98-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, դրամական փոխանցումներ, հանձնուքներ ու ծանրոցներ ստանալը և ուղարկելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը, աշխատելը, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը»:

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) Կառավարության կողմից ընդունվել է 2006 թվականի օգոստոսի 3-ին, ՀՀ վարչապետի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի նոյեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 2006 թվականի դեկտեմբերի 2-ին:

Նշված Որոշմամբ հաստատված ներքին կանոնակարգի (այսուհետ՝ Ներքին կանոնակարգ) 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասությունը, որը լրացվել է ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի N 87-Ն որոշմամբ, սահմանում է. «Պատժախցում գտնվելու ժամանակահատվածում կալանավորված անձին կամ դատապարտյալին արգելվում է նամակագրությունը, տեսակցությունները (բացառությամբ փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների), հեռախոսազրույցները, լրացուցիչ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության և այլ առարկաների ձեռք

բերումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, հանձնուքների և ծանրոցների ստացումը, սեղանի խաղերից, թերթերից, գրքերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելը»:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 26-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները և գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև վերլուծելով վիճարկվող իրավական ակտերի համապատասխան դրույթները Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասը և 98-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշմամբ հաստատված ներքին կանոնակարգի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասությունը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասին, 33-րդ հոդվածի 1-ին մասին, 78 և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու դեպքում անձը, բացառություն չնախատեսող ընդհանուր արգելքի պատճառով, մեխանիկորեն և անհամաչափ գրկվում է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև հաղորդակցության ազատության իրավունքից:

Դիմողը գտնում է, որ ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու դեպքում ցանկացած պարագայում անձը, միաժամանակ, անկախ որևէ հանգամանքից,

զրկվում է արտաքին աշխարհի հետ կապից և արդյունքում ստացվում է, որ տույժի այդ միջոցն ունի լրացուցիչ զրկանքներ պատճառելու բնույթ, որոնք որևէ կապ չունեն տույժի նպատակների կամ պատճառների հետ:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավակարգավորումների պայմաններում՝ առանց անհատական մոտեցման և նպատակահարմարության ու համաչափության հարցերի քննարկման, անձին պատժախուց տեղափոխելը հանգեցնում է նրա մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության պարտադիր և ոչ համաչափ սահմանափակման:

Դիմողն իր կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա եզրակացնում է, որ ազատությունից զրկված անձի տեղափոխումը պատժախուց և դրա արդյունքում սոցիալական մեկուսացումը կարող են անձի մոտ առաջացնել հոգեճնշող վիճակ, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել տարբեր խնդրահարույց իրավիճակների, օրինակ՝ ինքնավնասումների:

Դիմողի համոզմամբ տույժը յուրաքանչյուր դեպքում պետք է կիրառվի, ապահովելով կատարված խախտման ու տույժի համաչափությունը և անհատական մոտեցումը՝ հաշվի առնելով կոնկրետ խախտման բնույթը և ազատությունից զրկված անձի վարքագծի ռիսկայնության աստիճանը: Դիմողն անընդունելի է համարում այն, որ անձը պատժախուց տեղափոխվելու դեպքում քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ զրկվում է իր սահմանադրական իրավունքների իրականացման հնարավորությունից՝ առանց այդ զրկմանն առնչվող որևէ հիմնավորման:

Դիմողը, վերլուծելով անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության իրավունքների սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակությունը, հանգել է այն հետևության, որ այդ իրավունքների սահմանափակման համար պետք է կապ լինի կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից կատարված խախտման և կոնկրետ իրավունքի սահմանափակման միջև:

Դիմողի կարծիքով՝ ազատությունից զրկված անձանց պահելու պայմաններին առնչվող միջազգային իրավունքի նորմերից և ներպետական այլ իրավակարգավորումներից բխում է, որ ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապը դրա տարբեր դրսևորումներով՝ տեսակցություն, հեռախոսազանգ, գրա-

կանությունից և լրատվամիջոցներից օգտվել, նամակագրություն և այլն, ունի կարևոր նշանակություն, և այդ հարցում անհրաժեշտ է նաև ազատագրկման վայրի վարչակազմի աջակցությունը, քանի որ դա, ի թիվս այլ պայմանների, համարվում է այդ անձանց վերասոցիալականացման հիմնական ճանապարհներից մեկը:

Դիմողը, հղում կատարելով մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքին, հանգել է այն հետևության, որ, չնայած ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի կարևորությանը, այն բացարձակ չէ, և դրա սահմանափակումը, իսկ որոշ դեպքերում նաև զրկումը, համարվում են իրավաչափ, սակայն դրանք պետք է դիտարկվեն որպես վերջին միջոց, լինեն նպատակային և **կիրառվեն ծայրահեղ դեպքերում**, ինչպես նաև պետք է հաշվի առնվի անձի կատարած խախտման բնույթը, լինի համաչափ և հիմնավորված: Բացի դրանից, դիմողն «անընդունելի է համարում երկար ժամանակահատվածում թողնել ազատությունից զրկված անձանց առանց միջոցառումների կամ արտաքին աշխարհի հետ կապի»:

Դիմողը խնդրահարույց է համարում այն իրավիճակը, երբ կալանավորված անձը կամ դատապարտյալը, տեղափոխվելով պատժախուց, անկախ դրա հիմքից զրկվում է արտաքին աշխարհի հետ կապից, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ անձի հոգեկան առողջության վրա, իսկ քրեակատարողական ու ընդհանրապես ազատությունից զրկման կազմակերպման համակարգում չկա հոգեբանական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտ ընթացակարգ, հստակ չեն մեխանիզմները:

Դիմողն իր բարձրացրած խնդրի առնչությամբ հղում է կատարում մի շարք այլ երկրներում գործող համապատասխան իրավակարգավորումներին և եզրակացնում, որ դրանք բացառում են պատժախուց տեղափոխելու հիմքով արտաքին աշխարհի հետ կապի տարբեր դրսևորումների մեխանիզմական, ինքնանպատակ, կամայական կամ անհամաչափ սահմանափակումը:

2. Պատասխանող կողմ՝ Ազգային ժողովի դիրքորոշումները

Պատասխանողի կարծիքով՝ վիճարկվող դրույթներն այնքանով, որքանով կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու դեպքում անձը, բացառություն չնախատեսող ընդհանուր արգելքի

պատճառով մեխանիկորեն և անհամաչափ կերպով զրկվում է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության ազատության իրավունքի իրացումից, հակասում է Սահմանադրության պահանջներին:

Պատասխանողը նշում է, որ, թեև մասնավոր և ընտանեկան կյանքի, ինչպես նաև հաղորդակցության ազատության իրավունքի սահմանափակումը լուրջ միջամտություն է մարդու անձնական կյանքին, այնուամենայնիվ, այդ միջամտությունը հնարավոր է օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով և պետք է պայմանավորված լինի օբյեկտիվ անհրաժեշտությամբ, այն է՝ հանցագործությունների կանխում կամ բացահայտում, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանություն:

Պատասխանողն ակնհայտ է համարում այն, որ, ըստ վիճարկվող օրենսդրական դրույթների, ազատագրկման վայրի հիմնարկի պետի որոշմամբ՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու հետ միաժամանակ անձը՝ անկախ որևէ հանգամանքից, ցանկացած պարագայում զրկվելով արտաքին աշխարհի հետ կապից, մասնավորապես՝ տեսակցություններից, հեռախոսազանգերից, նամակագրությունից, զանգվածային լրատվության միջոցներից օգտվելուց և այլն, առանց հստակ հիմնավորման զրկվում է իր սահմանադրական իրավունքներից:

Պատասխանողը համոզված է, որ կալանավորված կամ դատապարտված անձին պատժախուց տեղափոխելու դեպքում, վիճարկվող դրույթներում սահմանված՝ բացարձակ բնույթ ունեցող արգելքի ուժով, առանց հիմնավոր, համաչափ և հստակ նպատակներից բխող հիմքերի նրան վերոհիշյալ իրավունքներից զրկելն առաջացնում է անձի Սահմանադրության 31 և 33-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների անհամաչափ սահմանափակում:

3. Պատասխանող կողմ՝ Կառավարության դիրքորոշումները

Կառավարությունը գտնում է, որ Օրենսդիրն առանձնացրել է այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում իրավասու մարմինը քննարկման առարկա է դարձնում ազատությունից զրկված անձի նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցը: Դրանք են՝ ազատությունից զրկված անձը խախտել է ներքին կա-

նոնակարգով սահմանված՝ պատիժը կրելու կարգն ու պայմանները, և ազատությունից զրկված անձը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել իր պարտականությունները:

Ըստ Կառավարության բացատրության՝ Ներքին կանոնակարգի 223-րդ կետով հստակ սահմանվում են կալանավորված անձանց կամ դատապարտյալներին պատժախուց տեղափոխելու դեպքերը, և նշված դեպքերում ազատությունից զրկված անձի նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու դեպքում իրավասու մարմինն ունի հայեցողություն՝ կարգապահական տույժի միջոցն ընտրելու հարցում, այսինքն՝ նախատեսված չէ եզակի կարգապահական տույժ, որը կարող է վրա հասնել ցանկացած կարգապահական խախտման դեպքում:

Կառավարությունը գտնում է, որ իրավասու մարմինը պատժախուց տեղափոխելու ձևով կարգապահական տույժ կիրառելիս պետք է նաև որոշի, թե ի՞նչ ժամկետով է կիրառելու այն, և, որ ուսումնասիրությունները թույլ են տալիս պնդել, որ գործնականում տույժի օրերի թիվը շատ դեպքերում չի հասնում առավելագույն 15 օրվան:

Կառավարության կարծիքով՝ կարգապահական տույժի միջոցի կիրառման առանցքային նպատակը ազատությունից զրկված անձի մոտ՝ կատարված խախտման համար պատասխանատվության անխուսափելիության զգացումի արթնացումն է և, դրանով իսկ, նրա իրավահպատակ վարքագծի խթանումը: Վիճարկվող իրավադրույթներով շոշափվում են անձի՝ սահմանադրորեն ճանաչված մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև հաղորդակցության ազատության իրավունքները, որոնք բացարձակ չեն և օրենքով նախատեսված դեպքերում կարող են սահմանափակվել: Եթե քննարկվող կարգապահական տույժը կիրառելիս որոշակի իրավունքներ և ազատություններ չսահմանափակվեն, ապա պատժախուց տեղափոխելու ձևով կարգապահական տույժը կդառնա ինքնանպատակ:

Կառավարությունը նշում է, որ պետությունը երաշխավորում է անձի՝ արտաքին աշխարհի հետ կապի իրավունքը, եթե անգամ անձի նկատմամբ նշանակվել է պատժախուց տեղափոխելու ձևով կարգապահական տույժն իր ողջ խստությամբ, քանի որ անձը շարունակ իրավունք է ունենում մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ կարճատև և երկարատև տեսակցությունների: Կառա-

վարության կարծիքով՝ «եթե անգամ ընդունենք, որ անձի նկատմամբ նշանակվել է նշված կարգապահական տույժն իր առավելագույն չափով՝ այն է 15 օր, անձն ամսվա մնացած 15 (16) օրերի ընթացքում հնարավորություն ունի իրացնել արտաքին աշխարհի հետ կապի իր իրավունքը»:

Պատասխանողը կարևորում է նաև այն հանգամանքը, որ ազատությունից զրկված անձը կարող է բողոքարկել կարգապահական տույժ նշանակելու մասին իրավասու մարմնի որոշումը, իսկ ինչ վերաբերում է մեկուսի պայմաններում պահելուն, որը հանգեցնում է անձանց հոգեկան վիճակի վատթարացմանը, ապա պատասխանողը գտնում է, որ հոգեբանական գործոնն այնպիսին չէ, որ պարտադիր կարող է առաջացնել դիմողի կողմից նշված խանգարումները. պատժախցում պահվող անձը մշտապես գտնվում է բժշկի հսկողության տակ, ինչպես նաև նրա հետ առավել ակտիվ աշխատում է հոգեբանը:

Կառավարությունը պնդում է, որ քննության առարկա սահմանափակումներն անհրաժեշտ են նախատեսվող նպատակին հասնելու համար և մեխանիկորեն և անհամաչափորեն չեն զրկում կալանավորված անձին կամ դատապարտյալին մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության ազատության իրավունքից:

4. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցադրումները

Սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյո՞ք վիճարկվող նորմերը սահմանափակում են կալանավորված անձի կամ դատապարտյալի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության (Սահմանադրության 31-րդ հոդված) և հաղորդակցության ազատության (Սահմանադրության 33-րդ հոդված) սահմանադրական իրավունքները,

- արդյո՞ք պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձանց և դատապարտյալներին, մասնավորապես, տեսակցությունները, նամակագրությունը, հեռախոսազանգերից, գրականու-

թյունից և զանգվածային լրատվությունից օգտվելն արգելելը հետապնդում է Սահմանադրությամբ սահմանված իրավաչափ նպատակ, - արդյո՞ք իրավունքների նման սահմանափակումը ժողովրդավարական հասարակությունում պիտանի և անհրաժեշտ է Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար և համարժեք է սահմանափակվող իրավունքների նշանակությանը (Սահմանադրության 78-րդ հոդված),

- արդյո՞ք անձի հիմնական իրավունքների և ազատությունների՝ վիճարկվող իրավադրույթներով նախատեսված սահմանափակումները չեն գերազանցում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները (Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մաս):

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատիժը կատարելու ընթացքում դատապարտյալի իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել դատարանի դատավճռով, Օրենսգրքով և այլ օրենքներով, իսկ 4-րդ մասի համաձայն՝ դատապարտյալի իրավունքները, ազատությունները և պարտականություններն իրականացնելու կարգը սահմանվում է Օրենսգրքով, ինչպես նաև ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Բացի դրանից, դատապարտյալն իր իրավունքները, ազատությունները և պարտականություններն իրականացնելիս չպետք է խախտի պատիժը կրելու կարգն ու պայմանները, ինչպես նաև ոտնահարի այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի և Օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների Ներքին կանոնակարգը հաստատվում է Կառավարության կողմից:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պարտավոր է կալանավորված անձանց և դատապարտյալներին ծանոթացնել ինչպես իրենց իրավունքների, այնպես էլ պարտականությունների ողջ ծավալին, որոնք սահմանված են Օրենքի 13-րդ և Օրենսգրքի 12-րդ հոդվածներով: Կալանավորված անձանց և դատապարտյալներին իրենց իրավունքներին և պարտականություններին, ինչպես

նաև ուղղիչ հիմնարկի ներքին կանոնակարգին ծանոթացնելն անհրաժեշտ է, որպեսզի նրանք տեղյակ լինեն իրենց վարքի թույլատրելի սահմանների մասին և հետագայում ի վիճակի լինեն դրսևորել համապատասխան վարքագիծ:

Օրենսգրքի 13-րդ հոդվածը, սահմանելով դատապարտյալների պարտականությունները, նախատեսում է դրանք չկատարելու դեպքում նրանց ենթարկել օրենքով սահմանված պատասխանատվության: Նույն մոտեցումը տարածվում է նաև պատիժները կատարող մարմինների և հիմնարկների վարչակազմի օրինական պահանջները չկատարելու դեպքերի վրա:

Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ ներքին կանոնակարգով սահմանված պատիժը կրելու կարգի և պայմանների խախտման համար կալանքի ձևով պատիժ կրող դատապարտյալի նկատմամբ կարող են կիրառվել այնպիսի տույժի միջոցներ, ինչպիսիք են՝ **նկատողությունը** և **պատժախուց տեղափոխումը**՝ մինչև տասն օր ժամկետով: Նույնպիսի խախտումների համար, Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն, նույն տույժերը կարող են սահմանվել կալանավորված անձանց նկատմամբ:

Ազատագրված դատապարտված անձի նկատմամբ կիրառվող տույժի միջոցներն են՝ **նկատողությունը, խիստ նկատողությունը և պատժախուց տեղափոխելը մինչև տասնհինգ օր**, իսկ անչափահաս դատապարտյալին՝ **մինչև տասն օր ժամկետով** (Օրենսգրքի 95-րդ հոդված): Մեկ խախտման համար արգելվում է նշանակել մեկից ավելի տույժ (Օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մաս, Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մաս):

Օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ և 59-րդ հոդվածի 3-րդ մասերի համաձայն՝ տույժի միջոցները կիրառվում են ներքին կանոնակարգով նախատեսված դեպքերում և կարգով:

5.2. Ինչպես Օրենսգրքով, Օրենքով, այնպես էլ Ներքին կանոնակարգով նախատեսված են դատապարտյալներին պատժախուց տեղափոխելու հետ կապված նույնանման կարգավորումներ:

Այսպես, Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ ներքին կանոնակարգը խախտելու, իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կալանավորված անձի նկատմամբ որպես տույժի միջոց կարող են կիրառվել **նկատողության հայտարարում** և **պատժախուց տեղափոխում մինչև տասն**

օր, իսկ անչափահասներին՝ մինչև հինգ օր ժամկետով: Նույն հոդվածի համաձայն՝ **տույժի միջոցները կիրառելիս նշվում են կարգապահական խախտում հանդիսացող արարքը, տույժի միջոցը և դրա տևողությունը, և այդ ամենի մասին տեղեկացվում է կալանավորված անձը:** Բացի դրանից, մինչև տույժի միջոց նշանակելը կալանավորված անձից վերցվում է **գրավոր բացատրություն**, իսկ եթե նա դրանից հրաժարվում է, ապա այդ մասին կազմվում է համապատասխան **արձանագրություն**:

Օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝ ազատագրկման դատապարտված անձի նկատմամբ տույժի միջոցները կիրառվում են՝ հաշվի առնելով խախտումը կատարելու հանգամանքները, դատապարտյալի անձը և նրա վարքագիծը՝ նախքան խախտումը կատարելը, իսկ պատժախուց տեղափոխելու դեպքում պարտադիր նշվում է այդ վայրում պահելու ժամկետը:

Օրենսդրական այդ կարգավորումներն արտահայտված են նաև Ներքին կանոնակարգում, որի 216-րդ կետի համաձայն՝ կատարված կարգապահական խախտումը քննելիս և կարգապահական տույժ նշանակելիս կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետը ծանոթանում է կատարվածի վերաբերյալ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի ծառայողի ներկայացրած գրավոր նյութերին, ընդունում համապատասխան **որոշում**, որը կցվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական գործին, իսկ 217-րդ կետի համաձայն՝ «Կարգապահական տույժի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում կատարված խախտման պայմանները, կալանավորված անձի կամ դատապարտյալի անձը, վարքը մինչև խախտում կատարելը և ընդհանուր բնութագիրը: Տրվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման ծանրությանը և բնույթին: Տույժը պետք է լինի արդարացի և պետք է կիրառվի միայն համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում ընդունված որոշման հիման վրա»:

Տույժի բոլոր միջոցները կիրառվում են գրավոր՝ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետի կամ նրա պարտականությունները կատարող անձի որոշմամբ: Ուղղիչ հիմնարկի պետը կամ նրա պարտականությունները կատարող անձը պաշտոնատար անձ է, որը լիազորված է ընդունել պատասխանատու որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով:

Օրենսգրքի՝ դատական վերահսկողությանը նվիրված 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում՝ և կարգով դատարանը քննարկում է դատապարտյալի բողոքները՝ պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ: Իսկ Ներքին կանոնակարգի 169-րդ կետը պարտավորեցնում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմին առանց քանակի սահմանափակման ընդունել կալանավորված անձանց կամ դատապարտյալների կողմից ներկայացվող առաջարկությունները, դիմումներն ու բողոքները:

Կալանավորված անձանց կամ դատապարտյալներին պատժախցերում պահելու համար ստեղծված պայմանների մասին հոգ տանելը գտնվում է համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց իրավասության ներքո, իսկ պետությունն իր հերթին պարտավոր է վերահսկել վերջիններիս գործունեությունը, հատկապես անազատության մեջ գտնվող անձանց համար պատշաճ պայմանների պահպանման հարցում:

5.3. Կալանավորված անձանց և դատապարտյալներին որպես տույժ պատժախուց տեղափոխելը, որը կիրառվում է վերջիններիս կողմից իրենց պարտականությունները, ինչպես նաև պատիժները կատարող մարմինների և հիմնարկների վարչակազմի օրինական պահանջները չկատարելու դեպքում, ենթադրում է, որ նրանք որոշակի ժամկետով մեկուսացվում են մյուս կալանավորներից կամ դատապարտյալներից և զրկվում արտաքին աշխարհի հետ կապի որոշակի միջոցներից: Կալանավորված անձինք և դատապարտյալները պատժախցում պահվում են միայնակ, նախապես հստակ սահմանված ժամկետով: Բնականաբար պատժախցում դատապարտյալների համար ստեղծված պայմանները շատ ավելի խիստ են և նույնչափ հարմարավետ լինել չեն կարող, ինչպես այլ խցերում, հակառակ դեպքում՝ անձին պատժախուց տեղափոխելու ինստիտուտը՝ որպես տույժի միջոց, իմաստագրկվում է:

Պատժախուց տեղափոխելը քրեակատարողական իրավունքով նախատեսված ամենախիստ տույժի միջոցն է և **նպատակ է հետապնդում խթանել կալանավորված անձանց և դատապարտյալների օրինապահ վարքագիծը, այն համապատասխանեցնել քրեակատարողական հիմնարկի ներքին կանոններին:**

Համեմատական վերլուծության ենթարկելով կալանավորված անձանց և դատապարտյալների պատժախցում գտնվելու ժամանակ նրանց իրավունքների սահմանափակումներին վերաբերող Օրեն-

քով, Օրենսգրքով և Որոշմամբ սահմանված կարգավորումները՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ դրանց ծավալն ընդհանուր առմամբ համընկնում է: Պատժախցում գտնվելու ընթացքում նրանց արգելվում են. տեսակցությունները (բացառությամբ փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների), նամակագրությունը, լրացուցիչ սննդամթերք, առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելը, ծանրոցներ և հանձնուքներ ստանալը, դրամական փոխանցումներ կատարելն ու ստանալը, հեռուստադիտումները, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը, սեղանի խաղերից օգտվելը:

Քննության առարկա նորմերի հետ համակարգային առումով փոխկապակցված Ներքին կանոնակարգի 233-րդ կետի համաձայն կալանավորված անձին և դատապարտյալին թույլատրվում է պատժախցում իր մոտ պահել **կրոնական գրականություն և նկարներ:**

Կրոնական գրականություն և նկարներ պահելը թույլատրելի կարող է նպաստել պատժախուց տեղափոխված անձի վերադաստիարակմանը և հոգևոր արժեքների վերափմաստավորմանը, իսկ պատժախուց տեղափոխված այլ կալանավորված անձինք և դատապարտյալները, որոնք որևէ կրոն չեն դավանում, փաստացի անտեսվում են:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ պատժախցում անձի միայնակ մնալը՝ սեփական ներաշխարհում, սեփական մտքերի ու վախերի հետ, հոգեճնշող իրավիճակ կարող է առաջացնել, իսկ համընդհանուր բարոյական արժեքները կարևորող դաստիարակչական բնույթի և ոգեշնչող համապատասխան գրականությունը կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ անձի վրա:

5.4. Սահմանադրական դատարանը փաստում է, որ «մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության» (Սահմանադրության 31-րդ հոդված), ինչպես նաև «հաղորդակցության ազատության» (Սահմանադրության 33-րդ հոդված) սահմանադրական իրավունքները բացարձակ իրավունքներ չեն և կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Դատապարտյալի տեսակցությունների իրավունքը նրա ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի էական մասն է, ինչն ապահովում են պետական մարմինները, որոնք անհրաժեշտության դեպքում օժանդակում են, որ դատապարտյալը կարողանա կապ պահպանել ընտանիքի անդամների հետ:

Միաժամանակ, պետք է նշել, որ, պայմանավորված կալանավորի անհատական որոշակի բնութագրերով, նրա կապն արտաքին աշխարհի հետ կարող է սահմանափակվել ներառյալ ընտանիքի հետ տեսակցությունների քանակի կրճատումը, այդ տեսակցությունների նկատմամբ հսկողությունը, եթե այդ սահմանափակումները ողջամտորեն անհրաժեշտ են իրավաչափ նպատակին հասնելու համար:

Օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասի և Օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կալանավորված անձանց և դատապարտյալներին մերձավոր ազգականների, լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու տեսակցություն, իսկ ազատագրկման դատապարտվածներին, Օրենսգրքի 92-րդ հոդվածի համաձայն, առնվազն մեկ տեսակցություն:

Կառավարության այն փաստարկը, որ անգամ առավելագույն 15 օր ժամկետով պատժախուց տեղափոխվելու դեպքում, անձն ամսվա մնացած 15 (16) օրերի ընթացքում հնարավորություն ունի իրացնել արտաքին աշխարհի հետ կապի իր իրավունքը, միշտ չէ, որ իր հաստատումն է գտնում իրավակիրառ պրակտիկայում: Դիմողը, ի պատասխան Կառավարության բացատրության, հայտնել է, որ պաշտպանին հասցեագրված դիմումների ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում եղել է դեպք, երբ դատապարտյալը 189 օր անընդմեջ գտնվել է պատժախցում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոգրյալից հետևում է, որ **առանձին դեպքերում հնարավոր է, որ կալանավորված անձը կամ դատապարտյալը ամսվա ընթացքում պատժախցում պահվի առավել քան մեկ տույժի՝ օրենքով նախատեսված առավելագույն ժամկետով և հնարավորություն չունենա օգտվելու ինչպես օրենքով նախատեսված նվազագույն տեսակցություններ ունենալու, այնպես էլ նամակագրության և հեռախոսազանգեր կատարելու իր իրավունքներից:**

Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և Օրենսգրքի 50-րդ և 92-րդ հոդվածների 3-րդ մասերի համաձայն՝ կալանավորվածների և դատապարտյալների նամակագրությունը չի սահմանափակվում:

Վիճարկվող իրավակարգավորումների համաձայն՝ պատժախուց տեղափոխված անձանց **չի թույլատրվում նաև նամակագրություն**: Պատժախցում պահվող կալանավորված անձը կամ դատապարտյալը չի կարող ձեռքի տակ ունենալ գրենական պիտույքներ (թուղթ, գրիչ, ծրար և այլն) կամ մտքերը փոխանցելու այլ միջոցներ, ինչը գործնականում նույնպես անհնարին է դարձնում հաղորդակցության իրավունքի իրականացումը, մինչդեռ Սահմանադրության 75-րդ հոդվածը պահանջում է, որ անձի հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար սահմանվեն անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով, որ պատժախցում գտնվելու ժամանակահատվածում կալանավորվածները և դատապարտյալները նամակագրության իրավունքից զրկվում են պարտադիր՝ առանց անհրաժեշտ հիմնավորումների, գտնում է, որ քննարկվող իրավակարգավորումները խնդրահարույց են Սահմանադրության 33-րդ հոդվածին համապատասխանության տեսանկյունից:

5.5. Կալանավորված անձին կամ դատապարտյալին որպես տույժ պատժախուց տեղափոխելը նախատեսված է նաև այլ ժողովրդավարական պետությունների օրենսդրություններով, և թույլատրելի է համարում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Վերջինիս դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ հիմնական իրավունքների և ազատությունների խախտումը ոչ թե պատժախուց տեղափոխելը որպես տույժի միջոց կիրառելն է, այլ պատժախցում գտնվելու ժամանակ կալանավորված անձանց համար ստեղծված ոչ պատշաճ պայմանները և այն, թե որքանով է հիմնավորված և իրավաչափ նման տույժի կիրառումը:

Քննարկվող հարցի վերաբերյալ ՄԻԵԴ-ը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ դատապարտյալի տեսակցությունները, նամակագրությունը չեն կարող արգելվել բանտային կանոնները խախտելու համար կիրառվող կարգապահական տույժի կարգով: Դատարանը համարել է, որ նման սահմանափակումները ոչ այլ ինչ

են, քան հանրային մարմինների միջամտություն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի իրականացմանը («Poltoratskiy v. Ukraine», app. no. 38812/97, judgment 29.04.2003, §§152-153):

Ինչ վերաբերում է դիմողի կողմից բարձրացված՝ պատժախուց տեղափոխված անձանց մոտ հոգեճնշող վիճակի առաջացման հարցին, ապա ՄԻԵԴ-ը գտել է, որ այն անձանց նկատմամբ, որոնք ունեն հոգեկան խանգարումներ և ընդունակ են ինքնավնասման, ընդհուպ ինքնասպանության, անհրաժեշտ է կիրառել հատուկ միջոցներ ուղղված մարդասիրական վերաբերմունքի: Բացի դրանից, ՄԻԵԴ-ը նշում է, որ պատժել անձանց մենախուց տեղափոխելու միջոցով, որը զուգորդված է տեսակցությունների և այլ բանտարկյալների հետ շփման արգելքով, և որը կիրառվել է այնպիսի անձի նկատմամբ, որը նախկինում ինքնասպանության փորձ է կատարել, անհամատեղելի է նշված անձի բուժման հետ, որն անհրաժեշտ է հոգեկան խանգարումներ ունեցող անձի համար և, ըստ էության, անմարդկային և մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք ու պատիժ է («Shatokhin v. Russia», app. no. 502306/06, judgment 27.02.2018):

Անդամ պետություններին ուղղված «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականը, ընդունված 2006 թվականի հունվարի 11-ին, սահմանում է, որ բանտարկյալներին պետք է թույլատրվի հնարավորինս հաճախ նամակով, հեռախոսով կամ հաղորդակցության այլ ձևերով հաղորդակցվել իրենց ընտանիքների, այլ անձանց և արտաքին կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ: Հաղորդակցությունները և տեսակցությունները կարող են ենթարկվել սահմանափակումների և մշտադիտարկման, որն անհրաժեշտ է քրեական գործի քննությունը շարունակելու, կարգուկանոնի պահպանման, ապահովության և անվտանգության, հանցագործության կանխարգելման, հանցագործությունից տուժածներին պաշտպանելու համար, սակայն նման սահմանափակումները, ներառյալ դատական մարմինների որոշումներով նախատեսված սահմանափակումները, ամեն պարագայում չպետք է բացառեն շփումների նվազագույն մակարդակը:

«Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի մեկնաբանություններում նշվում է, որ ազատության իրավունքից զրկումը չպետք է հանգեցնի այն ենթադրությանը, որ բանտարկյալները մեխանիկորեն զրկվում են իրենց քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներից նույնպես: Այն դեպքում, երբ այդ իրավունքների սահմանափակումն անխուսափելի է ազատությունից զրկվելիս, ապա հետագա սահմանափակումները պետք է լինեն հնարավորինս քիչ, սահմանված լինեն օրենքով և կիրառվեն միայն այն ժամանակ, երբ էական նշանակություն ունեն բանտում կարգուկանոնի, ապահովության և անվտանգության համար:

Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) 2011 թվականի թիվ 26 Ընդհանուր զեկույցի 61-րդ կետի (բ) ենթակետի համաձայն՝ այն դատապարտյալները, որոնց նկատմամբ կիրառվել է մենախուց տեղափոխելն իբրև կարգապահական տույժի միջոց, երբեք չպետք է ամբողջությամբ զրկվեն իրենց ընտանիքի հետ կապից, և այդ կապի յուրաքանչյուր սահմանափակում պետք է կիրառվի միայն այն դեպքերում, երբ խախտումը վերաբերում է նման կապին: Զեկույցում նշված է, որ մեկուսացումն էլ ավելի է խստացնում առանց այդ էլ խիստ սահմանափակված իրավունքները: Լրացուցիչ սահմանափակումները պայմանավորված չեն ազատագրվման փաստով, հետևաբար պետք է պատճառաբանվեն առանձին:

ՄԱԿ-ի կողմից 2015 թվականին ընդունվել է Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների վերանայված տարբերակը (Mandela Rules, Մանդելայի կանոնները), որի 43-րդ կանոնը սահմանում է, որ «Կարգապահական սանկցիաները կամ սահմանափակող միջոցները չպետք է ներառեն ընտանեկան շփումների արգելք: Այն կարող է սահմանափակվել որոշակի ժամկետով միայն և բացառապես անվտանգության և կարգուկանոնի պահպանման համար»:

5.6. Իրավունքների սահմանափակման համաչափության տեսանկյունից խնդիր է առաջացնում վիճարկվող դրույթներում տեղ գտած բոլոր իրավունքների սահմանափակումների պարտադիր և միաժամանակյա կիրառումը: Ինչպես ցույց է տալիս օտարերկրյա պետությունների փորձի ուսումնասիրությունը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավասու մարմինները, գնահատելով արարքի

վտանգավորությունը, ընտրում են մեկ կամ երկու իրավունքի սահմանափակում, բայց իրավունքի սահմանափակման վիճարկվող դրույթում ամրագրված բոլոր տեսակները չեն կիրառվում միաժամանակ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ կալանավորված անձի կամ դատապարտյալի գտնվելը պատժախցում բնորոշվում է նրա **սոցիալական մեկուսացմամբ, շրջապատող միջավայրի ազդեցության նվազեցմամբ և առօրյա կյանքի գրեթե բոլոր ասպեկտների նկատմամբ վերահսկողության կորստով**, ինչն անխուսափելիորեն բացասական է ազդում պատժախցում գտնվող անձի հոգեկան վիճակի վրա: **Ուստի, Սահմանադրական դատարանը գտնում է, որ պատժախուց տեղափոխված անձանց նկատմամբ կիրառվող արգելքները պետք է անմիջական կապ ունենան կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից թույլ տրված խախտման հետ, և նրանց հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է ողջամտորեն անհրաժեշտ լինեն իրավաչափ նպատակին հասնելու համար:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով պատժախուց տեղափոխելու ձևով տույժի միջոցի կիրառման փաստի ուժով ինքնին սահմանափակում է կալանավորված անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության ազատության իրավունքները, ճանաչել Սահմանադրության 31, 33 և 78-րդ հոդվածներին հակասող:

2. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասը և 98-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով պատժախուց տեղափոխելու ձևով տույժի միջոցի կիրառման փաստի ուժով ինքնին սահմանափակում են դատապարտյալի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության ազատության իրավունքները, ճանաչել Սահմանադրության 31, 33 և 78-րդ հոդվածներին հակասող:

3. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշմամբ հաստատված ներքին կանոնակարգի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասությունն այնքանով, որքանով պատժախուց տեղափոխելու ձևով տույժի միջոցի կիրառման փաստի ուժով ինքնին սահմանափակում է կալանավորված անձի կամ դատապարտյալի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության ազատության իրավունքները, ճանաչել Սահմանադրության 31, 33 և 78-րդ հոդվածներին հակասող:

4. Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետի և 19-րդ մասի պահանջները, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված դրույթները Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի հետևանքներ, որոնք կխաթարեն այդ դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 5-ը հնարավորություն տալով Ազգային ժողովին և Կառավարությանը այդ դրույթները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

5 փետրվարի 2019 թվականի
ՍԴՈ-1442



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 փետրվարի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող՝ ՀՀ վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 41 և 71-րդ հոդվածների,

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումների հիման վրա՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործը:

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» (Օրենքի վերնագիրը փոփոխվել է՝ 07.03.2018թ., ՀՕ-143-Ն օրենքով) Հայաստանի Հանրապետության օրենքն (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014 թվականի փետրվարի 4-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2014 թվականի փետրվարի 13-ին, ուժի մեջ է մտել՝ 2014 թվականի հուլիսի 1-ից:

Օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև՝

1) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը.

2) «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատված անձին:

Սույն մասով սահմանված մասնագիտական աշխատանքային ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են Հայաստանի Հանրապետությունում դատախազի (մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը՝ դատախազի տեղակալի, դատախազի օգնականի և դատախազության գիտատնտեսական հաստատությունների՝ դասային աստիճան շնորհված աշխատողների), Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննիչի, պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչի, ազգային անվտանգության մարմիններում քննիչի (ներառյալ՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը՝ դատախազության քննիչի, քննչական վարչության, բաժնի

կամ բաժանմունքի պետի, պետի տեղակալի), հատուկ քննչական ծառայության ծառայողի, ԽՍՀՄ դատախազության համակարգում դատախազի և քննիչի պաշտոնում աշխատած ժամանակահատվածը, Հայաստանի Հանրապետությունում և ԽՍՀՄ-ում դատավորի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածը:

Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է հաշվարկային աշխատավարձի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի մասնագիտական աշխատանքային ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար կենսաթոշակին ավելանում է հաշվարկային աշխատավարձի 2 տոկոսը, իսկ մինչև դատախազի պաշտոն զբաղեցնելը աշխատած և մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը: Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել հաշվարկային աշխատավարձի չափը:

Դատախազի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է դատախազի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիների համար տրվող հավելավճարի հանրագումարի) 90 տոկոսի չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, դասային աստիճանը և դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիները դատախազի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:

Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է հատուկ քննչական ծառայության ծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի, դասային աստիճանի համար տրվող հավելման և հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած տարիների համար տրվող հավելման հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով՝ հաշվի առնելով վերջին

պաշտոնը, դասային աստիճանը և հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած տարիները հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:

Հաշվարկային աշխատավարձը հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սահմանադրական դատարանի անդամի պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկվում է «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված այն անձանց, որոնք դատախազի կամ հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակվել են մինչև 2017 թվականի հունիսի 1-ը՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելուց հետո»:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (ի դեմս դատավոր Լ. Հակոբյանի) 2018 թվականի սեպտեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՎԴ/14459/05/17 գործով «ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը, և Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (ի դեմս դատավոր Ա. Հարությունյանի) 2018 թվականի դեկտեմբերի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը, որով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՎԴ/6695/05/17 գործով «Վարչական գործի վարույթը կասեցնելու և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի նշված դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը Սահմանադրական դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 4-ի աշխատակարգային որոշմամբ միավորվել են:

Ուսումնասիրելով դիմումները, գործում առկա գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Մահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**։

1. Դիմողների դիրքորոշումները

Դիմողը (ի դեմս դատավոր Լ. Հակոբյանի), վերլուծելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 25-րդ կետը, 55-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 190-րդ հոդվածը, եզրակացնում է, որ քննիչին վերապահված գործառույթը և լիազորություններն իրականացնում են Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության և հարկային կամ մաքսային մարմինների քննիչները: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքը՝ վերը թվարկված քննիչների կատարած աշխատանքի բնույթի և ծավալի, լիազորությունների շրջանակի առումով, որևէ տարբերակում չի կատարում:

Դիմողը, վկայակոչելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածը, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 և 56-րդ հոդվածները, «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածը, «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17 և 18-րդ հոդվածները, ինչպես նաև Օրենքի 2 և 9-րդ հոդվածները, նշում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք է վերապահել Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության մարմնի քննիչներին՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակում չներառելով հարկային և մաքսային մարմինների քննիչներին: Նման կարգավորմամբ օրենսդիրը դրսևորել է տարբերակված մոտեցում, մի կողմից՝ Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության և ազգային անվտանգության մարմնի քննիչների, և մյուս կողմից՝ հարկային և մաքսային մարմինների քննիչների միջև:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողը գտնում է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը՝ այնքանով, որքանով երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք չի վերապահում նաև հարկային և մաքսային մարմինների քննիչներին, հակասում է Սահմանադրության 29-րդ հոդվածին, քանի որ դրսևորվում է չարդարացված տարբերակված մոտեցում, մի կողմից՝ Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության մարմնի քննիչների և, մյուս կողմից՝ հարկային և մաքսային մարմինների քննիչների միջև:

Դիմողը (ի դեմս դատավոր Ա. Հարությունյանի) վիճարկում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության սահմանադրականությունը: Դիմողը, վերլուծելով նշված իրավունքը և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությունը, հայտնում է, որ կենսաթոշակ նշանակվում է ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողին **2014 թվականի հուլիսի 1-ի** դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում, իսկ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողին՝ **2017 թվականի հուլիսի 1-ի** դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու պայմաններում: Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմը խախտում է խտրականության արգելքի սահմանադրաիրավական սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա դիմողը գտնում է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունն այնքանով, որքանով ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների համար կենսաթոշակի իրավունք է նախատեսում 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում, հակասում է Սահմանադրության 29-րդ հոդվածին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-881, ՍԴՈ-1142 որոշումները, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ կենսաթոշակային կամ սոցիալական ապահովության իրավունքին վերաբերող մի շարք որոշումներ, հայտնում

է, որ օրենսդիրն ամրագրել է վիճարկվող դրույթը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անձի կենսաթոշակային ապահովության իրավունքին համապատասխան գործում է պետության համարժեք պարտականությունը՝ այդ իրավունքի պատշաճ ապահովման ուղղությամբ այն չափով, որքանով պետության տվյալ պահի տնտեսական զարգացվածության աստիճանը հնարավորություն է տալիս:

Պատասխանողի կարծիքով՝ օրենսդիրն Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք չի վերապահել հարկային և մաքսային մարմինների քննիչներին՝ այն վերապահելով Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, դատախազության, Ազգային անվտանգության ծառայության քննիչներին: Ըստ պատասխանողի օրենսդիրը հիմնվել է բացառապես աշխատանքային օրենսդրության, կենսաթոշակային իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության, քրեա-իրավական, քրեադատավարական, մաքսային և հարկային օրենսդրության համակարգային վերլուծության և համապարփակ գնահատման արդյունքների վրա, որտեղ սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող իրավակարգավորման օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ են հանդիսացել որոշակի հստակ տարբերությունները, մասնավորապես, աշխատանքի ամբողջ ծավալի բնույթով պայմանավորված կարգավիճակի առանձնահատկությունները, կողմերի աշխատանքի ծավալային անհամապատասխանությունը, ինչպես նաև աշխատանքի առանձնահատկություններից և վտանգներից բխող բովանդակային ոչ նույնականությունը:

Հետևաբար, ըստ պատասխանողի «կենսաթոշակի հաշվարկման, ինչպես նաև վերահաշվարկման ընտրությունը պետության հայեցողության սահմաններում է», քանի դեռ այն չի հակասում Սահմանադրության պահանջներին կամ Հայաստանի Հանրապետության կողմից միջազգայնորեն ստանձնած պարտավորություններին:

Պատասխանողը հայտնում է, որ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովման համակարգի ներկա իրավական կանոնակարգումները պայմանավորված են նաև երկրի ֆինանսատնտեսական և նյութական հնարավորություններով, ինչն օբյեկտիվորեն միտված է երաշխավորելու ՀՀ քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի լիարժեք և արժանապատիվ իրականացումը:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթը համապատասխանում է Սահմանադրության պահանջներին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում գործող տարբեր քննչական մարմինների քննիչների կարգավիճակների միջև օրենսդրական տարբերակում առկա է, թե ոչ,

- արդյո՞ք կենսաթոշակային ապահովության տեսանկյունից նշված պաշտոնատար անձանց միջև առկա օրենսդրական տարբերակումը համապատասխանում է Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի սկզբունքներին:

Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը քննում է Սահմանադրության 29 և 83-րդ հոդվածների համատեքստում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը համակարգային առումով փոխկապակցված է նույն Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի հետ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել նաև այդ դրույթի համապատասխանությունը Սահմանադրությանը:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի

1) (կետն ուժը կորցրել է 04.03.15 ՀՕ-14-Ն օրենքով)

2) Սահմանադրական դատարանի դատավորը

ա. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքում՝ անկախ տարիքից,

բ. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի

2-րդ կետով, 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում,

գ. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում.

2.1) Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում առնվազն հինգ տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են համապատասխանաբար դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ իր պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքով.

2.2) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

2.3) առնվազն մեկ ժամկետ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

3) դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարեցվել կամ դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

4) դատախազի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որը պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

5) հատուկ քննչական ծառայությունում առնվազն 10 տարի ծառայած ծառայողը, որը պաշտոնից ազատվել է «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-

րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

5.1) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում առնվազն 10 տարի ծառայած ծառայողը, որի լիազորությունները դադարել են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

6) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

7) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոն զբաղեցրած կամ հինգ տարի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

7.1) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնն զբաղեցրած կամ վեց տարի Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

8) սույն օրենքի հավելված N 1-ով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

9) Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, Կառավարության անդամները, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորները, Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամները, Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատի նախագահը, դատախազները, հատուկ քննչական ծառայության, քննչական կոմիտեի ծառայողները՝ իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում»:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Քննչական մարմինների, հավասարապես նաև քննիչների իրավական կարգավիճակի որոշիչ տարրերից մեկը՝ նրանց գործառույթը, իր ընդհանրական ամրագրումն է ստացել Սահմանադրության 178-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը:

Սահմանադրության նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

Սահմանադրության մեջ ընդգրկելով քննչական մարմինների վերաբերյալ դրույթներ՝ ըստ էության, ընդգծվել է մինչդատական վարույթում դրանց առնվազն գործառութային ինքնուրույնությունը:

Քննիչների կարգավիճակի հետ կապված հարաբերություններն իրենց կարգավորումն են ստացել նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածներում: Մասնավորապես, նշված օրենսգրքի 6-րդ հոդվածի 25-րդ կետի համաձայն՝ քննիչ է Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձը, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով կատարում է նախաքննություն:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝

«1. Քննիչը պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով իրականացնում է նախաքննություն:

2. Քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ և սույն օրենսգրքով սահմանված ենթակայության կանոններին համապատասխան գործն ընդունել իր վարույթ կամ քննության համար ուղարկել այլ քննիչի, իր վարույթում եղած գործի քննության ընթացքում հարուցել քրեական գործ, եթե հայտնաբերվել է նոր հանցագործության դեպք, որը կատարել է այլ անձ: Քննիչը նաև իրավասու է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան մերժել քրեական գործ հարուցելը: Քննիչը քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին՝ որոշման օրինականությունը ստուգելու նպատակով:

3. Քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական դատավարական օրենքով նախատեսվում է դատարանից ստանալ թույլտվություն: Քննիչը պատասխանատվություն է կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար»:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործերով նախաքննություն կատարում են Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների քննիչները: Նույն օրենսգրքի 190-րդ հոդվածը կարգավորում է քննչական ենթակայության կանոնները: Օրինակ՝ նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-164, 166-187, 190.1, 190.2, 191, 192, 195-201, 204, 212-214, 218, 222, 223, 225, 225.1, 227-232, 235-249 (բացառությամբ 235.1 հոդվածի), 251-298 (բացառությամբ 267.1 հոդվածի), 300, 300.1, 300.2, 301, 301.1, 308-328 (բացառությամբ 310.1 հոդվածի), 331-332.5, 336, 341, 341.1, 341.2, 343-345.1, 347-355 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են Քննչական կոմիտեի քննիչները:

Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի առանձին հոդվածներով (188, 189, 189.1, 193, 194, 202, 203, 205 (բացառությամբ մաքսային իրավահարաբերություններին վերաբերող հանցագործության), 207-211 հոդվածներ) նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննությունը կարող են կատարել ինչպես Քննչական կոմիտեի, այնպես էլ հարկային մարմինների քննիչները (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մաս):

Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված են նաև, այսպես կոչված, շարունակական ենթակայության կանոններ,

ըստ որոնց՝ քննչական մի մարմինը նախաքննություն է իրականացնում նաև քննչական այլ մարմինների քննությանը ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերով, եթե այդ հանցագործությունները բացահայտվել են իր վարույթում գտնվող գործի քննության ընթացքում (190-րդ հոդվածի 8 և 9-րդ մասեր):

Վերոնշյալ իրավանդումների վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր քննչական մարմինների քննիչների կարգավիճակը, ըստ էության, նույնն է. նրանք իրականացնում են Սահմանադրությամբ քննչական մարմիններին վերապահված գործառույթի (քրեական գործով նախաքննության) իրականացմանն ուղղված մասնագիտական գործունեություն:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև նշել, որ նախաքննության փուլում քրեական գործերի ենթակայությունը, որը, ինչպես հետևում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի բովանդակությունից, առանձին դեպքերում զուտ պայմանական բնույթ է կրում, որևէ էական ազդեցություն չի կարող գործել քննիչի կարգավիճակի վրա՝ ոչ նրա գործունեության ծավալի և ոչ էլ այդ գործունեության բովանդակության իմաստով, և, հավասարապես, չի կարող դիտարկվել որպես որևէ առավելության կամ արտոնության տրամադրման առումով տարբերակված մոտեցման համար օբյեկտիվ հիմնավորում:

4.2. Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, **սոցիալական**, իրավական պետություն է: Անձի սոցիալական ապահովության իրավունքն ամրագրված է Սահմանադրության 83-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Ինչպես նշել է Սահմանադրական դատարանն իր՝ 2014 թվականի ապրիլի 2-ի ՄԴՈ-1142 որոշման մեջ՝ սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է:

Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների քննիչների սոցիալական ապահովության, մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մի շարք իրավական ակտերով:

Այսպես «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողի կենսաթոշակային ապահովությունը, պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու կամ զոհվելու դեպքում քննչական կոմիտեի ծառայողի և նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունն իրականացվում է «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Օրենքի 2-րդ հոդվածի 5.1-ին կետի համաձայն՝ տվյալ օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում առնվազն 10 տարի ծառայած ծառայողը, որի լիազորությունները դադարել են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3 և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով:

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ «Սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնից ազատված ծառայողին նշանակվում է կենսաթոշակ, եթե նա քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակվել է սույն օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն և պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի մինչև **2017 թվականի հուլիսի 1-ը ձեռք բերած առնվազն 20 օրացուցային տարվա ծառայության ստաժ**:

Սույն մասով սահմանված ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են զինվորական ծառայության ժամանակահատվածը և քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը»:

«Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ Հատուկ քննչական ծառայության ծառայողի կենսաթոշակային ապահովությունը, պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու կամ զոհվելու դեպքում Հատուկ քննչական ծառայության ծառայողի և նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունն իրականացվում է «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ տվյալ օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի Հատուկ քննչական ծառայությունում առնվազն 10 տարի ծառայած ծառայողը, որը պաշտոնից ազատվել է «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով:

Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատված անձին:

Իսկ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերության համաձայն՝ «2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված այն անձանց, որոնք դատախազի կամ

հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակվել են մինչև 2017 թվականի հունիսի 1-ը «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելուց հետո»:

Օրենքով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող պաշտոնատար անձանց կենսաթոշակի չափի հաշվարկման ընդհանուր կարգը սահմանված է Օրենքի 5-րդ հոդվածում:

Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասում նշված կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող քննիչների (հատուկ քննչական ծառայության և քննչական կոմիտեի այն քննիչները, որոնք ընդգրկված չեն Օրենքի 2-րդ հոդվածում նշված սուբյեկտների կազմում և որոնց համապատասխան կենսաթոշակի իրավունքն ապահովվում է անցումային դրույթներով) կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը սահմանված է, համապատասխանաբար՝ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 3, 4 և 5-րդ պարբերություններում և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ պարբերությունում:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ազգային անվտանգության մարմիններում աշխատողների (ներառյալ քննչական մարմինների քննիչների) սոցիալական պաշտպանությունն իրականացվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան: Ազգային անվտանգության ծառայության քննչական մարմինների քննիչների կենսաթոշակի իրավունքի հետ կապված հարաբերությունները կարգավորված են, մասնավորապես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 18-րդ

հողվածի 1-ին մասով, ըստ որոնց՝ նշված մարմնի քննիչներին տրամադրվում է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ: Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Ի տարբերություն վերը թվարկված քննչական մարմինների՝ հարկային և մաքսային մարմինների քննիչների կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ընդհանուր հիմունքներով: Այսպես, «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասում ուղղակիորեն նշվում է, որ հարկային ծառայողների համար կենսաթոշակային տարիքը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով: Հարկ է նշել, որ մաքսային մարմնի քննիչների առնչությամբ որևէ հատուկ վերապահում «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նույնպես չի նախատեսում:

Վկայակոչված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքներով՝ Սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ Հայաստանի Հանրապետությունում պետական պաշտոններ զբաղեցնող անձանց առնչությամբ իրականացվող պետության սոցիալական քաղաքականությունը, մասնավորապես, վեճի առարկային առնչվող կենսաթոշակի իրավունքի իրացման ոլորտում, ի թիվս այլնի, ունի այն առանձնահատկությունը, որ առանձին կատեգորիայի պաշտոնատար անձանց համար, ելնելով նրանց կարգավիճակի կամ գործառույթների առանձնահատկություններից, օրենսդիրը սահմանել է ավելի բարձր սոցիալական երաշխիքներ և առավել բարենպաստ պայմաններով կենսաթոշակի իրավունք:

Ի թիվս այլոց՝ այդպիսիք են Հատուկ քննչական ծառայության, Քննչական կոմիտեի և Ազգային անվտանգության ծառայության մարմինների քննիչները: Սահմանադրական դատարանը նման եզրահանգման է եկել նշված քննիչների կենսաթոշակային տարիքի, կենսաթոշակի իրավունքի համար անհրաժեշտ աշխատանքային ստաժի, ինչպես նաև կենսաթոշակի չափի հաշվարկման կարգի (մասնավորապես՝ կենսաթոշակի չափի հաշվարկման ելակետային

գործակիցների) վերաբերյալ հատուկ օրենքների համապատասխան դրույթների համեմատական ուսումնասիրության արդյունքներով (տե՛ս Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5.1-ին մասերը, 5-րդ հոդվածը, 9-րդ հոդվածի 3-րդ մասը, «Քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասը, «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածը, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածը):

Միևնույն ժամանակ, չնայած քննիչների կարգավիճակով պայմանավորված՝ նրանց նկատմամբ իրականացվող սոցիալական քաղաքականության ընդհանուր մոտեցումներին, այդուհանդերձ, հարկային և մաքսային մարմինների քննիչների նկատմամբ օրենսդրությունը դրսևորել է տարբերակված մոտեցում այն առումով, որ վերոհիշյալ մարմինների քննիչների համեմատությամբ նրանց համար սահմանել է նվազ բարենպաստ պայմաններով կենսաթոշակի իրավունք կամ, այլ կերպ՝ հարկային և մաքսային մարմինների քննիչներն ընդգրկված չեն հատուկ առավել բարենպաստ պայմաններով կենսաթոշակի իրավունք ունեցող սուբյեկտների կազմում և կենսաթոշակային իրավունքից օգտվում են ընդհանուր հիմունքներով:

Դրանից բացի, օրենսդիրն առավել բարենպաստ պայմաններով կենսաթոշակի իրավունք նախատեսելիս տարբերակված մոտեցում է ցուցաբերել նաև Հատուկ քննչական ծառայության և Քննչական կոմիտեի քննիչների միջև: Մասնավորապես, չնայած նրան, որ, ըստ էության, և՛ Հատուկ քննչական ծառայության, և՛ Քննչական կոմիտեի քննիչների համար սահմանվել են բարձր սոցիալական երաշխիքներ, միևնույն ժամանակ համապատասխան ստաժ ունեցող Հատուկ քննչական ծառայության քննիչների՝ կենսաթոշակի իրավունքի համար անհրաժեշտ աշխատանքային ստաժը հաշվարկվում է **2014թ. հուլիսի 1-ի** դրությամբ (համաձայն վիճարկվող դրույթի), իսկ Քննչական կոմիտեի քննիչների՝ **2017թ. հուլիսի 1-ի** դրությամբ (համաձայն «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի), **ինչի արդյունքում վերջիններս ակնհայտ ավելի բարենպաստ վիճակում են հայտնվում, քան նույն պայմաններում Հատուկ քննչական ծառայության քննիչները:**

4.3. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կենսաթոշակային ապահովության ոլորտում օրենսդրությունը տարբերակված մոտեցում է ցուցաբերել Քննչական կոմիտեի և Հատուկ քննչական ծառայության, ինչպես նաև Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, Ազգային անվտանգության ծառայության և հարկային կամ մաքսային մարմինների քննիչների միջև, Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորումները դիտարկել Մահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով նախատեսված խտրականության արգելքի սկզբունքի տեսանկյունից:

Մահմանադրության «Խտրականության արգելքը» վերտառությամբ 29-րդ հոդվածով սահմանվում է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությունը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Անձի նկատմամբ տարբերակված, խտրական վերաբերմունքի վերաբերյալ Մահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (ՄԴՈ-731),

- Մահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (ՄԴՈ-881),

- խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք գրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (ՄԴՈ-1224):

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ խտրականության արգելքն ամրագրող 14-րդ հոդվածով սահմանվում է, որ կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից: ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի միջև:

Ըստ Եվրոպական դատարանի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել: Մասնավորապես, իր վճիռներից մեկում (Andrejeva v. Latvia (GC 18.02.2009, 55707/00, § 81) Եվրոպական դատարանը նշել է. «... տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին»:

Թեև Մահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրին է վերապահված անձի սոցիալական ապահովության, մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքի բովանդակությունը (օրինակ՝ կենսաթոշակի չափը, նշանակման և վճարման կարգը և այլն) որոշակիացնելու լիազորությունը, այդուհանդերձ, Մահմանադրությունը, ի թիվս այլնի, նախ **բացառում է այս իրավունքն ընդհանրապես օրենքով չերաշխավորելը**, այսինքն՝ օրենսդիրը պարտավոր է կենսաթոշակի իրավունքը երաշխավորող օրենք ընդունել: Բացի դրանից, նման օրենքը պետք է լինի որոշակի, կանխատեսելի, չխախտի իրավահավասարության, խտրականության արգելքի սկզբունքները:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Քննչական կոմիտեի և Հատուկ քննչական ծառայության, ինչպես նաև Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, Ազգային անվտանգության ծառայության և հարկային կամ մաքսային մարմինների քննիչների սոցիալական ապահովության, տվյալ դեպքում՝ կենսաթոշակի իրավունքի իրացմանն ուղղված մոտեցումները պետք է համահունչ լինեն քննիչի կարգավիճակով պայմանավորված նրանց նկատմամբ իրականացվող սոցիալական քաղաքականության ընդհանուր մոտեցումներին՝ հաշվի առնելով պետական իշխանության մարմինների համակարգում համապատասխան քննչական մարմինների ինստիտուցիոնալ դիրքից բխող առանձնահատկությունները:

Սոցիալական ապահովության ոլորտի վերաբերյալ օրենսդրությունն ընդհանուր առմամբ երաշխավորում է Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր քննչական մարմինների կենսաթոշակի իրավունքը: Միևնույն ժամանակ, օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ հարկային և մաքսային մարմինների քննիչների համար երաշխավորված կենսաթոշակի իրավունքը չի արտացոլում քննիչների կարգավիճակով պայմանավորված նրանց նկատմամբ իրականացվող սոցիալական քաղաքականության ընդհանուր մոտեցումները, իսկ Հատուկ քննչական ծառայության և Քննչական կոմիտեի քննիչներին կենսաթոշակ նշանակելու հարցում Հատուկ քննչական ծառայության քննիչների համեմատությամբ Քննչական կոմիտեի քննիչների համար (ովքեր Քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակվել են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն և պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունեն մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը ձեռք բերած առնվազն 20 օրացուցային տարվա ծառայության ստաժ) օրենսդիրը նախատեսել է կենսաթոշակի հաշվարկման կարգի վերաբերյալ առավել բարենպաստ իրավակարգավորում:

Այսպիսով, մի կողմից՝ հարկային և մաքսային մարմիններում աշխատող քննիչներին սոցիալական քաղաքականության ընդհանուր շրջանակից բացառելը, մյուս կողմից՝ Հատուկ քննչական ծառայության և Քննչական կոմիտեի քննիչների կենսաթոշակի իրավունքի համար անհրաժեշտ աշխատանքային ստաժի հաշվարկման համար տարբեր պայմաններ սահմանելը նույն կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված մոտեցումներ են,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)2019

որոնց համար որևէ օբյեկտիվ և ողջամիտ չափանիշ առկա չէ, դրանք հիմնավորված չեն և չեն հետապնդում իրավաչափ նպատակներ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը՝ դրանում ընդգրկված սուբյեկտների կազմում հարկային և մաքսային մարմինների քննիչներին չներառելու մասով, ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին հակասող:

2. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը՝ այնքանով, որքանով Հատուկ քննչական ծառայության քննիչների համար Քննչական կոմիտեի քննիչների համեմատ նվազ բարենպաստ պայմաններով կենսաթոշակի իրավունք է սահմանում, ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին հակասող:

3. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված 2-րդ հոդվածի 1-ին մասը՝ դրանում ընդգրկված սուբյեկտների կազմում հարկային և մաքսային մարմինների քննիչներին չներառելու մասով, ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին հակասող:

4. Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին վիճարկվող դրույթները Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության համար,

որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ իրավական ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

12 փետրվարի 2019 թվականի
ՍԴՈ-1443



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 17-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԵՎ ԻՐ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՄ
ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 փետրվարի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Բաբայանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի մայիսի 17-ին Աստանայում ստորագրված Եվրասիական տնտեսա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)2019

կան միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Մահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 25-ին Մահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Մահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի մայիսի 17-ին Աստանայի տնտեսական համաժողովի շրջանակներում:

Համաձայնագիրը կոչված է պետական կարգավորման տարբեր ուղղություններով ապահովելու փոխգործակցության այնպիսի մեխանիզմներ, որոնք միտված են առավելագույնս հաշվի առնել Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) ընդհանուր և յուրաքանչյուր անդամ պետության, ինչպես նաև գործարարության շահերը, կարգավորման թափանցիկությունն ու կանխատեսելիությունը ազգային և վերազգային մակարդակներում:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վերահաստատել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավունքներն ու պարտավորությունները՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) համաձայնագրի, ինչպես նաև այն երկկողմ համաձայնագրերի համաձայն, որոնց կողմերն են Հայաստանի Հանրապետությունը և Չինաստանը (Հոդված 1.4, մաս 1),

- համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն՝ ապահովել Համաձայնագրի և վերջինիս ուժի մեջ մտնելու օրվանից հետո ուժի մեջ մտնող միջազգային այն համաձայնագրերի վերաբերյալ տեղեկությունների ժամանակին հրապարակումը կամ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)2019

ազատ մատչելիությունը, ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը (Հոդված 2.2, մաս 1),

- Համաձայնագրի գործողությանն առնչվող՝ ընդհանուր կիրառության բոլոր միջոցները կիրառել միասնական, անաչառ և ողջամիտ կերպով (Հոդված 2.3, մաս 1),

- ունենալ կամ հնարավորինս շուտ ձևավորել դատական, արբիտրաժային կամ վարչական տրիբունալներ կամ ընթացակարգեր, *inter alia*, մաքսային հարցերին առնչվող վարչական միջոցի արագ վերանայման և ուղղման նպատակով: Նման տրիբունալները կամ ընթացակարգերը պետք է անկախ լինեն այն գերատեսչություններից, որոնց վերապահված է վարչական իրավունքի նորմերի կիրառումը (Հոդված 2.3, մաս 2),

- ձգտել Չինաստանին ծանուցել ցանկացած այնպիսի միջոցի վերաբերյալ տեղեկության մասին, որը Չինաստանը համարում է, որ կարող է զգալիորեն ազդել Համաձայնագրի գործողության վրա (Հոդված 2.4, մաս 1),

- Չինաստանի պահանջով ընդունված կամ ընդունելու համար նախատեսված ընդհանուր կիրառության ցանկացած միջոցի վերաբերյալ տրամադրել անհրաժեշտ տեղեկություն և պատասխանել համապատասխան հարցերին: Համաձայնագրի 2.4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պահանջված տեղեկությունը տրամադրել ոչ ուշ, քան պահանջն ստանալու օրվանից 45 օրվա ընթացքում (Հոդված 2.4, մաս 3),

- կիրառել հակազնազցման, փոխհատուցման և պաշտպանության միջոցներ (Հոդված 3.1),

- Չինաստանին տրամադրել իր տարածքում հակազնազցման, փոխհատուցման և պաշտպանական միջոցների ընդունումն ու կիրառումը կարգավորող՝ տվյալ պահին գործող օրենքներն ու կարգավորումները (Հոդված 3.2, մաս 1),

- ապահովել տեղեկատվության ժամանակին փոխանակումը հակազնազցման, փոխհատուցման և պաշտպանական միջոցների ընդունման ու կիրառման ոլորտում, ներառյալ մեթոդաբանությունն ու փորձը (Հոդված 3.4, մաս 1),

- կանոնավոր կերպով ապահովել հակազնազցման, փոխհատուցման ու պաշտպանական միջոցների ներդրման ու կիրառման միջազգային պրակտիկայի, ինչպես նաև դրա զարգացման վերաբերյալ տեղեկատվության և կարծիքների փոխանակում (Հոդված 3.4, մաս 2),

- ձեռնարկել այնպիսի ողջամիտ միջոցներ, որոնք կարող են հասանելի լինել այն տեղական կառավարման մարմինների և ոչ պետական մարմինների կողմից Համաձայնագրի 4-րդ գլխի դրույթների կատարումը Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովելու համար, որոնք պատասխանատու են ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգերի պատրաստման, ընդունման և կիրառման համար (Հոդված 4.3, մաս 2),

- ապահովել ընդունված տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի անհապաղ հրապարակումը կամ ապահովել դրանց հասանելիությունն այնպես, որ Չինաստանի շահագրգիռ անձինք հնարավորություն ունենան ծանոթանալու դրանց (Հոդված 4.5, մաս 6),

- ձգտել ստեղծել և պահպանել այնպիսի մեխանիզմներ, որոնց հիման վրա կարող է ապահովվել ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի աստիճանական համապատասխանեցումը, *inter alia*, Համաձայնագրի 4.6-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված միջոցներով (Հոդված 4.6, մաս 4),

- ընդունել սանիտարական և բուսասանիտարական միջոցների մշակման ու կիրառման թափանցիկության կարևորությունը, *inter alia*, Հայաստանի Հանրապետության սանիտարական և բուսասանիտարական համապատասխան միջոցների վերաբերյալ ժամանակին տեղեկություն փոխանակելու միջոցով (Հոդված 5.5, մաս 1),

- պետական սահմանի անցման կետում Չինաստանի տարածքից արտահանված՝ սանիտարական կամ բուսասանիտարական պահանջներին չհամապատասխանող ապրանքները արգելապահելու դեպքում արգելապահման պատճառների մասին գրավոր տեղեկացնել ներմուծողին կամ ներմուծողի (փոխադրողի) ներկայացուցչին (Հոդված 5.5, մաս 5),

- կողմերի միջև ապրանքների առևտրի ժամանակ կատարվող ծախսերը և անհարկի ձգձգումները նվազեցնելու նպատակով կիրառել արդյունավետ, անհրաժեշտության դեպքում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանող մաքսային ընթացակարգեր (Հոդված 6.3, մաս 2),

- սահմանել կողմերի միջև շրջանառվող ապրանքների մաքսային արժեքը՝ ԱՀԿ համաձայնագրի, այդ թվում՝ «Մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի համապատասխան դրույթներին համապատասխան (Հոդված 6.4),

- կողմերի միջև շրջանառվող ապրանքների նկատմամբ կիրառել ապրանքների անվանացանկերը (Հոդված 6.5),
- ընդունել կամ շարունակել պահպանել ռիսկերի կառավարման համակարգ՝ մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով (Հոդված 6.6, մաս 1),
- մշակել ու իրականացնել ռիսկերի կառավարման գործընթացն այնպես, որ հնարավոր լինի խուսափել կամայական կամ չարդարացված խտրականությունից կամ միջազգային առևտրի քողարկված սահմանափակումներից (Հոդված 6.6, մաս 2),
- կենտրոնացնել մաքսային հսկողությունը և հնարավորության սահմաններում՝ սահմանային վերահսկողության մյուս համապատասխան միջոցները, բարձր ռիսկայնության բեռների նկատմամբ, և արագացնել ցածր ռիսկայնության բեռների բացթողումը և ռիսկի կառավարումն իրականացնել համապատասխան ընտրողականության չափորոշիչների միջոցով կատարված ռիսկերի գնահատման հիման վրա (Հոդված 6.6, մասեր 3 և 4),
- սահմանել կամ շարունակել կիրառել ապրանքների արդյունավետ բացթողմանն ուղղված պարզեցված մաքսային ընթացակարգեր՝ կողմերի միջև առևտուրը դյուրացնելու նպատակով (Հոդված 6.9, մաս 1),
- ապահովել ապրանքներն էլեկտրոնային եղանակով հայտարարագրելու հայտարարատուների հնարավորությունը (Հոդված 6.14, մաս 2),
- միջազգային հանձնառություններին համապատասխան՝ ձգտել մշակել և իրականացնել «Մեկ պատուհանի» ազգային համակարգը առևտրի դյուրացմանը և մաքսային տեխնիկական միջոցների և գործելակերպի արդիականացմանն առնչվող միջազգային չափորոշիչներին ու լավագույն գործելակերպի համաձայն (Հոդված 6.15, մաս 1),
- ապահովել, որ սահմանային վերահսկողության և ապրանքների ներմուծմանը, արտահանմանը և տարանցմանն առնչվող ընթացակարգերի իրականացման համար պատասխանատու մարմինները և գործակալությունները համագործակցեն միմյանց հետ և համակարգեն իրենց գործողությունները՝ առևտուրը դյուրացնելու նպատակով (Հոդված 6.16),

- նշանակել հարցումներով զբաղվող մեկ կամ մեկից ավելի կենտրոններ՝ շահագրգիռ անձանց կողմից մաքսային հարցերի վերաբերյալ հարցումներն ստանալու նպատակով, և նման հարցումների իրականացման ընթացակարգերի մասին տեղեկատվությունը հրապարակել համացանցում (Հոդված 6.21, մաս 1),

- օրենքների և այլ կարգավորումների համաձայն՝ ապահովել, որ ներմուծողը, արտահանողը կամ որևէ այլ անձ, որի վրա տարածվում են մաքսային հարցերին առնչվող վարչական որոշումները, ունենա դրանք վարչական և դատական կարգով վերանայելու մատչելիություն (Հոդված 6.22),

- Չինաստանի քաղաքացիների համար ապահովել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար ապահովվող մոտեցումից ոչ պակաս բարենպաստ մոտեցում (Հոդված 7.4),

- տրամադրել համարժեք իրավական պաշտպանություն և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ այն տեխնոլոգիական միջոցների շրջանցման դեմ պայքարելու համար, որոնք օգտագործվում են հեղինակների, կատարողների կամ հնչյունագրեր արտադրողների կողմից իրենց իրավունքներն իրականացնելու համար (Հոդված 7.7, մաս 1),

- սահմանել այնպիսի տեխնոլոգիայի, տեխնիկական սարքավորման կամ դրա բաղադրիչների դիտավորյալ արտադրության, ներմուծման կամ հասարակությանը հասանելի դարձնելու իրավական արգելքներ, որոնք հիմնականում օգտագործվում են աշխատանքների, կատարումների կամ հնչյունագրերի նկատմամբ կիրառվող տեխնոլոգիական միջոցները շրջանցելու կամ վնասելու համար (Հոդված 7.7, մաս 2),

- ապահովել ապրանքների և ծառայությունների ապրանքային նշանների համարժեք և արդյունավետ պաշտպանություն՝ օրենքների, կանոնակարգերի և այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը (Հոդված 7.9, մաս 1),

- ապրանքային նշանների առնչությամբ ապահովել Չինաստանի շահագրգիռ անձանց համար իրավական միջոցներ՝ առանց իրավատիրոջ թույլտվության վերջինիս ապրանքային նշանին նույնական կամ շփոթելու աստիճան նման նշանների օգտագործումը կանխելու նպատակով (Հոդված 7.9, մաս 3),

- ապահովել ապրանքների ծագման տեղանունների համարժեք և արդյունավետ իրավական պաշտպանություն՝ ներպետական օրենքներին, կանոնակարգերին համապատասխան (Հոդված 7.12, մաս 1),

- ապահովել գյուտերի համարժեք ու արդյունավետ իրավական պաշտպանություն՝ համապատասխան օրենքների, կանոնակարգերի և այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը (Հոդված 7.15, մաս 1),

- ապահովել արդյունաբերական նմուշների պատշաճ և արդյունավետ իրավական պաշտպանություն՝ համապատասխան օրենքների, կանոնակարգերի և այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը (Հոդված 7.16),

- ապահովել ինտեգրալ միկրոսխեմաների դիզայնի նախագծերի (տոպոլոգիաների) պատշաճ և արդյունավետ իրավական պաշտպանություն՝ համապատասխան օրենքների, կարգավորումների և այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը (Հոդված 7.19),

- ճանաչել գենետիկական ռեսուրսների, ավանդական գիտելիքների և բանահյուսության ներդրումը գիտական, մշակութային և տնտեսական զարգացման հարցում (Հոդված 7.20, մաս 1),

- ապահովել պատշաճ և արդյունավետ պաշտպանություն բույսերի նոր սորտերի սելեկցիոներների համար (Հոդված 7.21),

- ապահովել պաշտպանություն անբարեխիղճ մրցակցությունից (Հոդված 7.22),

- ապահովել մտավոր սեփականության օբյեկտների գրանցման համար պահանջվող փաստաթղթերի և տվյալների հասանելիությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և կանոնակարգերին համապատասխան (Հոդված 7.23),

- ստեղծել կապի ապահովման կենտրոններ՝ կեղծված ապրանքների առևտրի վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու համար և, մասնավորապես, խթանել տեղեկատվության փոխանակումը և համագործակցությունը կողմերի մաքսային մարմինների միջև (Հոդված 7.25, մաս 7),

- ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ Չինաստանի հետ առևտրի և ներդրումների վրա ազդող հակամրցակցային գործելակերպը կանխելու և արգելելու նպատակով (Հոդված 8.1, մաս 2),

- ապահովել, որ մրցակցային իրավունքի կիրառմանն ուղղված՝ Չինաստանի գործունեության նկատմամբ չդրսևորվի խտրական վերաբերմունք՝ ազգային պատկանելության հիմքով (Հոդված 8.2, մաս 1),

- ապահովել, որ անձը, որին ուղղված է մրցակցային իրավունքի կիրառմանն ուղղված գործունեությունը, հնարավորություն ունենաներ կայացնելու կարծիք կամ ապացույց ի պաշտպանություն իրեն (Հոդված 8.2, մաս 2),

- ապահովել, որ անձը, ում նկատմամբ տվյալ մրցակցային օրենքների և կանոնակարգերի խախտման առնչությամբ որոշում է կայացվում, ունենա համապատասխան ընթացակարգերի միջոցով այդ որոշումը վերանայելու հնարավորություն (Հոդված 8.2, մաս 3),

- պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և կանոնակարգերի համաձայն համացանցում հրապարակել Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներն ու կանոնակարգերը, ընդհանուր կիրառության վարչական ակտերը և պետական գնումների մրցույթների մասին այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են՝ գնման հայտի վերաբերյալ հայտարարությունները, գնումների վերաբերյալ փաստաթղթերը և մրցույթների արդյունքները՝ բացառությամբ գաղտնի տեղեկությունների (Հոդված 9.2),

- զարգացնել ոլորտային համագործակցությունը՝ հաշվի առնելով տնտեսության տարբեր հատվածներին առնչվող ռազմավարությունը և զարգացման ծրագրերը՝ չսահմանափակելով այս ոլորտում ԵՍՄ անդամ պետությունների և Չինաստանի՝ գոյություն ունեցող կամ ծրագրվող երկկողմ համագործակցության նախաձեռնությունները (Հոդված 10.1, մաս 3),

- ընդունել էլեկտրոնային առևտրի (այսուհետ՝ էլ. առևտուր) դինամիկ ու նորարարական բնույթը, ինչը դրական ազդեցություն ունի կողմերի միջև փոխադարձ առևտրի աճի վրա և շահավետ է առևտրի բոլոր մասնակիցների համար (Հոդված 11.1, մաս 1),

- աշխատել էլեկտրոնային հաստատման մեթոդների փոխադարձ ճանաչման ուղղությամբ և էլեկտրոնային հաստատման մեթոդների փոխադարձ ճանաչման գործընթացն արագացնելու նպատակով համագործակցել և իրականացնել լավագույն փորձի փոխանակում, ինչի արդյունքում ապահովվում է տվյալների լիարժեք պաշտպանությունն ու հավաստիությունը (Հոդված 11.3),

- Հայաստանի Հանրապետության համապատասխան քաղաքականության, օրենքների ու կանոնակարգերի շրջանակում ընդունել կամ պահպանել այնպիսի միջոցներ, որոնք թույլ են տալիս կանխել սպառողներին վնասող կամ սպառողներին վնաս հասցնելու վտանգ ստեղծող կեղծ առևտրային գործողությունները (Հոդված 11.5, մաս 2),

- ընդունելով էլ. առևտրի ոլորտում անձնական տվյալների պաշտպանության կարևորությունը՝ ձեռնարկել միջոցներ ուղղված անձնական տվյալների լիարժեք պաշտպանության ապահովմանը (Հոդված 11.6, մաս 1),

- ձգտել ապահովել անձնական տվյալների միջսահմանային փոխանցման համար անհատի՝ ուղղակիորեն արտահայտած համաձայնության ձեռքբերումը (Հոդված 11.6, մաս 2),

- Հայաստանի Հանրապետության պաշտոնական կայքերում հրապարակել Համաձայնագրի 11-րդ գլխի գործողությանը վերաբերող կամ դրա գործողության վրա ազդող քաղաքականության մասին տեղեկատվություն, բոլոր համապատասխան օրենքները և կանոնակարգերը՝ մինչև դրանց ուժի մեջ մտնելը (Հոդված 11.8):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին, մասնավորապես՝ նպատակաուղղված են պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի մայիսի 17-ին Աստանայում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

12 փետրվարի 2019 թվականի
ՍԴՈ-1444



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 թվականի ՄԱՅԻՄԻ 17-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՈՒ ԴՐԱ ԱՆԴԱՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՄՅՈՒՍ
ԿՈՂՄԻՑ, ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒ ԶԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 փետրվարի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Բաբայանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)/2019

դոնբասց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի մայիսի 17-ին Աստանայում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված ժամանակավոր համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2018 թվականի դեկտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված ժամանակավոր համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի մայիսի 17-ին Աստանայի տնտեսական համաժողովի շրջանակներում:

Համաձայնագիրը կոչված է ստեղծելու բարենպաստ միջավայր և պայմաններ կողմերի միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև փոխադարձ շահ ներկայացնող ոլորտներում՝ տնտեսական համագործակցության զարգացման համար:

Առավել բարենպաստ ռեժիմի ապահովման նպատակով Համաձայնագրով նախատեսվում են կողմերի պարտավորությունների, ազգային ռեժիմի, ապրանքների արտահանման ու ներմուծման գործընթացների շրջանակներում կիրառվող կանոնակարգերի թափանցիկություն և պաշտպանվածություն:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազեցնել և (կամ) չեղարկել Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված ապրանքների ներմուծման դեպքում կիրառվող մաքսատուրքերն ու վճարները կամ համարժեք ազդեցություն ունեցող այլ միջոցները (Հոդված 1.3, մաս 1),

- ստեղծել Համատեղ կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե), որը ներառում է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության ներկայացուցիչներին (Հոդված 1.5, մաս 1),

- ստեղծել կապի ապահովման կենտրոն կամ կենտրոններ՝ Համաձայնագրի հետ կապված ցանկացած հարցի շուրջ կողմերի միջև փոխգործակցությունը պարզեցնելու համար (Հոդված 1.6 մաս 1),

- ապահովել Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Համաձայնագրի շրջանակներում որպես գաղտնի տեղեկատվություն տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (Հոդված 1.7, մաս 1),

- Համաձայնագրի 1.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանափակումներ կիրառելիս խուսափել ցանկացած այլ Կոմիտե առևտրային ու տնտեսական շահերին անհարկի վնաս հասցնելուց, չկիրառել այնպիսի սահմանափակումներ, որոնք ուղղված են որևէ ապրանքի առևտրում ընդունված նվազագույն քանակությամբ ներմուծումը չարդարացված ձևով խոչընդոտելուն, ինչը բացասաբար կանդրադառնա մշտական առևտրային կապերի վրա, և չկիրառել այնպիսի սահմանափակումներ, որոնք կարող են խոչընդոտել առևտրային նմուշների ներմուծումը կամ արտոնագրերի, ապրանքային նշանների, հեղինակային իրավունքի կամ համանման ընթացակարգերի վերաբերյալ դրույթների պահպանումը (Հոդված 1.10, մաս 3, կետ գ),

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ապահովել, որ Համաձայնագրի գործողության շրջանակներում գտնվող ցանկացած հարցին առնչվող ընդհանուր կիրառության օրենքներն ու նորմատիվ այլ ակտերն անհապաղ հրապարակվեն կամ այլ կերպ հասանելի լինեն, որպեսզի շահագրգիռ անձանց ու Իրանի Իսլամական Հանրապետությանը հնարավորություն տրվի ծանոթանալու դրանց, հնարավորության դեպքում՝ նաև էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև փոխանակել համապատասխան պաշտոնական հրապարակումների և էլեկտրոնային զանգվածային լրատվության միջոցների ցանկերը (Հոդված 1.11, մաս 1),

- ապահովել, որ Իրանի Իսլամական Հանրապետության պահանջով, օպերատիվ կերպով ներկայացվի տեղեկատվություն և պատասխան տրվի ցանկացած գործող կամ նախատեսվող օրենքին, նորմատիվ այլ ակտին, ընթացակարգին կամ ընդհանուր կիրառության վարչական ակտին առնչվող հարցերին՝ անկախ այն հանգամանքից, թե հարցում կատարող Կողմը նախապես ծանուցվել է այդ մասին, թե ոչ, ինչպես նաև նշված տեղեկատվությունը տրամադրել անգլերենով՝ հարցումն ստանալու օրվանից 45-օրյա ժամկետում (Հոդված 1.11, մաս 3),

- ապահովել Իրանի Իսլամական Հանրապետությունից կատարվող ներմուծման գործընթացին ներկայացվող պահանջների հատկությունն ու թափանցիկությունը և Իրանի Իսլամական Հանրապետության արտահանողների համար հրապարակել ներմուծման կարգավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվող մանրամասն ձեռնարկը՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում: Վերոնշյալ ձեռնարկը պետք է կազմվի անգլերենով և հրապարակվի համընդհանուր ծանոթացման համար, այդ թվում՝ բոլորի համար հասանելի անվճար պաշտոնական կայքում (Հոդված 1.11, մաս 4),

- Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից ձեռնարկել ընդհանուր և հատուկ բնույթի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Համաձայնագրին համապատասխան Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումն ապահովելու համար, և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան օրենսդրության մեջ կատարել ուղղումներ՝ Համաձայնագրի դրույթներին այն համապատասխանեցնելու նպատակով (Հոդված 1.12),

- ապահովել, որ ցանկացած տեսակի մաքսատուրքերի և վճարների մասով, որոնք կիրառվում են ներմուծման կամ արտահանման նկատմամբ կամ կապակցությամբ, կամ կիրառվում են ներմուծման կամ արտահանման դիմաց վճարումների միջազգային փոխանցման նկատմամբ, և այդպիսի տուրքերի ու վճարների գանձման միջոցի մասով, ինչպես նաև ներմուծման և արտահանման հետ կապված բոլոր կանոնների ու ձևականությունների մասով և Համաձայնագրի 2.2 հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերում նշված բոլոր հարցերի մասով, որևէ այլ երկրի տարածքում արտադրված կամ դրա համար նախատեսված որևէ ապրանքի համար Հայաստանի Հան-

րապետության կողմից տրամադրվող ցանկացած առավելություն, արտոնություն, առանձնաշնորհում կամ ազատում անհապաղ և անվերապահորեն տրամադրվի Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում արտադրված կամ դրա համար նախատեսված նմանատիպ ապրանքների համար (Հոդված 2.1, մաս 1),

- ապահովել, որ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքները ոչ ուղղակի և ոչ էլ անուղղակի կերպով չենթարկվեն ներքին հարկման կամ ցանկացած բնույթի այլ ներքին վճարների, որոնք գերազանցում են նմանատիպ ներքին ապրանքների նկատմամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառվող ներքին հարկերն ու վճարները (Հոդված 2.2, մաս 2),

- իրանական կողմի տարածքից ներմուծվող ապրանքների համար ապահովել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան ազգային ծագում ունեցող նմանատիպ ապրանքների համար տրամադրվող ռեժիմը՝ դրանց ներքին վաճառքին, վաճառքի, գնման, փոխադրման, բաշխման կամ օգտագործման վերաբերյալ առաջարկներին առնչվող բոլոր օրենքների, նորմատիվ այլ ակտերի ու պահանջների առումով (Հոդված 2.2, մաս 3),

- ապահովել, որ չսահմանվի և չպահպանվի որևէ ներքին քանակական սահմանափակում ապրանքների համակցման, մշակման կամ որոշակի քանակությամբ ու մասնաբաժիններով օգտագործման համար, որով ուղղակիորեն կամ անուղղակի պահանջվում է, որ սահմանափակման ենթակա ապրանքի որոշակի քանակություն կամ մասնաբաժին մատակարարվի ներքին աղբյուրներից (Հոդված 2.2, մաս 4),

- իրանական ծագում ունեցող ապրանքների առնչությամբ տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որ սահմանվել է Համաձայնագրի 1-ին հավելվածում՝ դրա սակագնային պարտավորությունների ցանկին համապատասխան (Հոդված 2.3, մաս 1),

- ապահովել, որ բոլոր վճարումներն ու ցանկացած բնույթի վճար (բացի Համաձայնագրի 2.2 հոդվածին համապատասխան ներմուծման ու արտահանման տուրքերից և հարկերից), որոնք Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են ներմուծման կամ արտահանման նկատմամբ կամ կապակցությամբ, սահմանափակվեն մատուցված ծառայությունների մոտավոր արժեքի չափով և չհան-

դիսանան միջնորդավորված սատարում ներքին ապրանքների կամ ներմուծման կամ արտահանման հարկում՝ հարկաբյուջետային նպատակով (Հոդված 2.5, մաս 1, ենթակետ ա),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն իրենց պաշտոնական կայքերում ծանոթացման համար հրապարակեն տեղեկատվություն իրենց կողմից կիրառվող տուրքերի ու վճարների վերաբերյալ (Հոդված 2.5, մաս 5),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կողմից գործողության մեջ դրվող ընդհանուր կիրառության օրենքները, նորմատիվ այլ ակտերը, դատական վճիռներն ու վարչական որոշումները, որոնք կապված են մաքսային նպատակներով ապրանքների դասակարգման կամ արժեքի որոշման կամ մաքսային դրույքաչափերի, հարկերի կամ այլ վճարների, ինչպես նաև ներմուծման կամ արտահանման, կամ դրանց դիմաց վճարումների փոխանցման նկատմամբ պահանջների, սահմանափակումների արգելքների հետ, կամ որոնք ազդեցություն ունեն վաճառքի, բաշխման, փոխադրման, ապահովագրության, պահեստում տեղաբաշխման, ստուգման, ցուցադրման, վերամշակման, համակցման կամ այլ օգտագործման վրա, անհետաձգելիորեն հրապարակվեն այնպես, որ իշխանություններն ու առևտրային ընկերությունները կարողանան ծանոթանալ դրանց: Հրապարակման ենթակա են նաև միջազգային առևտրի քաղաքականության վրա ազդեցություն ունեցող համաձայնագրերը, որոնք գործում են կառավարության և գերատեսչությունների միջև (Հոդված 2.6, մաս 1),

- առավելագույնս կարճ ժամկետում պահպանել կամ հիմնել դատական, արբիտրաժային կամ վարչական տրիբունալներ կամ ընթացակարգեր, մասնավորապես մաքսային հարցերին առնչվող վարչական գործողության անհապաղ վերանայման և շտկման նպատակով (Հոդված 2.6, մաս 3, կետ բ),

- Իրանի Իսլամական Հանրապետության տարածքից որևէ ապրանքի ներմուծման կամ Իրանի Իսլամական Հանրապետության տարածք որևէ ապրանքի արտահանման համար արգելքներ կամ սահմանափակումներ չկիրառել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բոլոր երրորդ երկրներից համանման ապրանքների ներմուծումը կամ բոլոր երրորդ երկրներ համանման ապրանքների արտահանումը համանման կերպով արգելված կամ սահմանափակված է (Հոդված 2.7, մաս 3),

- ապահովել, որ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք կամ տարածքից տարանցիկ փոխադրումների համար բոլոր վճարներն ու կանոնները ողջամիտ լինեն՝ հաշվի առնելով փոխադրման պայմանները (Հոդված 2.8, մաս 4),

- տարանցման հետ կապված բոլոր վճարների, կանոնների ու ընթացակարգերի մասով Իրանի Իսլամական Հանրապետության տարածքից կամ տարածքով անցնող տարանցիկ փոխադրումների առնչությամբ տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը տրամադրվում է ցանկացած երրորդ երկիր կամ երկրից տարանցիկ փոխադրման առնչությամբ (Հոդված 2.8, մաս 5),

- ապահովել հակազնազցման և փոխհատուցման միջոցների կիրառումը՝ հակազնազցման ու փոխհատուցման միջոցների կիրառման կարգը կարգավորող օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ Համաձայնագրի 3-րդ գլխով նախատեսված դեպքերի (Հոդված 3.2, մաս 1),

- կիրառել հատուկ պաշտպանական միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ Համաձայնագրի 3-րդ գլխով (Հոդված 3.3, մաս 1),

- ապահովել դրանց կիրառումը ներմուծվող ապրանքի նկատմամբ՝ անկախ արտահանող երկրից (Հոդված 3.3, մաս 4),

- ապահովել հատուկ պաշտպանական քննության արդար, թափանցիկ և արդյունավետ ընթացակարգեր (Հոդված 3.3, մաս 8),

- անհապաղ ծանուցել Իրանի Իսլամական Հանրապետությանը, եթե.

ա) սկսվում է հատուկ պաշտպանության քննություն,

բ) տրվում է նախնական և (կամ) վերջնական եզրակացություն՝ ներմուծման ավելացված ծավալի հետևանքով առաջացած լուրջ վնասի կամ դրա վտանգի վերաբերյալ,

գ) ընդունվում է որոշում՝ հատուկ պաշտպանական միջոց կիրառելու կամ դրա գործողությունը երկարաձգելու վերաբերյալ (Հոդված 3.3, մաս 9),

- պաշտպանական միջոց կիրառելու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու մտադրություն ունենալու դեպքում իրանական Կողմին տրամադրել քննությանն առնչվող ամբողջ տեղեկատվությունը (Հոդված 3.3, մաս 11),

- ապահովել, որ երկկողմ պաշտպանիչ միջոցները կիրառվեն միայն այնպիսի ապացույցների առկայության դեպքում, որոնք վկայում են, որ ներմուծման ծավալների ավելացումը հանգեցնում է լուրջ վնասի կամ ստեղծում է լուրջ վնաս հասցնելու վտանգ (Հոդված 3.4, մաս 2),

- երկկողմ պաշտպանական միջոց կիրառելու մտադրություն ունենալու դեպքում անհապաղ և, ցանկացած դեպքում, մինչև միջոցը ներդնելն այդ մասին ծանուցել Իրանի Իսլամական Հանրապետությանը (Հոդված 3.4, մաս 3),

- տեխնիկական կանոնակարգերի մասով ապահովել, որ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքից ներմուծվող արտադրանքի նկատմամբ կիրառվի ռեժիմ, որը ոչ պակաս բարենպաստ է, քան ազգային ծագում ունեցող նմանատիպ արտադրանքի և ցանկացած այլ երկրի ծագում ունեցող նմանատիպ արտադրանքի նկատմամբ կիրառվող ռեժիմը (Հոդված 4.4, մաս 1),

- ապահովել, որ տեխնիկական կանոնակարգերը մշակվեն, ընդունվեն կամ կիրառվեն այնպես, որ չստեղծեն ավելորդ խոչընդոտներ փոխադարձ առևտրում կամ չհանգեցնեն դրանց ստեղծմանը (Հոդված 4.4, մաս 2),

- ապահովել, որ բոլոր ընդունված տեխնիկական կանոնակարգերը և (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգերը անհապաղ հրապարակվեն կամ այլ կերպ հասանելի դառնան Իրանի Իսլամական Հանրապետության շահագրգիռ անձանց դրանց ծանոթանալու հնարավորությունն ընձեռելու համար (Հոդված 4.5bis, մաս 7),

- տեղեկացնել Իրանի Իսլամական Հանրապետությանը Համաձայնագրի 1-ին հավելվածում թվարկված՝ ներկրվող արտադրանքին ներկայացվող պարտադիր պահանջների մասին Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրվա ընթացքում (Հոդված 4.5bis, մաս 10),

- գործադրել բոլոր ջանքերն Իրանի Իսլամական Հանրապետության Համաձայնագրի 4-րդ գլխի իրականացման հետ կապված հարցերի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու վերաբերյալ ցանկացած պահանջ արագ և կառուցողական կերպով ուսումնասիրելու համար (Հոդված 4.6, մաս 2),

- ըստ հարցման՝ պատշաճորեն դիտարկել Իրանի Իսլամական Հանրապետության կողմից ներկայացվող Համաձայնագրի 4-րդ գլխի շրջանակներում համագործակցելու առաջարկները (Հոդված 4.7, մաս 7),

- անհապաղ տեղեկացնել Իրանի Իսլամական Հանրապետությանը՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների և կապի ապահովման կենտրոնների հետ կապված ցանկացած փոփոխության, ինչպես նաև համապատասխան պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկատվության փոփոխության մասին (Հոդված 4.8, մաս 2),

- ճանաչել Իրանի Իսլամական Հանրապետության սանիտարական կամ բուսասանիտարական միջոցները որպես համարժեք, նույնիսկ եթե այդ միջոցները տարբերվում են Հայաստանի Հանրապետության միջոցներից կամ այն միջոցներից, որոնք օգտագործում են նույն արտադրանքի առևտուրն իրականացնող երրորդ երկրները, եթե Իրանի Իսլամական Հանրապետությունը օբյեկտիվ կերպով ցույց է տալիս, որ իր միջոցները համադրելի են հայկական կողմի սանիտարական կամ բուսասանիտարական պաշտպանության համապատասխան մակարդակին (Հոդված 5.5, մաս 1),

- ապահովել, որ ընդունված սանիտարական և բուսասանիտարական կանոնները հրապարակված լինեն Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կայքէջերում այնպես, որ շահագրգիռ կողմերը հնարավորություն ունենան դրանց ծանոթանալու (Հոդված 5.6, մաս 2),

- ապահովել կապի ապահովման մեկական կենտրոնի առկայությունը ԵՍՏՄ յուրաքանչյուր անդամ պետությունում, Եվրասիական տնտեսական հանձնաժողովում և Իրանի Իսլամական Հանրապետությունում, որը պատասխանատու է շահագրգիռ կողմերի բոլոր ողջամիտ հարցերին պատասխաններ տրամադրելու, ինչպես նաև Համաձայնագրի 5.6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հարցերի վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր տրամադրելու համար (Հոդված 5.6, մաս 3),

- Իրանի Իսլամական Հանրապետությանը տրամադրել տեղեկություններ գործող կամ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրվա ընթացքում ուժի մեջ մտնող սանիտարական և բուսասանիտարական միջոցների մասին (Հոդված 5.6, մաս 8),

- ընդունել տարածաշրջանային պայմաններին հարմարեցման հայեցակարգ ներառյալ վնասատուներից կամ հիվանդություններից զերծ գոտիները, վնասատուների կամ հիվանդությունների աննշան տարածմամբ գոտիները՝ որպես առևտրի դյուրացման կարևոր միջոց (Հոդված 5.7, մաս 1),

- ապահովել, որ փաթեթավորման նյութերը և բեռնարկղերը, որոնք նախատեսված են բացառապես ապրանքների տրանսպորտային փոխադրման համար, ապրանքների ծագումը որոշելիս հաշվի չառնվեն (Հոդված 6.11),

- ջանքեր գործադրել Ծագման ստուգման էլեկտրոնային համակարգի ներդրման համար (Հոդված 6.27, մաս 1),

- ապահովել, որ Համաձայնագրի 6-րդ գլխին համապատասխան տրամադրված բոլոր տեղեկությունները դիտարկվեն որպես գաղտնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Այդ տեղեկությունները չպետք է բացահայտվեն՝ առանց դրանք տրամադրված կողմի անձի կամ մարմնի թույլտվության՝ բացառությամբ դատավարական նպատակներով անհրաժեշտ չափով բացահայտման (Հոդված 6.29),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից կիրառվող մաքսային վարչարարության միջոցները լինեն կանխատեսելի, անկողմնակալ, հետևողական և թափանցիկ (Հոդված 7.3, մաս 1),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինները ձգտեն վերանայել մաքսային վարչարարության միջոցները՝ առևտրային ընթացակարգերի պարզեցմանը նպաստելու նպատակով (Հոդված 7.3, մաս 3),

- սահմանել կամ շարունակել իրականացնել մաքսային ընթացակարգեր և գործառնություններ՝ ապրանքների արդյունավետ բացթողման համար՝ կողմերի միջև առևտրային ընթացակարգերը պարզեցնելու նպատակով (Հոդված 7.4, մաս 1),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները կիրառեն ռիսկերի կառավարման համակարգ՝ ռիսկերի կանոնավոր գնահատման միջոցով կենտրոնանալով բարձր ռիսկայնություն ունեցող ապրանքների ստուգման վրա, և պարզեցնեն մաքսային գործառնությունների կատարումը ցածր ռիսկայնություն ունեցող ապրանքների նկատմամբ (Հոդված 7.5),

- ապահովել, որ սահմանին հսկողության և ապրանքների ներմուծմանը, արտահանմանը և տարանցմանն առնչվող ընթացակարգերի համար պատասխանատու լիազորված մարմինները համագործակցեն միմյանց հետ և համակարգեն իրենց գործունեությունը՝ առևտրին նպաստելու և չհիմնավորված վարչական ընթացակարգերը կրճատելու նպատակով (Հոդված 7.8),

- ապահովել, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 8 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները ստեղծեն կամ պահպանեն կապի ապահովման մեկ կամ մի քանի կենտրոններ՝ մաքսային հարցերի վերաբերյալ շահագրգիռ անձանց հարցումներն ուսումնասիրելու համար, և համացանցում հրապարակեն տվյալներ՝ կապի ապահովման այդ կենտրոնների մասին (Հոդված 7.9, մաս 2),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները ներմուծող կողմում գրանցված ցանկացած դիմումատուի գրավոր տրամադրեն սակագնային դասակարգման, ապրանքների ծագման, ինչպես նաև գործին առնչվող համարվող ցանկացած լրացուցիչ հարցի վերաբերյալ նախնական որոշումներ (Հոդված 7.10, մաս 1),

- ստեղծել կամ պահպանել նախնական որոշումների ընդունման մեխանիզմներ՝ Համաձայնագրի 7.10 հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան (Հոդված 7.10, մաս 2),

- ապահովել մաքսային մարմինների կողմից էքսպրես-բեռների արագացված մաքսագերծում՝ միաժամանակ պահպանելով մաքսային հսկողության համապատասխան մակարդակ (Հոդված 7.14, մաս 1),

- ներդնել կամ պահպանել ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս իրականացնել արագացված բացթողում (Հոդված 7.14, մաս 2),

- շուտ փչացող ապրանքներն ավելորդ կորուստներից և դրանց փչացումից խուսափելու նպատակով, մաքսային օրենսդրության բոլոր պահանջների պահպանման պայմանով՝ ապահովել շուտ փչացող ապրանքների բացթողումն առաջնահերթ կարգով (Հոդված 7.15),

- մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել հայտարարատուների առանց մաքսային գործակալների ծառայություններին դիմելու անհրաժեշտության մաքսային հայտարարագրերն ինքնուրույն ներկայացնելու իրավունքը (Հոդված 7.18),

- հնարավորության սահմաններում ապահովել մաքսային գործառնությունների իրականացումը տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում՝ կապի էլեկտրոնային միջոցների վրա հիմնված համակարգերի ու տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ տեղեկատվական անվտանգության բոլոր միջոցներն ապահովելու պայմանով, ինչպես նաև ապահովել,

որպեսզի Հայաստանի Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինները հնարավորության սահմաններում հայտարարատուներին հնարավորություն ընձեռեն ապրանքները հայտարարագրել էլեկտրոնային եղանակով և ապահովեն օգտատերերի մուտքը էլեկտրոնային համակարգեր (Հոդված 7.19),

- ապահովել, որ Համաձայնագրի 7-րդ գլխին համապատասխան տրամադրված բոլոր տեղեկությունները, բացառությամբ վիճակագրական տվյալների, դիտարկվեն որպես գաղտնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվ ակտերին համապատասխան, չբացահայտվեն Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից՝ առանց դրանք տրամադրած կողմի անձի կամ մարմնի թույլտվության՝ բացառությամբ այն տեղեկությունների, որոնց բացահայտումը կարող է անհրաժեշտ լինել դատավարական նպատակներով (Հոդված 7.20),

- ապահովել մաքսային մարմինների կողմից ընդունվող և շահագրգիռ անձանց իրավունքներին առնչվող որոշումների վարչական վերանայման և այդպիսի որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն՝ օրենսդրության նորմերին համապատասխան (Հոդված 7.21),

- ընդունել կամ պահպանել այնպիսի միջոցներ, որոնք թույլ են տալիս վարչական տուգանքներ կիրառել ապրանքների ներմուծման կամ արտահանման ժամանակ մաքսային օրենսդրությունը և նորմատիվ ակտերը, այդ թվում՝ Համաձայնագրի շրջանակներում սակագնային դասակարգման, մաքսային արժեքի որոշման, ծագման երկրի որոշման և սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ ստանալու մասին դրույթները խախտելու համար (Հոդված 7.22, մաս 1),

- ապահովել, որ մաքսային օրենսդրության, նորմատիվ ակտերի կամ ընթացակարգային պահանջների խախտման համար տուգանք նշանակելիս այն անձին (անձանց), որի (որոնց) նկատմամբ նշանակվում է տուգանքը, տրամադրվի գրավոր պարզաբանում՝ խախտման բնույթի և կիրառելի այն օրենքի, դրույթի կամ ընթացակարգի նշմամբ, որոնց հիման վրա որոշվել է տուգանքի գումարը կամ չափը (Հոդված 7.22, մաս 5):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածի

դրություններին, մասնավորապես՝ նպատակաուղղված են պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**.

1. 2018 թվականի մայիսի 17-ին Աստանայում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված ժամանակավոր համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

12 փետրվարի 2019 թվականի
ՍԴՈ-1445



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 376¹-ՐԴ ԵՎ 478.2-ՐԴ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 փետրվարի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)2019

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ և 478.2-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

«Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը» վերստառությամբ 376¹-րդ հոդվածով Օրենսգիրքը լրացվել է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-270-Ն օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 18-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի դեկտեմբերի 27-ին: 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-237-Ն օրենքով նշված հոդվածը լրացվել է 2.1-րդ կետով, իսկ 2009 թվականի փետրվարի 5-ի ՀՕ-45-Ն օրենքով փոփոխվել և սահմանում է.

«Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը.

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

2.1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

3) առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին աստյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները.

5) առաջին աստյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49 գլխով նախատեսված հարցերի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր»:

Օրենսգիրքը 2012 թվականի մարտի 19-ի ՀՕ-42-Ն օրենքով լրացվել է «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ժամանակավոր կալանավորման կարգը» վերտառությամբ 478.2-րդ հոդվածով, որն ուժի մեջ է մտել 2012 թվականի ապրիլի 28-ին և սահմանում է.

«1. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված անձանց նկատմամբ կիրառվում է ժամանակավոր կալանավորում մինչև 40 օր ժամկետով կամ միջազգային պայմանագրով նախատեսված այլ ժամկետով՝ հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով: Եթե հանձնելու վերաբերյալ միջնորդությունը չի ստացվել ժամանակավոր կալանավորման համար նախատեսված առավելագույն ժամկետի ընթացքում, կամ Հայաստանի Հանրապետության դատարանը մերժել է հանձնելու համար կալանավորում կիրառելու միջնորդությունը, կամ պարզվել են հանձնումը բացառող հանգամանքները, ապա անձը ենթակա է ազատման: Հանձնելու վերաբերյալ միջնորդությունը ժամանակին չներկայացնելու հիմքով անձին ժամանակավոր կալանավորումից ազատելը չի խոչընդոտում հետագայում նրա նկատմամբ հանձնելու համար կալանավորման կիրառմանը:

2. Մինչև անձին հանձնելու վերաբերյալ միջնորդություն ստանալը օտարերկրյա պետության իրավասու մարմնի անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը կամ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կամ դատավճիռը կարող է հանձնվել փոստով, այդ թվում՝ էլեկտրոնային կամ հեռագրով կամ տեխնիկական այլ միջոցներով, ինչպես նաև Միջազգային քրեական ոստիկանության (Ինտերպոլի) կամ անձի հետախուզում իրականացնող այլ միջազգային կազմակերպության միջոցով, որի մասնակից է Հայաստանի Հանրապետությունը:

3. Դատախազն անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնում է ձերբակալման վայրի դատարան: Միջնորդությանը կցվում են ձերբակալման արձանագրության պատճենը, օտարերկրյա պետության իրավասու մարմնի անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը կամ որոշումը կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերից մեկը և ձերբակալվածի անձը հաստատող փաստաթղթերը:

4. Միջնորդությունը քննարկելիս դատարանը, լսելով դատախազին, ձերբակալված անձին և նրա պաշտպանին, ուսումնասիրելով ներկայացված նյութերը, որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու և ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին կամ միջնորդությունը մերժելու մասին: Ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով:

5. Միջնորդության քննարկման արդյունքների մասին դատախազը, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, անհապաղ տեղյակ է պահում օտարերկրյա պետության իրավասու մարմնին»:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է «Գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու և դատական գործի վարույթը կասեցնելու մասին» նույն դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 30-ի ԵԴ/0797/06/18 գործով որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը նշում է, որ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդությունը մերժելու մասին առաջին աստիճանի դատարանի որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքի քննության համար վերաքննիչ դատարանի կողմից պետք է կիրառվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ և 478.2-րդ հոդվածների դրույթները, որոնք առերևույթ հակասում են ՀՀ Սահմանադրության 63-րդ և 176-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողի կարծիքով՝ Օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 8-րդ կետի և 478.2-րդ հոդվածի 4-րդ մասի համակարգային վերլուծությունից բխում է, որ անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդության քննության արդյունքում դատարանի կողմից կայացվող երկու հնարավոր որոշումներից վերաքննության կարգով կարող է բողոքարկվել միայն մեկը՝ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին որոշումը: Ինչ վերաբերում է **դատախազի միջնորդությունը մերժելու մասին որոշմանը, ապա այն վերաքննության կարգով չի կարող բողոքարկվել, քանի որ բողոքարկման հնարավորությունն նախատեսված չէ** ինչպես վերոհիշյալ հոդվածներում, այնպես էլ Օրենսգրքի որևէ այլ հոդվածում:

Դիմողը գտնում է, որ գործող իրավակարգավորումների արդյունքում «խախտվում են արդար դատաքննության բաղադրիչ հանդիսացող մրցակցության և զենքերի հավասարության սկզբունքները»: Դիմողի գնահատմամբ «...դատախազի համար նման սահմանափակում նախատեսելն անհրաժեշտ չէ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված որևէ նպատակի հասնելու համար և չի հանդիսանում անձի որևէ հիմնական իրավունքի կամ ազատության ապահովման համարժեք միջոց»:

Դիմողը կարծում է նաև, որ նման իրավակարգավորումը վտանգում է Հայաստանի Հանրապետության կողմից իր «կոնվենցիոն» պարտավորությունների կատարումը, «...քանի որ առաջին ատ-

յանի դատարանի թույլ տված դատական սխալի արդյունքում ժամանակավոր կալանավորման հիմքերի առկայության պայմաններում հանձնման ենթակա անձը կարող է հայտնվել ազատության մեջ»:

Ավելին, ըստ դիմողի՝ դատախազությունը զրկվում է անձի իրավական վիճակի վրա էապես ազդող, ինչպես նաև պետության «կոնվենցիոն» պարտավորությունների կատարմանն ուղղված դատական ակտը բողոքարկելու իր սահմանադրական լիազորությունը լիարժեք իրացնելու հնարավորությունից:

Դիմողը գտնում է, որ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին դատախազի միջնորդությունը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն չնախատեսելու պայմաններում մասնավոր շահը չարդարացված կերպով գերակայում է հանրային շահի նկատմամբ՝ այդպիսով խախտելով սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթներն այնքանով, որքանով չեն ամրագրում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված անձանց նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավական հիմքերը, չեն համապատասխանում Սահմանադրությանը, քանի որ չեն ապահովում քրեական դատավարությունում կողմերի իրավահավասարության և դատարանի մատչելիության սկզբունքների լիարժեք իրացումը, ինչպես նաև պետության կողմից հանձնման մասին միջազգային պարտավորությունների կատարումը:

Ըստ պատասխանողի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացումը քննության առարկա իրավակարգավորումներով ապահովված է մասնակիորեն: Անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդության քննության արդյունքում դատարանը կայացնում է երկու տեսակ որոշում, որոնցից միայն մեկը կարող է բողոքարկվել: Վերաքննու-

թյան կարգով չի կարող բողոքարկվել դատախազի միջնորդությունը մերժելու մասին որոշումը, քանի որ Օրենսգրքով բողոքարկման համապատասխան իրավունք և գործիքակազմ ամրագրված չեն:

Պատասխանողը նշում է, որ հանձնելու նպատակով անձին կալանավորելը, Օրենսգրքի 491-րդ և 492-րդ հոդվածների համաձայն, անձին հանձնելու վերաբերյալ խնդրանքին կից նրան կալանքի վերցնելու մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի որոշման առկայության դեպքում խնդրանքն ստացած իրավասու մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով միջոցների ձեռնարկումն է հանձնման ենթակա անձին կալանավորելու համար, ինչի համար անհրաժեշտ է համարվում նաև Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումը, որը պետք է կայացվի հանձնման ենթակա անձի ներկայությամբ:

Հանձնման ենթակա անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորագույն երաշխիք է այն հանգամանքը, որ կալանքի վերցված անձն իրավունք ունի անհապաղ կանգնելու դատարանի առջև իր նկատմամբ ընտրված խափանման միջոցը հաստատելու, փոփոխելու կամ վերացնելու համար: Ավելին, հստակ իրավական մեխանիզմները նրան թույլ են տալիս բողոքարկել դատարանի կողմից ընդունված իր նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին որոշումը, մինչդեռ, մյուս կողմը՝ դատախազը, իր միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկել չի կարող:

3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցադրումները

Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իր վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարանն ղիմելու համար դատարանը պետք է հիմնավոր կասկածներ ունենա այդ դրույթի սահմանադրականության վերաբերյալ, իսկ օրենքի նույն հոդվածի 5-րդ մասի պահանջն է, որ դատարանը հիմնավորի վիճարկվող դրույթի Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ իր դիրքորոշումը:

Դիմողը չի հիմնավորել Օրենսգրքի 376¹-րդ հոդվածի Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ իր դիրքորոշումը, այլ միայն, վկայակոչելով այդ հոդվածի 8-րդ կետը, որն ամրագրում է, որ Օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող են բողոքարկվել նաև այլ դատական ակտեր, եզրակացրել է, որ հոդվածն ամբողջությամբ հակասում է Սահմանադրությանը, քանի որ Օրենսգրքով չի նախատեսվում, որ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով:

Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով, որ Օրենսգրքի 376¹-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ դիմողի կասկածները հիմնավոր չեն, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքերով, աշխատակարգային որոշմամբ գործն այդ մասով կարճել է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի բարձրացրած հիմնախնդիրը վերաբերում է ոչ թե Օրենսգրքի 478.2-րդ հոդվածում ամրագրված բոլոր կարգավորումներին, այլ բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված անձանց նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման վերաբերյալ կարգավորման բացակայությանը: Ուստի, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում պետք է քննարկել բացառապես Օրենսգրքի 478.2-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցն այն մասով, որը հնարավոր է համարում բողոքարկել միայն ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին դատարանի որոշումը, և այդ համատեքստում անհրաժեշտ է համարում պարզել.

- Սահմանադրության 176-րդ հոդվածով դատախազությանը վերապահված լիազորությունների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է, արդյոք, որ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված անձանց նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին դատախազի միջնորդությունը մերժելու վերաբերյալ դատարանի որոշումը ենթակա լինի բողոքարկման,

- արդյոք արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող մրցակցության սկզբունքը և քրեական դատավարությանը մասնակցող կողմերի իրենց դիրքորոշումը պաշտպանելու համար հավասար հնարավորությունների պահանջը (զենքերի հավասարության սկզբունքը) կիրառելի են ժամանակավոր կալանավորման մասին դատախազի միջնորդության քննության նկատմամբ (Սահմանադրության 63-րդ հոդված):

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է քրեական գործերով իրավական օգնության ոլորտում գործող մի շարք բազմակողմ և երկկողմ միջազգային պայմանագրեր, որոնցով կարգավորվում են քրեական գործերով իրավական փոխօգնության, հանցագործություն կատարած անձանց հանձնման (Էքստրադիցիայի), դատապարտյալների փոխանցման, օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման, ինչպես նաև այլ հարցեր:

Հարկ է նշել, որ միջազգային պայմանագրերը պետություններին ընձեռում են իրավական փոխադարձ օգնություն ստանալու և տրամադրելու հնարավորություն, սահմանում այդպիսի օգնության սկզբունքները և ձևերը, սակայն իրավական օգնության տրամադրման կարգը, դրա հետ կապված վարությային գործողությունները միջազգային պայմանագրերը չեն կարգավորում՝ թողնելով դրանց կարգավորումը յուրաքանչյուր երկրի ներպետական օրենսդրությանը:

Քրեական գործերով իրավական օգնության կարգ սահմանող դրույթները ներառված են Օրենսգրքի 54-րդ և 54¹-րդ գլուխներում, ընդ որում՝ օրենսդիրը տարբերակել է միջազգային պայմանագրերին համապատասխան իրավական օգնությունը և իրավական օգնությունն այն դեպքերում, երբ բացակայում են նման պայմանագրերը:

Օրենսգրքի 478.2-րդ հոդվածը նախատեսում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված անձանց նկատմամբ **ժամանակավոր կալանավորման կիրառում** մինչև

40 օր ժամկետով կամ միջազգային պայմանագրով նախատեսված այլ ժամկետով՝ **հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով:**

Սահմանադրական դատարանը նշում է, որ անհրաժեշտ է տարանջատել խափանման միջոց հանդիսացող կալանավորումը ժամանակավոր կալանավորումից, որը, Օրենսգրքի 6-րդ հոդվածի 38.1-րդ կետի համաձայն, անձին անազատության մեջ պահելն է հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու, այսինքն՝ հնարավոր հանձնումն ապահովելու նպատակով: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում կալանավորումը մեկ այլ գործողության կատարումն ապահովող միջոց է:

Քրեական գործերով իրավական օգնության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով, մասնավորապես, 2002 թվականի ապրիլի 25-ին Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտած 1957 թվականի «Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիայի» 16-րդ հոդվածով սահմանվում է, որ հայցող կողմի իրավասու մարմինները հետախուզվող անձի ժամանակավոր կալանավորում կարող են պահանջել **ձայրահեղ անհրաժեշտության դեպքում**, իսկ հայցվող կողմի իրավասու մարմինները հարցը կլուծեն իրենց օրենսդրության համաձայն:

Հայաստանի Հանրապետության պարագայում, Օրենսգրքի 478.2-րդ հոդվածով սահմանվում է, որ մինչև անձին հանձնելու մասին միջնորդություն ստանալը, դատախազն անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ իր միջնորդությանը կցելով ձերբակալման արձանագրության պատճենը, օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը կամ որոշումը և ձերբակալվածի անձը հաստատող փաստաթղթերը, այն ներկայացնում է ձերբակալման վայրի դատարան, որը, լսելով դատախազին, ձերբակալված անձին և նրա պաշտպանին, ուսումնասիրելով ներկայացված նյութերը, որոշում է կայացնում ժամանակավոր կալանավորում կիրառելու կամ միջնորդությունը մերժելու մասին: Ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին միջնորդության մերժումը, ինչպես և հանձնելու վերաբերյալ միջնորդությունը ժա-

մանակին չներկայացնելու հիմքով անձին ժամանակավոր կալանավորումից ազատելը, չեն խոչընդոտում հետագայում նրա նկատմամբ հանձնելու համար կալանավորման կիրառումը (Օրենսգրքի 478.2-րդ և 478.3-րդ հոդվածներ), հետևաբար նաև հանձնման վերաբերյալ պետության միջազգային պարտավորության կատարումը:

4.2. Սահմանադրության 176-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: Նույն հոդվածի 2-րդ մասում սպառիչ թվարկված են դատախազության լիազորությունները: Դատախազությունը դրանք կարող է իրականացնել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Սույն գործով քննարկվող հարցն առնչվում է միայն դատարանի որոշումները բողոքարկելու դատախազության լիազորությանը:

Դատախազությունը դատական ակտերը կարող է բողոքարկել **միայն օրենքով սահմանված դեպքերում** և, եթե օրենքով տվյալ որոշման բողոքարկումը նախատեսված չէ, դեռևս չի նշանակում, որ դատախազությունը զրկվում է իր սահմանադրական լիազորությունն իրացնելու հնարավորությունից:

Օրենսգրքի վերաբերելի դրույթների վերլուծությունից հետևում է, որ քրեական դատավարության ընթացքում առաջին աստիճանի դատարանի կողմից կայացվող դատական ակտերը երկու խմբի են բաժանվում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտեր և գործն ըստ էության չլուծող կամ միջանկյալ դատական ակտեր: Եթե վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին խմբի օրինական ուժի մեջ չմտած, գրեթե բոլոր ակտերը, ապա գործն ըստ էության չլուծող ոչ բոլոր դատական ակտերն են **բողոքարկման ենթակա**, և ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդությունը մերժելու մասին առաջին աստիճանի դատարանի որոշումը դասվում է դրանց թվին:

Այսպես, բողոքարկման ենթակա չեն նաև դատավորի որոշումները ինքնաբացարկի մասին (Օրենսգրքի 299-րդ հոդված), գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին (Օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մաս և 298-րդ հոդված) և այլն: Օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազն իրավունք չունի բողոքարկելու նաև գործն ըստ էության լուծող դատական ակտը քաղաքացիական հայցի մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ հայցը շոշափում է պետության գույքային շահերը:

Անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդության քննության արդյունքում դատարանը կայացնում է երկու տեսակ որոշում՝ կիրառել ժամանակավոր կալանք կամ մերժել բերված միջնորդությունը: Այն, որ ժամանակավոր կալանք կիրառելու մասին դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման, մարդու իրավունքի պաշտպանության երաշխիք է և բխում է Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջից, համաձայն որի՝ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է: Միաժամանակ պետք է փաստել, որ Օրենսգիրքը 478.2-րդ հոդվածով լրացվել է 2012 թվականի մարտի 19-ի ՀՕ-42-Ն օրենքով, որի ընդունման համար Ազգային ժողով ներկայացված հիմնավորումներում նշվել է, որ նախագծի նպատակն է Սահմանադրության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) պահանջներին համապատասխան «բարձրացնել հանձնման նպատակով ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության կառուցակարգի արդյունավետությունը» (www.parliament.am/draft_docs4/K-1304himnavorum.pdf):

4.3. Սահմանադրության 2-րդ գլխում ամփոփված հոդվածները չեն պաշտպանում կամ երաշխավորում պետության կամ հանրային իշխանության որևէ իրավունք, ավելին, Սահմանադրության 3-րդ հոդվածը հանրային իշխանությանը պարտավորեցնում է հարգել և պաշտպանել այդ իրավունքները և սահմանում է նաև, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Հետևաբար, Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքը ոչ թե պետության կամ հանրային իշխանության, այլ յուրաքանչյուր անձի իրավունքն է, որ իր գործը քննվի անկախ և անաչառ դատարանի կողմից արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում:

Քրեական դատավարությունում կողմեր են այն մարմինները և անձինք, որոնք մրցակցային հիմունքներով իրականացնում են քրեական հետապնդում կամ պաշտպանություն (Օրենսգրքի 6-րդ հոդվածի 16-րդ կետ):

Դատախազը, լինելով հանրային իշխանության մարմին, քրեական դատավարությունում հանդես է գալիս որպես մեղադրանքի կողմ և օժտված է որոշակի լիազորություններով, որոնց թվում է նաև քրեական գործը դատարանի կողմից քննելիս միջնորդություններ հարուցելու, ինչպես նաև դատարանի դատավճիռները և Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ բողոքարկելու լիազորությունները (Օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 11-րդ կետեր):

Դիմողի պնդումն առ այն, որ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ առաջին աստիճանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն չնախատեսելու պայմաններում **«մասնավոր շահը չարդարացված կերպով գերակայում է հանրային շահի նկատմամբ»** այդպիսով խախտելով սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը», հիմնավորված չէ, քանի որ, նախ՝ այն չի կարող բողոքարկել նաև անձը, որի նկատմամբ հարուցվել է միջնորդությունը, մինչդեռ, հնարավոր է, որ այդ որոշման պատճառաբանական մասը չհամապատասխանի նրա շահերին, և, երկրորդ՝ շահերի հավասարակշռությունն ապահովում է դատարանը, որը, ինչպես ամրագրված է Օրենսգրքի 23-րդ հոդվածում, **հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:**

Իր որոշումներում ՄԻԵԴ-ը բազմիցս մատնանշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի մասնակից պետություններն ունեն լայն հայեցողություն որոշելու, թե ինչպես պետք է կիրառվի բողոքարկման իրավունքը:

Անդրադառնալով կանխարգելիչ միջոցառումների կիրառման, մասնավորապես, խափանման միջոցների հետ կապված միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորությանը՝ ՄԻԵԴ-ը գտել է, որ, մասնակից պետությունները պարտավոր չեն ստեղծել ազատությունից զրկելու (կալանքի) օրինականությունը ստուգելու համար իրավասության երկրորդ մակարդակ, սակայն այն պետությունը, որն այնուամենայնիվ այն ստեղծել է, պետք է անձանց համար ապահովի նույն երաշխիքները, ինչպես առաջին աստիճանի դատարանում (Navarra v. France, app. no. 13190/87, 23.11.1993):

ՄԻԵԴ-ը գտել է, որ կողմերի իրավահավասարության սկզբունքը, ըստ էության, կիրառելի չէ կալանքից ազատելու վերաբերյալ վարույթի նկատմամբ, որի դեպքում միայն պահանջվում է, որ հարցը քննության առնվի անկախ դատական մարմնի կողմից և հնարավորինս արագ (Neumeister v. Austria, app. no. 1936/63, 27.06.1968, §24):

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 4-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 478.2-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 փետրվարի 2019 թվականի
ՍԴՈ-1446



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԷՐԵԲՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 2800-ԱՍՅԱԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 100-
ԱՍՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ
ԴՐԱ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 10-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 փետրվարի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և դրա հետ փոխկապակցված 2-րդ հոդվածի 10-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի նոյեմբերի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի նոյեմբերի 3-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի նոյեմբերի 6-ից:

Օրենքի 4-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 2-րդ մասը սահմանում է.

«2. Համաներման կիրառման դեպքում օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»:

Օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է համաներումը չկիրառելու դեպքերը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 3-ի ԵԱԲԴ/0188/01/17 քրեական գործով «ՀՀ սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով սույն գործով դիմողի և պատասխանողի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենքի համապատասխան դրույթները, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողի գնահատմամբ այնքանով, որքանով «համաներման կիրառմամբ պատժից ազատելու դեպքում պարտադիր պայման սահմանված չէ տուժողին պատճառված վնասը հատուցած լինելու վերաբերյալ», ավելին՝ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ դատավճռով հաստատված տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, այդքանով Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթն առերևույթ հակասում է Սահմանադրության 1-ին, 3, 61, 63, 79 և 81-րդ հոդվածներին:

Ըստ դիմողի՝ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնակարգմամբ օրենսդիրը պատշաճ չի գնահատել պետություն-անձ հարաբերությունները, փոխադարձ իրավունքների և պարտականությունների հարաբերակցությունը: Պետությունը համաներմամբ պատժից ազատելու իր իրավունքը չպետք է իրացնի ի վնաս տուժողների առջև ունեցած սահմանադրական պարտավորությունների: Ըստ դիմողի՝ ստացվում է, որ պետությունը ոչ միայն չի կարողացել կանխել հանցագործության կատարումը, այլև, դրանից հետո պարտավոր լինելով բացահայտել հանցագործությունը և հնարավորություն տալ տուժողին իրացնելու իր խախտված իրավունքների պաշտպանությունը, ներում է հանցանք կատարած անձին, իսկ տուժողին ուղղորդում իրավունքների պաշտպանության այլ կառուցակարգերի միջոցով պաշտպանելու իր իրավունքները: Ըստ դիմողի՝ ինչպես երևում է Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասից՝ տուժողին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հարցը չի կարող լուծվել քրեական դատավարությունում. այդ նպատակով տուժողը պետք է դիմի քաղաքացիադատավարական կառուցակարգերին: Իսկ դրանք որևէ դրական (պոզիտիվ) նշանակություն չունեն տուժողին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման տեսանկյունից: Քաղաքացիական դատավարության օրենսգրքում՝ հայց հարուցելուց զատ տուժողին պատճառված վնասը հատուցելու հարցը լուծելու հետ կապված այլ իրավական կառուցակարգ առկա չէ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)2019

Դիմողը գտնում է, որ եթե Օրենքն ունենար այնպիսի կանոն, որ «տուժողին պատճառված վնասը հանդես գար, որպես պարտադիր պայման պատժից ազատելու, ապա այն կլիներ ոչ միայն լրացուցիչ երաշխիք տուժողին պատճառված վնասի հատուցման համար, այլև հանցանք կատարած անձին կստիպեր, որպեսզի գործուն քայլեր ձեռնարկեր տուժողին պատճառված վնասը հատուցելու համար»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը շեշտում է, որ համաներման ակտը պետք է համահունչ լինի համաներման՝ որպես գթասրտության ակտի բնույթին և պետական իշխանության սահմանադրական պատասխանատվությանը, ինչը պարտավորեցնում է օրենսդրին հաշվի առնել համաներման ենթակա անձանց վերասոցիալիզացման խնդիրները և դրանց լուծումներն ապահովելու անհրաժեշտությունը առանց վտանգի տակ դնելու ժողովրդավարական հասարակության մեջ կայուն իրավակարգի և քաղաքացիների իրավունքների երաշխավորման շահը:

Պատասխանողը նշում է, որ համաներման կիրառման օրենսդրական հիմքերը նախատեսված չեն: Այսինքն՝ հարցի կարգավորումն ամբողջությամբ թողած է պետական իշխանության իրավասու բարձրագույն մարմնի հայեցողությանը: Յուրաքանչյուր դեպքում օրենսդրի հայեցողությանն է թողած ինչպես համաներում հայտարարելու նպատակահարմարության և հանցանք կատարած անձանց շրջանակի որոշումը, այնպես էլ համաներման կիրառման պայմանների, կառուցակարգերի և բացառությունների սահմանումը: Ուստի, կոնկրետ հանցագործությունների և հանցանք կատարած անձանց շրջանակի, համաներման կիրառման պայմանների և իրավական կառուցակարգերի սահմանումը չի կարող դիտվել Սահմանադրության 61, 63 և 79-րդ հոդվածներով երաշխավորված կանոնների խախտում:

Ըստ պատասխանողի՝ ակնհայտ է, որ համաներման ակտն ընդունողի՝ օրենսդրի հայեցողական լիազորությունը կարող է իրացվել միայն իրավաչափ լուծումների և Սահմանադրության հիմնարար սկզբունքների շրջանակներում՝ բացառելով տուժողին հասցված վնասի հատուցման իրավունքների խախտման որևէ դրսևորում, մասնավորապես՝ տուժողի սեփականության իրավունքի մա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)2019

սով, երբ օրենսդիրը որոշակիության սկզբունքին համահունչ բացառապես ամրագրել է սահմանադրաիրավական նորմերով ստանձնած յուրաքանչյուր անձի սեփականության իրավունքը պաշտպանելու պետության պարտավորվածությունից բխող նորմեր առ այն, որ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը լուծվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, որը, անշուշտ, միտված է երաշխավորելու սեփականության խախտված իրավունքների վերականգնումը:

Վերոգրյալի հիման վրա պատասխանողը գտնում է, որ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը և դրա հետ փոխկապակցված 2-րդ հոդվածի 10-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը:

Հաշվի առնելով, որ Սահմանադրության 117-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը կարող է ընդունել համաներման մասին օրենք՝ Կառավարության առաջարկությամբ, Սահմանադրական դատարանը դիմել և ստացել է նաև Կառավարության բացատրությունը, որում, մասնավորապես, նշվում է, որ Օրենքն ընդունվել է Քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածին համահունչ՝ հիմքում ունենալով նաև այն մոտեցումը, որ համաներման ակտը վերաբերում է անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հարցերին, բայց ոչ նրա՝ տուժողի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումից ազատելու հարցերին: Ըստ Կառավարության՝ վիճարկվող իրավակարգավորումներով պետությունը չի ազատում հանցանք կատարած անձին տուժողի նկատմամբ իր ունեցած պարտականությունների կատարումից և երաշխավորում է տուժողի իրավունքների պաշտպանության միջոցի արդյունավետությունը:

Կառավարությունը նշում է նաև, որ, պահպանելով պատժից ազատելու հարցում քաղաքականության միասնականությունը և ելնելով այն հանգամանքից, որ օրինական ուժի մեջ մտած դատավճիռն ունի նախադատելի ուժ և տուժողի համար ստեղծում է շահեկան դիրք հետագայում քաղաքացիական դատավարության կարգով վնասի հատուցում ստանալու հարցում, պետությունը համաներման հիմքով օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում անձին պատժից ազատելու հարցում տուժողին պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը չի դիտում որպես համաներման կիրառման համար բացառիկ նախապայման:

Կառավարությունը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումները չեն հակասում Սահմանադրության 1-ին, 3, 61, 63, 79 և 81-րդ հոդվածներին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական հարցերի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

ա) սահմանափակված է արդյոք օրենսդրի հայեցողությունը՝ համաներման կիրառում նախատեսելու այն անձի նկատմամբ, որը չի կատարել հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի հատուցման իր պարտականությունը,

բ) վիճարկվող և դրա հետ փոխկապակցված դրույթների իրավակարգավորումները ստեղծո՞ւմ են արդյոք հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը հատուցելու անձի պարտականության չկատարման, տուժողի համար ոչ բարենպաստ պայմանների ստեղծման իրավական նախադրյալներ,

գ) երաշխավորվո՞ւմ է արդյոք տուժողի՝ հանցագործությամբ պատճառված վնասի դատական կարգով հատուցման իրավունքի իրացումը:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Համաներման հետ կապված հարաբերությունները սահմանված են Սահմանադրության «Համաներումը» վերտառությամբ 117-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել համաներման մասին օրենք»: Սահմանադրական հիշյալ կարգավորումից բխում է, որ՝

- սահմանադիրը Ազգային ժողովին է վերապահել համաներման լիազորությունը, որն իրացվում է օրենք ընդունելու միջոցով,

- Ազգային ժողովը համաներման մասին օրենք կարող է ընդունել միայն Կառավարության առաջարկությամբ,

- «կարող է ընդունել» սահմանադրական դրույթով շեշտադրվում է, որ համաներման մասին օրենք ընդունելու հարցի վերաբերյալ Ազգային ժողովն ունի լայն հայեցողություն,

- համաներման մասին օրենքն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Բացի վերոնշյալից, համաներման հետ կապված այլ հարաբերություններ, այդ թվում՝ **համաներում կիրառելու կամ դրա կիրառումը սահմանափակելու շրջանակների վերաբերյալ, Սահմանադրությամբ սահմանված չեն:** Սահմանադրությամբ սահմանված չէ նաև անձի պետությունից համաներում պահանջելու կամ համաներման խնդրանքի իրավունքը: Այսինքն, այս առումով ևս օրենսդրի հայեցողությունը սահմանադրական կարգավորումներով ուղղակիորեն սահմանափակված չէ: Միանշանակ է նաև, որ **օրենսդրի հայեցողական լիազորությունը կարող է իրականացվել միայն սահմանադրական հիմնարար սկզբունքների և այլ իրավաչափ լուծումների շրջանակներում:**

Սահմանադիրը չի նախատեսել օրենսդրի կողմից համաներման մանրամասների ուղղակիորեն սահմանում ընդհանուր կարգավորող օրենքով, և նման առանձին օրենք ներկայում առկա չէ:

Համաներման հետ կապված ընդհանուր իրավակարգավորումներ սահմանված են մի շարք օրենքներով, այդ թվում՝ Քրեական օրենսգրքով: Հիշյալ օրենսգրքի «Համաներումը» վերտառությամբ 82-րդ հոդվածով սահմանվում է. «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

Համաներման մասին ակտերը նորմատիվ իրավական ակտեր են: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ համաներման մասին կարող է ընդունվել օրենք, իսկ մինչ հիշյալ փոփոխությունները՝ կարող էր ընդունվել Ազգային ժողովի որոշում: Համաներման ինստիտուտի էությունից և իրավաստեղծ գործունեության պրակտիկայից բխում է, որ համաներման մասին ակտը, լինելով նորմատիվ իրավական ակտ, այնուհանդերձ, ունի առանձնահատկություններ: Մասնավորապես, համաներման մասին ակտը՝

- տարածվում է այդ ակտով կոնկրետ նշված ժամանակահատվածում հանցագործություն կատարելու մեջ կասկածվող, մեղադրվող կամ հանցագործության կատարման համար դատապարտված

որոշակի կատեգորիայի անձանց, վերջիններիս վերագրվող քրեորեն պատժելի որոշակի արարքների վրա,

- վերաբերում է քրեական պատասխանատվությունից ազատելու, պատժից լրիվ կամ մասնակիորեն ազատելու կամ պատիժը մեղմացնելու, ինչպես նաև դատվածությունը վերացնելու հարցերին,

- սահմանում է համաներման կիրառման կոնկրետ ժամկետ, այլ կերպ՝ այդ ակտն ունի կոնկրետ գործողության ժամկետ:

Վերոնշյալից բխում է, որ համաներման մասին կարող են ընդունվել ակտեր, որոնցից յուրաքանչյուրով համաներում կիրառելու կամ դրա կիրառման սահմանափակումների շրջանակները՝ պայմանավորված օրենսդրի հայեցողությամբ, կարող են լինել տարբեր:

Միաժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաներումը, օրենսդրի հայեցողական լիազորության իրականացման արդյունքում հանցանք կատարած որոշակի կատեգորիայի անձանց նկատմամբ արտահայտելով պետության մարդասիրական վերաբերմունքը, **չի կարող իրականացվել ի հաշիվ այլոց իրավունքների:** Այս համատեքստում ևս **պետության սահմանադրական պարտականությունն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար սահմանել անհրաժեշտ օրենսդրական կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր** (Սահմանադրության 75-րդ հոդված):

4.2. Վնասի հատուցման ինստիտուտը մասնավոր իրավունքի ինստիտուտ է, և դրա վերաբերյալ ընդհանուր իրավակարգավորումներն ամրագրված են Քաղաքացիական օրենսգրքով (մասնավորապես՝ 17-րդ հոդվածով, 60-րդ գլխի նորմերով):

Անդրադառնալով հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի հատուցման ինստիտուտի սահմանադրաիրավական հիմքերին՝ Սահմանադրական դատարանը նշում է, որ այն, նախնառաջ, անմիջականորեն առնչվում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող տուժողի՝ հանցագործությամբ պատճառված վնասի դատական կարգով հատուցման իրավունքին:

Տուժողին պատճառված վնասի հատուցման հետ կապված Օրենքի դրույթների վերլուծության արդյունքում Սահմանադրական դա-

տարանը փաստում է, որ օրենսդիրը տարանջատել և սահմանել է համաներման կիրառման առանձին շրջանակներ:

Այսպես, առաջին՝ Օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի իրավակարգավորումներից բխում է, որ այն դեպքում, երբ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, համաներման կիրառման համար պարտադիր է պատճառված վնասը հատուցված կամ այն այլ կերպ հարթված լինելը, կամ դրա վերաբերյալ վեճի բացակայությունը, իսկ վերջիններիս առկայության դեպքում համաներում չի կիրառվում:

Օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ կատարած հանցագործությունների դեպքերով քրեական գործի հարուցումը մերժելու, հարուցված քրեական գործը կարճելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ կարգավորումներ: Միաժամանակ նույն հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ հիշյալ 5-րդ մասը կիրառվում է Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների պահպանմամբ: Իսկ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ համաներման մասին օրենք ընդունելու հիմքով գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ (2-րդ պարբերություն): Ընդ որում, հարկ է ընդգծել, որ հիշյալ դրույթը գործում է, եթե համաներման մասին օրենքով այլ բան նախատեսված չէ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված իրավակարգավորումից տարբերվող այլ բան Օրենքը չի նախատեսում:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ Օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի իրավակարգավորումների հիմքում դրվել է, նախևառաջ, այն մոտեցումը, որ քրեական գործի հարուցումը մերժելու, հարուցված քրեական գործը կարճելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումները չունեն հետագայում քաղաքացիադատավարական ընթացակարգերով՝ խախտված իրավունքը վերականգնելու հարցում նախապես

հաստատված ապացույցի ուժ: Այլ կերպ՝ այդ որոշումները քաղաքացիական դատավարությունում չեն կարող ունենալ նախադատելի ուժ, դրանք կարող են օգտագործվել որպես գրավոր ապացույց և քննարկվել ներկայացված մյուս ապացույցների հետ համակցության մեջ: Դատական պրակտիկայում ևս ձևավորվել է հիշյալ մոտեցումը (համանման իրավական դիրքորոշում արտահայտել է Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, իր՝ 2010 թվականի ապրիլի 22-ի ԱՐԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով քննության առարկա հարցերի շրջանակում **Օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի իրավակարգավորումները, որոնցից բխում է, որ այն դեպքում, երբ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, համաներման կիրառման համար պարտադիր է պատճառված վնասը հատուցված կամ այն այլ կերպ հարթված լինելը, կամ դրա վերաբերյալ վեճի բացակայությունը, իսկ վերջիններիս առկայության դեպքում համաներում չի կիրառվում, իրավաչափ են, քանի որ տուժողի վրա չի դրվում վնաս պատճառելու հետ կապված որոշակի արարքների և դրանք կատարած անձանց վերաբերյալ փաստերի ապացուցման պարտականություն, ինչը տուժողի հանցագործությամբ պատճառված վնասի դատական կարգով հատուցման իրավունքի իրացման տեսանկյունից բարենպաստ պայման է:**

Երկրորդ՝ այն դեպքում, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, **Օրենքով համաներման կիրառման սահմանափակում չի նախատեսվում այն անձանց համար, որոնք չեն հատուցել հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը:** Օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասով համաներում չկիրառելու դեպքերի մեջ նման սահմանափակում նախատեսված չէ: **Օրենքով սահմանվում է, որ համաներման կիրառման դեպքում օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով (4-րդ հոդվածի 2-րդ մաս):**

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համաներման մասին 2009 թվականի հունիսի 19-ի, 2011 թվականի մայիսի 26-ի և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի ակտերով օրենսդիրն իր հայեցողության շրջանակներում չի նախատեսել համաներման կիրառում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)2019

այն անձանց նկատմամբ, որոնք չեն հատուցել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը: Միաժամանակ, հարկ է նշել նաև, որ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով լուծելու վերաբերյալ դրույթներ համաներման մասին նախկինում ընդունված ակտերում բացակայում են:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և դրա հետ փոխկապակցված 2-րդ հոդվածի 10-րդ մասի իրավակարգավորումների հիմքում դրվել է, նախևառաջ, այն մոտեցումը, որ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, որով հաստատված են տուժողին վնաս պատճառելու հետ կապված որոշակի արարքների և դրանք կատարած անձանց վերաբերյալ փաստեր, քաղաքացիադատավարական ընթացակարգերով գործ քննելիս ունի նախապես հաստատված ապացույցի ուժ: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Ապացուցելուց ազատվելու հիմքերը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված որոշակի արարքների և դրանք կատարած անձանց վերաբերյալ փաստերն այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն»: Այս դեպքում ևս դատական պրակտիկայում ձևավորվել է հիշյալ մոտեցումը (համանման իրավական դիրքորոշում արտահայտել է Վճռաբեկ դատարանն իր՝ 2007 թվականի սեպտեմբերի 5-ի 3-1091(ՎԴ) քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով քննության առարկա հարցերի շրջանակում Օրենքի վիճարկվող և դրա հետ փոխկապակցված դրույթների իրավակարգավորումները, որոնցով այն դեպքում, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, համաներման կիրառման սահմանափակում չի նախատեսվում այն անձանց համար, որոնք չեն հատուցել հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը, և սահմանվում է, որ համաներման կիրառման դեպքում օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, իրավաչափ են, քանի որ տուժո-

դի վրա չի դրվում վնաս պատճառելու հետ կապված որոշակի արարքների և դրանք կատարած անձանց վերաբերյալ փաստերի ապացուցման պարտականություն, ինչը տուժողի՝ հանցագործությամբ պատճառված վնասի դատական կարգով հատուցման իրավունքի իրացման տեսանկյունից բարենպաստ պայման է:

4.3. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաև, որ պատժից ազատելու օրենսդրական ընդհանուր քաղաքականության շրջանակներում հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը հատուցելը կամ այն այլ կերպ հարթելը չի դիտարկվում որպես **բացառիկ նախապայման**, առանց որի անհնար է անձին պատժից ազատել: Այս համատեքում հարկ է նշել նաև, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հիմքում ևս չի դրվում հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը հատուցված կամ այն այլ կերպ հարթված լինելը որպես բացառիկ նախապայման: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում հանցագործությամբ պատճառած վնասը հատուցած կամ այլ կերպ հարթված լինելը կամ պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնելը դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքներից մեկն է (Քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.2-րդ մաս):

Հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը քաղաքացիաիրավական պարտավորության ծագման հիմք է, դրա հատուցումը պատժի նպատակ չէ, և պատժից չազատելը ոչ միայն երաշխիք չէ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ տուժողին պատճառված վնասի հատուցումն ստանալու համար, այլ այն առավել անբարենպաստ պայման կարող է լինել վնասը հատուցելու համար պայմանավորված վնասը հատուցող անձի անազատության մեջ լինելու հանգամանքով:

Բացի դրանից, գործնականում չեն բացառվում դեպքեր, երբ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման տուժողի պահանջը դատական կարգով բավարարվի, սակայն դատապարտյալն ի վիճակի չլինի այն կատարել: Ասվածը, բնականաբար, չի նշանակելու, որ վերջինս դատավճռով նշանակված պատժի ժամկետից հետո շարունակելու է զրկված լինել ազատությունից այնքան ժամանակ, քանի դեռ չի կատարել պատճառված վնասի հատուցման իր պարտականությունը:

Վերոհիշյալ մոտեցումը բնավ չի նշանակում, որ օրենսդիրը համաներմամբ պատժից ազատելու իր հայեցողությունն իրականացնում է ի հաշիվ տուժողի վնասի հատուցման իրավունքի իրացման: **Համաներման մասին ակտով անձը չի կարող ազատվել հանցագործության հետևանքով առաջացած այլ անձանց նկատմամբ քաղաքացիաիրավական պարտականությունների կատարումից:**

Վերոնշյալի համատեքստում ևս Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի իրավակարգավորումը, որով այն դեպքում, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, համաներման կիրառման սահմանափակում չի նախատեսվում այն անձանց համար, որոնք չեն հատուցել հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը, իրավաչափ է և սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ:

4.4. Ինչ վերաբերում է տուժողի հանցագործությամբ պատճառված վնասի դատական կարգով հատուցման իրավունքի իրացման ընթացակարգերին, ապա դրանք սահմանված են ինչպես քրեական դատավարության օրենսդրությամբ, այնպես էլ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2011 թվականի ապրիլի 5-ի ՄԴՈ-947 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ «Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, որտեղ օգտագործվում է «խախտված իրավունքների վերականգնման» բառակապակցությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրավունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականիչ նշանակություն և քրեական օրենսդրության միջոցով օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները: Այդ է պատճառը նաև, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտը, որի միջոցով գործնականում ապահովվում է հանցագործության հետևանքով խախտված իրավունքների վերականգնումը»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցն այս կամ այն դատավարական ընթացակարգերով լուծելը սահմանադրակա-

նության տեսանկյունից ինքնին խնդրահարույց չէ և գտնվում է օրենսդրի հայեցողության տիրույթում: Մահմանադրական պահանջն այն է, որ այդ ընթացակարգերը լինեն արդյունավետ, իսկ առկա ընթացակարգերի արդյունավետության գնահատումը սույն գործի շրջանակներից դուրս է:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներով ևս ամրագրում է, որ տուժողի հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի պաշտպանությանն ուղղված կառուցակարգերի հարցերը գտնվում են պետության լայն հայեցողության ներքո, և շեշտում, որ պետությունը պետք է երաշխավորի այդ կառուցակարգերի արդյունավետությունը: Մասնավորապես, նշվում է, որ տուժողի իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը ենթադրում է այնպիսի միջոցի առկայություն, որը կարող է վերացնել իրավունքի խախտումը կամ կանխել դրա հետագա շարունակումը, կամ կարող է ապահովել բավարար փոխհատուցում կատարված խախտման համար: Իսկ փոխհատուցման պահանջն արդյունավետ միջոց դիտարկելու համար այն պետք է ունենա և՛ հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար, և՛ ապահովի բավարար փոխհատուցում: Փոխհատուցման վերաբերյալ քաղաքացիական հայցը սկզբունքորեն դիտարկվել է դատական պաշտպանության արդյունավետ միջոց (մասնավորապես՝ *Kudła v. Poland* գործով 26.10.2000թ. վճիռ, գանգատ թիվ 30210/96, *Sejdovic v. Italy* գործով 01.03.2006թ. վճիռ, գանգատ թիվ 56581/00, *Lukenda v. Slovenia* գործով 06.10.2005թ. վճիռ, գանգատ թիվ 23032/02, *Jazbec v. Slovenia* գործով 14.12.2006թ. վճիռ, գանգատ թիվ 31489/02, *Varacha v. Slovenia* գործով 09.11.2006թ. վճիռ, գանգատ թիվ 9303/02, *Budayeva and Others v. Russia* գործով 20.03.2008թ. վճիռ, գանգատներ թիվ 15339/02, 21166/02, 20058/02, 11673/02 և 15343/02, *Károly Hegedűs v. Hungary* գործով 03.11.2011թ. վճիռ, գանգատ թիվ 11849/07):

Պետք է նշել նաև, որ **տուժողը ևս ունի իրեն պատճառված վնասի հատուցման իրավունքի իրացման հայեցողության լայն շրջանակ:** Մասնավորապես, նա կարող է ինչպես օգտվել քրեադատավարական ընթացակարգերով իր իրավունքների պաշտպանության հնարավորությունից, այնպես էլ չօգտվել այդ հնարավորությունից՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)2019
153

դիմել քաղաքացիադատավարական ընթացակարգերին: Տուժողը կարող է նաև ընդհանրապես չիրացնել հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման իր իրավունքը: Վերջինս հաշվի առնելով է օրենսդիրը Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրել «կարող է» դրույթը՝ այն պայմանավորելով տուժողի հայեցողությամբ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, անկախ այն հանգամանքից՝ տուժողը հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման իր իրավունքը քրեական դատավարության, թե քաղաքացիական դատավարության շրջանակներում է իրացնում, կիրառվում են քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերը (Քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան կարգավորումներն ամրագրված են «Քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում» վերտառությամբ 20-րդ գլխի նորմերով): Քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերի հիման վրա է ապահովվում հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի հատուցումը՝ նաև դատական ակտերի հարկադիր կատարման միջոցով կատարողական թերթի հիման վրա հարուցված գործի վարույթի շրջանակներում:

Սահմանադրական դատարանը գտնում է՝ քանի որ Օրենքի կարգավորման առարկայի շրջանակներից դուրս են դատավարական ընթացակարգերի հետ կապված էական (սկզբունքային) մանրամասներ սահմանելու հարցերը, Օրենքի այն իրավակարգավորումը, համաձայն որի՝ համաներման կիրառման դեպքում օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով (4-րդ հոդվածի 2-րդ մաս), բխում է վերոհիշյալ ընդհանուր իրավակարգավորումներից, և առկա են օրենսդրական բավարար երաշխիքներ տուժողի՝ հանցագործությամբ պատճառված վնասի՝ դատական կարգով հատուցման իրավունքի իրացման համար:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը նշում է, որ, Սահմանադրությամբ ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ամրա-

գրման սահմանադրական պահանջների կենսագործման նկատառումներից ելնելով, տուժողի՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի իրացման ապահովման ամբողջական և արդյունավետ օրենսդրական զարգացումների ապահովումն Ազգային ժողովի իրավասությունն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը և դրա հետ փոխկապակցված 2-րդ հոդվածի 10-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

26 փետրվարի 2019 թվականի
ՍԴՈ-1447



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ
ՕՐԵՆՔԻ 24-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 30-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մարտի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)2019

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՕ-295 օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել 1999 թվականի ապրիլի 30-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի մայիսի 6-ից: Հետագայում, Ազգային ժողովի կողմից 2011 թվականի հունիսի 23-ին ընդունված՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-247-Ն օրենքով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՕ-295 օրենքն ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ, որը Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 2011 թվականի հուլիսի 19-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն ոչ ուշ, քան այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն մասի պահանջը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման դիմում կարող է ներկայացնել այդ գործարքի կողմերից յուրաքանչյուրը»:

Իսկ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է.

«Պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե (...) նոտարական վավերացում ստացած գործարքի հիման վրա պետական գրանցման համար դիմումը ներկայացվել է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված 30-օրյա ժամկետի խախտմամբ»:

Վիճարկվող դրույթները նշված խմբագրությամբ շարադրվել են Ազգային ժողովի կողմից 2011 թվականի հունիսի 23-ին ընդունված ՀՕ-247-Ն օրենքով և ընդունման պահից օրենսդրական որևէ փոփոխության չեն ենթարկվել:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 2018 թվականի դեկտեմբերի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի՝ ՎԴ/3098/05/18 վարչական գործով «Վարչական գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումը

Ըստ դիմողի՝ իր մոտ ձևավորվել է ողջամիտ կասկած այն հարցում, որ Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, սահմանափակելով մարդկանց սեփականության իրավունքը, բավարար չափով որոշակի չեն և խնդիրներ են ստեղծում սեփականության իրավունքի իրագործման հարցում:

Դիմողի գնահատմամբ՝ վիճարկվող դրույթներն այնքանով, որքանով չեն տարանջատում վարչական ակտի հիման վրա կատարված գործարքները և չեն սահմանում դրանց չգրանցման հետևանքները, չեն բավարարում Սահմանադրության 79-րդ հոդվածում ամրագրված իրավական որոշակիության պահանջներին և հակասում են Սահմանադրության 60-րդ հոդվածին, քանի որ վարչական ակտի հիման վրա պայմանագիր կնքելու և այն նոտարի կողմից վավերացվելու, սակայն Օրենքով սահմանված 30-օրյա ժամկետում պետական գրանցման չներկայացվելու դեպքում վարչական ակտի հիման վրա կնքված գործարքն առոչինչ է և ենթակա չէ պետական գրանցման՝ մի կողմից, իսկ վարչական ակտն ուժի մեջ է և առաջացնում է սեփականության իրավունքի նկատմամբ լեգիտիմ ակնկալիք՝ մյուս կողմից (բացառությամբ պայմանով վարչական ակտերի):

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 1(93)2019

Բացի դրանից, դիմողը կարծում է՝ թեև վարչական մարմին դիմելու ժամկետն ապահովում է իրավական կանխատեսելիությունը և իրավահարաբերությունների կայունությունն ու հուսալիությունը, սակայն այն չի կարող լինել անվերականգնելի, եթե բաց է թողնվել հարգելի պատճառներով:

Դիմողի եզրահանգմամբ՝ վիճարկվող դրույթներն այնքանով, որքանով չեն սահմանում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հարգելի պատճառներով բաց թողնված ժամկետի վերականգնման հնարավորություն՝ խախտելով անձի սեփականության իրավունքի արդյունավետ իրականացումը, հակասում են Սահմանադրության 60 և 79-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթների՝ իրավական օրենքին ներկայացվող որոշակիության պահանջին համապատասխանությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է այդ դրույթները դիտարկել դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10, 134, 135, 163 և 176-րդ հոդվածների հետ համադրության մեջ:

Պատասխանողի գնահատմամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը որպես անշարժ գույքի նկատմամբ համապատասխան հիմքով սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը: Մասնավորապես, օրենսգրքի 176-րդ հոդվածը որպես պայմանագրի հիման վրա գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը, եթե այդպիսի իրավունքն օրենքով ենթակա է գրանցման:

Բացի դրանից, ըստ պատասխանողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահը դիտում է որպես այդ իրավունքի ծագման նախապայման ոչ միայն սեփականության իրավունքի, այլև անշարժ գույքի նկատմամբ ցանկացած այլ գույքային իրավունքի պարագայում: Մասնավորապես, պատասխանողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225 և 235-րդ հոդվածներն իրավունքի պետական գրանցման պահով են պայմանավորում նաև համապատասխանաբար բնակելի տարածության օգտագործման իրավունքի և որոշ դեպքերում՝ գրավի իրավունքի ծագումը:

Պատասխանողի պնդմամբ՝ օրենսդիրն անշարժ գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այս կամ այն հիմքից բխող իրավունքների պետական գրանցման փաստին՝ միանշանակ հաղորդել է միանգամայն որոշակի նշանակություն՝ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների ծագումը պայմանավորելով ոչ թե դրանց համար հիմք հանդիսացող հանգամանքների առկայությամբ, այլ այդ հանգամանքների առկայության պայմաններում գույքային իրավունքի պետական գրանցման ճանաչման փաստով՝ գրանցման համար Օրենքով հստակ նախատեսվելով և ամրագրելով 30-օրյա ժամկետ:

Պատասխանողի համոզմամբ՝ խնդրո առարկա դրույթներն ամբողջությամբ համապատասխանում են իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, բավարար մատչելիության, համապատասխան սուբյեկտների կողմից իրենց վարքագիծն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու գործնական, ռեալ հնարավորության և օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքների առաջացման կանխատեսելիության պահանջներին:

Պատասխանողի եզրահանգմամբ՝ Օրենքի վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրության պահանջներին:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ դիմողի կողմից բարձրացված հարցադրումը վերաբերում է ոչ թե սեփականության իրավունքի սահմանափակման որոշակիության խնդրին, այլ այդ իրավունքի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի սահմանմանը:

Վիճարկվող դրույթները, ըստ էության, նախատեսում են սեփականության իրավունքի ձեռքբերման ընթացակարգ, և դիմողի կողմից բարձրացված հիմնախնդիրներն անհրաժեշտ է դիտարկել անձի սեփականության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրման տեսանկյունից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով ամրագրված դրույթների սահմանադրականության հարցը Սահմանադրական դատարանի կողմից կքննվի Սահմանադրության 60, 75 և 78-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից:

Սույն սահմանադրաիրավական վեճի հանգուցալուծման համար Սահմանադրական դատարանը կարևոր է համարում հատկապես հետևյալ հարցադրումները.

1) արդյոք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված համապատասխան գործարքների կնքումը, այդ թվում՝ վարչական ակտերին հաջորդող, և դրանք ոչ ուշ, քան 30 աշխատանքային օրվա ընթացքում պետական գրանցման ներկայացնելու պահանջները խնդրահարույց են սեփականության իրավունքի իրականացման համար արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի օրենսդրական ամրագրման սահմանադրական պահանջի տեսանկյունից,

2) արդյոք նոտարական կարգով կնքված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման համար նախատեսված 30-օրյա ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետի վերականգման օրենսդրական հնարավորության բացակայությունը խնդրահարույց է Սահմանադրության 60-րդ հոդվածի, անշարժ գույքի ձեռքբերման համար արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի օրենսդրական ամրագրման սահմանադրական պահանջի տեսանկյունից, ինչպես նաև սեփականության իրավունքի ձեռքբերման նկատմամբ լեզբիտիմ ակնկալիքի իրավունքի սահմանափակումն արդյոք հետապնդում է իրավաչափ, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակ, և դրան հասնելու համար օրենսդրի կողմից ընտրված պիտանի և անհրաժեշտ միջոց է:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն ուղղված է հատկապես տվյալ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացման ու պաշտպանության անհրաժեշտ երաշխիքների ապահովմանը:

Ելնելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի իրավական բովանդակությունից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ, անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պարտականություն սահմանելով և պետական գրանցման ենթակա իրավունքների ծագումն այդպիսի գրանցմամբ պայմանավորելով ու գրանցման ժամկետ սահմանելով, օրենսդիրն ունեցել է իրավաչափ նպատակ:

Օրենքի 3-րդ հոդվածի իրավակարգավորումների բովանդակությունից հետևում է, որ անշարժ գույքի պետական գրանցման հիմքում ընկած են որոշակի սկզբունքներ, որոնք առնչվում են պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների ճանաչմանը, երաշխավորմանն ու պաշտպանությանը, այդ գույքի կադաստրային գնահատմանը, հաշվառման տվյալների վերաբերյալ տեղեկատվական համակարգի ստեղծմանն ու կառավարմանը, ինչպես նաև նպաստում են գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տվյալների մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության ու միասնականության ապահովմանը և անշարժ գույքի շուկայի կայացմանը:

Հիշյալ սկզբունքների իրացման, հատկապես՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ճանաչման, երաշխավորման և պաշտպանության առավել արդյունավետ իրացման առաջին նախապայմանը գույքի սեփականատեր հանդիսացող անձի՝ պետության համար որոշակի լինելն է, ինչը, ի թիվս այլնի, ապահովվում է գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման ինստիտուտի միջոցով:

Հետևաբար՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար ժամկետի առկայությունը, ինչպես նաև վերջինիս լրանալու հանգամանքի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքների (բացառությամբ միակողմ գործարքների) անվավերությանը հանգեցնելու կամ նման գործարքների առչինչ լինելու իրավական հետևանքները ևս միտված են պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների արդյունավետ ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունն ապահովելուն:

4.2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 299-րդ հոդվածի համաձայն՝ գործարքների նոտարական վավերացումը պարտադիր է կա՛մ օրենսգրքով նախատեսված դեպքերում, կա՛մ գործարքի կողմերից մեկի պահանջով, անգամ եթե տվյալ տեսակի գործարքների համար այդ ձևը պարտադիր չէ:

Միաժամանակ նույն հոդվածի համաձայն՝ նոտարական վավերացման պահանջը չի տարածվում այդ հոդվածում մատնանշված այն պայմանագրերի վրա (որոնց շարքին է դասվում նաև անշարժ գույքի վաճառքի պայմանագրի ձևին վերաբերող 562-րդ հոդվածը), որոնց բոլոր պայմանները շարադրված են ՀՀ կառավարության հաստատած օրինակելի պայմանագրերի պայմաններին համապատասխան, և որոնք չեն պարունակում այլ պայմաններ, իսկ այդ պայմանագրերում կողմերի ստորագրությունների իսկությունը ճանաչվել է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով:

Հարկ է նշել նաև, որ մի շարք դեպքերում որոշակի տեսակի գործարքների համար նոտարական կարգով կնքելու պարտադիր պահանջը սահմանված է այս կամ այն օրենքով: Այս դեպքերի շարքին է դասվում, մասնավորապես, ՀՀ հողային օրենսգրքի 70-րդ հոդվածը, որը նվիրված է աճուրդի արդյունքների ձևակերպմանը և սեփականության իրավունքի փոխանցմանը, և որով սահմանված է, որ գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքի օտարման պայմանագրերը կարող են կնքվել ինչպես նոտարական կարգով, այնպես էլ առանց նոտարական վավերացման, եթե կնքվող գործարքը բավարարում է վերոհիշյալ պայմաններին:

Հաշվի առնելով այն, որ գործարքները նոտարական կարգով կնքելու պահանջները սահմանված են իրավական այլ ակտերով, սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը չի անդրադառնա այդ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերին:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ մի շարք դեպքերում գույքի օտարման մասին որոշումները կայացվում են վարչական ակտերով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ պետության պարտականությունն է սահմանել սեփականության օտարման

այնպիսի արդյունավետ կառուցակարգեր և կարգավորումներ, որոնք նվազագույնս կծանրաբեռնեն գույքը ձեռքբերողներին՝ կապված գործարքների կնքման և դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման հետ: Ընդ որում՝ վարչական ակտի հիման վրա սեփականության իրավունքի ձեռքբերման ամրագրումն առանձին դեպքերում կարող է իրականացվել նոտարական գործառույթների համատեղման եղանակով, երբ մեկ մարմինը կստանձնի անձին վարչական ակտի տրամադրմանն ուղղված բոլոր գործողությունների կատարումը:

4.3. Հաշվի առնելով անշարժ գույքի առանձնահատուկ նշանակությունը քաղաքացիաիրավական շրջանառության տեսանկյունից՝ օրենսդիրը սահմանել է անշարժ գույքի նկատմամբ մի շարք իրավունքների պետական գրանցման պարտադիր պահանջ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է այդ իրավունքի պետական գրանցման պահից:

Սահմանելով անշարժ գույքի հետ կապված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պարտադիր պահանջ՝ օրենսդիրը միաժամանակ նախատեսել է այդ գործարքներից ծագող իրավունքների գրանցման պահանջը չկատարելու իրավական հետևանքները: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի համաձայն՝ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

Սակայն, հռչակելով պետական գրանցման պահանջը չպահպանած գործարքներն անվավեր, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը չի նախատեսում որևէ ժամկետ նոտարական վավերացումից հետո այդ գործարքներից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար: Նման ժամկետը սահմանված է սույն գործով վիճարկվող 24-րդ հոդվածում:

Ելնելով վերոհիշյալ հանգամանքից, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքը ծագում է պետական գրանցման պահից՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՀՅԲԴ4/0002/02/08 քաղաքացիական գործով ընդունած որոշմամբ արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝

«անշարժ գույքի վերաբերյալ կնքված գործարքներից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու 30-օրյա ժամկետը իրավական հետևանքներ չառաջացնող է, հետևաբար, Կադաստրը, 30-օրյա ժամկետը բաց թողած լինելու հիմքով մերժելով անձի սեփականության իրավունքը գրանցելու մասին դիմումը, սխալ է մեկնաբանել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, ինչի արդյունքում մերժել է անձի սեփականության իրավունքի պետական գրանցումն այնպիսի հիմքով, որպիսին նախատեսված չէ նույն օրենքի 43-րդ հոդվածով»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի՝ 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-247-Ն օրենքով նոր խմբագրությամբ շարադրվելու արդյունքում սահմանվեց, որ նոտարական վավերացում ստացած գործարքի հիման վրա պետական գրանցման դիմումը ներկայացնելը սահմանված 30-օրյա ժամկետի խախտմամբ, ենթակա է մերժման: Այս փոփոխությունների արդյունքում գործնականում անհնար է դառնում Վճռաբեկ դատարանի հիշյալ դիրքորոշման իրագործումն իրավակիրառ պրակտիկայում, քանի որ օրենսդիրը ժամկետի բացթողնման հանգամանքն ուղղակիորեն նախատեսել է որպես իրավունքների գրանցումը մերժելու հիմք:

4.4. Սահմանադրության 60 և 75-րդ հոդվածներով ամրագրված իրավակարգավորումների ուժով պետությունը երաշխավորում է անձի սեփականության իրավունքի նկատմամբ օրինական ակնկալիքների իրավունքի իրացումը, ի թիվս այլնի՝ վերջինիս իրացման համար արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի օրենսդրական ամրագրման միջոցով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու **լեզիտիմ ակնկալիքը** (տե՛ս, մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, *Trgo v. Croatia*, 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44):

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-723, ՄԴՈ-741, ՄԴՈ-881 որոշումներում փաստել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ **լեզիտիմ ակնկալիքների** հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորու-

թյունը: Ավելին, 18.03.2008թ. ՄԴՈ-741 որոշման 8-րդ կետում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման համար ժամկետի առկայությունը, ինչպես նաև վերջինիս լրանալու հանգամանքի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքների (բացառությամբ միակողմ գործարքների) անվավերությանը հանգեցնելու կամ այդ գործարքների առջին լինելու իրավական հետևանքներն ընդհանուր առմամբ միտված են պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների արդյունավետ ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունն ապահովելուն:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործող իրավակարգավորումները կողմերի համար խոչընդոտ չեն ստեղծում Օրենքով սահմանված 30-օրյա ժամկետը լրանալուց հետո նոտարական կարգով նոր պայմանագիր կնքելու համար, այդ թվում՝ նախկինում կայացված և իրավական ուժը պահպանված վարչական ակտի հիման վրա:

Այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից նոտարական կարգով կնքված գործարքների պետական գրանցման համար 30-օրյա ժամկետ սահմանելու և այդ ժամկետը լրանալուց հետո բացասական իրավական հետևանքների վրա հասնելու օրենսդրական ընթացակարգերը մի շարք դեպքերում կարող են խոչընդոտել անձի՝ սեփականության նկատմամբ իրավաչափ սպասելիքների իրացմանը, հետևաբար՝ այդ ընթացակարգերը արդյունավետ չեն անձի՝ սեփականության նկատմամբ օրինական ակնկալիքների իրավունքի իրացման տեսանկյունից:

4.5. Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունը և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանափակում են անձի՝ սեփականության իրավունքի ձեռքբերման նկատմամբ օրինական ակնկալիքների իրավունքը: Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերու-

թյունը, որին հղում է արվում 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, անվավեր կամ առոչինչ է ճանաչում անշարժ գույքի վերաբերյալ բոլոր այն գործարքները, որոնցից բխող իրավունքները կնքման պահից սկսած 30 աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվում պետական գրանցման:

Օրենսդրական այս կարգավորումների արդյունքում սահմանափակվում է անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքը, քանի որ 30 աշխատանքային օրվա ժամկետը բաց թողնելուց հետո նա այլևս չի կարող իր կողմից արդեն իսկ կնքված գործարքի միջոցով ձեռք բերել սեփականության իրավունք:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ օրենսդրի կողմից սեփականության իրավունքի այս սահմանափակումն արդարացված չէ Սահմանադրության տեսանկյունից այն հիմնավորմամբ, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանափակումը տեղի է ունեցել օրենքի հիման վրա (24-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերություն և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ), ինչպես նաև միտված է եղել հանրության շահերի պաշտպանությանը, ուստի հետապնդել է իրավաչափ նպատակ:

Տնտեսական արժեք ներկայացնող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, ինչպես նշվեց, պետք է պետության և մասնավոր անձանց համար ճանաչելի լինի: Այդ պատճառով էլ այդ իրավունքը ենթակա է պետական գրանցման: Դրանով օրենսդիրն իրավական առումով պարզություն և որոշակիություն է հաղորդում գույքի նկատմամբ սեփականության իրավունքին, ինչը, իր հերթին, հետագայում կարող է ծառայել որպես ապացույց տարբեր վարույթների (այդ թվում՝ դատական) շրջանակներում:

Սակայն իրավաչափ նպատակ հետապնդող այս կարգավորումն ընդունելիս օրենսդիրը պետք է հաշվի առներ Սահմանադրության 78-րդ հոդվածով երաշխավորված համաչափության սկզբունքը, ըստ որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Ընտրված միջոցը տվյալ դեպքում Օրենքի վերոնշյալ հոդվածների կարգավորումներն են: Դրանք պիտանի են սահմանված նպատակին հասնելու համար: Նպատակն այստեղ իրավական հստակությունն է: Պետությունն ունի իրավաչափ շահ այն հարցի պարզաբանման վերաբերյալ, թե ով է անշարժ գույքի սեփականատերը: Այդ հարցի պատասխանից են կախված մի շարք այլ ֆինանսատնտեսական հարցերի պատասխաններ:

Ընդունելով նման կարգավորում՝ օրենսդիրը սահմանափակում է իրավական առումով անորոշ վիճակի տևողությունը. եթե 30 աշխատանքային օրվա ընթացքում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվում, ապա գործարքը դառնում է անվավեր: Դրանով իրավական անորոշությունը վերացվում է, ինչը պիտանի է հիշյալ նպատակին հասնելու համար:

Այդուհանդերձ, օրենսդրի կողմից ընտրված միջոցը պետք է նաև անհրաժեշտ լինի: Միջոցն անհրաժեշտ է, եթե չկա մեկ այլ ավելի մեղմ միջամտող միջոց, որով նույն արդյունավետությամբ կարելի է հասնել նպատակին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից սահմանված կարգավորումն անհրաժեշտ չէ, քանի որ որպես ավելի մեղմ միջոց Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասում կարող էր նախատեսվել դրույթ ժամկետը բաց թողնելը վերականգնելու վերաբերյալ, եթե բաց թողնելը տեղի էր ունեցել առանց անձի մեղքի:

Գործարքի անվավերությանը հանգեցնելու կամ առոչինչ լինելու սահմանումը որպես իրավական հետևանք անհամաչափ սահմանափակում է սեփականության իրավունքի ձեռքբերման նկատմամբ օրինական ակնկալիքի իրավունքը: Կարող են լինել դեպքեր, երբ անձի կողմից ժամկետը չպահպանելն ամենևին նրա մեղավորությունից չբխի: Այս հանգամանքն օրենսդիրը պետք է հաշվի առներ համապատասխան հարցը կարգավորելիս:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրն Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասում ընտրել է միջոցներից այն մեկը, որն էապես ավելի խիստ է միջամտում անձի սեփականության իրավունքին, քան դա կարող էր լինել վերոնշյալ բացառությունը սահմանված լինելու դեպքում, այն պիտանի, սակայն Մահմանադրության 78-րդ հոդվածի իմաստով անհրաժեշտ միջոց չէ: Ուստի գործարքի անվավերության իրավական հետևանքներ կարող է առաջացնել միայն անձի մեղավորությամբ Օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 4-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**։

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասն՝ այն մասով, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքներն այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած ոչ ուշ, քան 30 աշխատանքային օրվա ընթացքում պետական գրանցման ներկայացնելու պահանջը չպահպանելը՝ առանց ժամկետը բաց թողնելու պատճառները հաշվի առնելու, հանգեցնում է գործարքի անվավերությանը, ճանաչել Սահմանադրության 60, 75 և 78-րդ հոդվածներին հակասող։

2. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ այն մասով, որ խոչընդոտում է հարգելի պատճառով 30-օրյա ժամկետի խախտմամբ ներկայացված դիմումների հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, ճանաչել Սահմանադրության 60, 75 և 78-րդ հոդվածներին հակասող։

3. Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման հրապարակման պահին վիճարկվող դրույթների Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի բաց, որը խոչընդոտ կդառնա գույքի, հատկապես անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ձեռքբերման օրինականությունը պատշաճ կերպով ապահովելու համար, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը

կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 մարտի 2019 թվականի
ՍԴՈ-1448



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԳԱՅԱՆԵ ՀԱՅՐՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 109-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 9-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 105-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ
ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մարտի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Գ. Բեքմեզյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Գայանե Հայրոյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի

1(93)2019
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆

և 105-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել 2004 թվականի դեկտեմբերի 14-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

Օրենսգրքի «Աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը» վերտառությամբ 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանվում է.

«1. Աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝

(...)

9) աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը նշված խմբագրությամբ շարադրվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-117-Ն օրենքով (24.06.2010թ.):

Օրենսգրքի «Աշխատանքի էական պայմանները փոփոխելը» վերտառությամբ 105-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է.

«2. Աշխատանքի էական պայմաններ են աշխատանքի վայրը, աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը, արտոնությունները, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմը, տարակարգերը և պաշտոնների անվանումները, աշխատանքային պայմանագրի տեսակը, որոնց և (կամ) գործատուի փոփոխման դեպքում գործատուն աշխատողին պետք է ծանուցի սույն օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված ժամկետներում, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) հիմնական աշխատավարձի չափի և (կամ) հավելումների, հավելավճարների բարձրացման դեպքում, երբ մյուս պայմանները պահպանվում են.

2) օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակի կրճատման դեպքում, երբ մյուս պայմանները պահպանվում են»:

Վերոնշյալ դրույթները նշված խմբագրությամբ շարադրվել են «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-96-Ն օրենքով (22.06.2015թ.):

Գործի քննության առիթը Գ. Հայրոյանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, կողմերի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգիրքը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը և 105-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում են Սահմանադրության 16-րդ հոդվածին, 57-րդ հոդվածի 2-րդ մասին և 79-րդ հոդվածին, քանի որ նշված դրույթներն անորոշ են, հստակ չեն, ինչի արդյունքում խախտվում են աշխատողների և հատկապես հղի կանանց ու մինչև մեկ տարեկան երեխա խնամող մայրերի իրավունքները: Բացի դրանից, դիմողի կարծիքով՝ Օրենսգրքի նշված դրույթներին պրակտիկայում տրվող մեկնաբանություններն աշխատողներին հնարավորություն չեն տալիս իրականացնել Սահմանադրությամբ վերապահված աշխատանքային իրավունքների արդյունավետ պաշտպանությունը՝ դրանով իսկ խախտելով Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքը, աշխատանքից անհիմն ազատելու դեպքում՝ պաշտպանության իրավունքը և ընտանիքի պաշտպանությունը:

Դիմողի կարծիքով՝ Օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «աշխատանքի էական պայմաններ» ձևակերպումը հնարավորություն է տալիս գործատուներին, չարաշահելով իրենց իրավունքը, ազատվել անցանկալի աշխատակիցներից: Ընդ որում՝ դիմողը կարևորում է այն հանգամանքը, որ Օրենսգիրքը չի պարտադրում գործատուներին հիմնավորել էական պայմանների փոփոխության անհրաժեշտությունը, ինչը նշանակում է, որ գործատուն ցանկացած պահի կարող է նման փոփոխության դիմել:

Դիմողը նշում է նաև, որ Օրենսգրքի 109-րդ հոդվածում նշված հիմքերի վերաբերյալ, բացառությամբ 1-ին մասի 9-րդ կետի հիմքից, սահմանված են երաշխիքներ աշխատանքային պայմանագրի անհիմն լուծման դեպքում աշխատողի իրավունքների պաշտպանության համար: Ավելին, ըստ դիմողի՝ աշխատանքի էական պայ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(93)2019

մանների փոփոխության հիմքով աշխատանքային պայմանագրի լուծումը նույնանում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հետ, որի մասով օրենսդրությամբ սահմանված են մի շարք երաշխիքներ, մինչդեռ այն հանգամանքից, որ աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ և աշխատանքի էական պայմանների փոփոխության հիմքով նախատեսված են որպես առանձին հիմքեր, հետևում է, որ աշխատանքի էական պայմանների փոփոխության հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողները զրկվում են իրենց աշխատանքային իրավունքների պաշտպանության օրենսդրությամբ նախատեսված երաշխիքներից:

Հղում կատարելով Սահմանադրությամբ ամրագրված դրույթներին՝ դիմողը գտնում է, որ պետությունը պարտավոր է ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են մայրության և մանկության պաշտպանությանը, ինչից բխում է, որ պետությունը չի կարող ընդունել այնպիսի իրավական ակտեր, որոնք կարող են խախտել այդ պաշտպանության հնարավորությունները: Սահմանադրությամբ ամրագրված «աշխատանքից անհիմն ազատել» ձևակերպումը հուշում է, որ ցանկացած ազատում պետք է լինի հիմնավորված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ դիմողը խնդրում է Օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասը և 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը ճանաչել Սահմանադրության 79-րդ հոդվածին, 16-րդ հոդվածին և 57-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր, իսկ Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու դեպքում, որոշել, որ Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը դիմողի նկատմամբ սխալ է մեկնաբանվել և կիրառվել:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողի կարծիքով՝ գործի շրջանակներում վիճարկվող դրույթների մասով դիմողը բարձրացնում է բացառապես դատարանների կողմից վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Պատասխանողի կարծիքով՝ դիմողը սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթների հակասահմանադրականությունը կա-

պել է բացառապես դիմողի ընտանիքի պաշտպանության և աշխատանքային իրավունքների հետ, որի վերաբերյալ, ըստ էության, համապատասխան հիմնավորումներ չի ներկայացրել:

Բացի դրանից, պատասխանողը նշում է, որ դիմումի և դրանում վկայակոչված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ վիճարկվող նորմերի սահմանադրականությամբ, իսկ դիմողն իրականում բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ գործի բացասական ելքը պայմանավորելով այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը համապատասխան իրավահարաբերությունների վրա տարածել է Օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասը, մինչդեռ, ըստ դիմողի՝ գործի շրջանակներում կողմերը պետք է առաջնորդվեին Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի և 113-րդ հոդվածի իրավակարգավորումներով:

Այդ իսկ պատճառով պատասխանողը գտնում է, որ նման մոտեցումը ոչ թե սահմանադրաիրավական վեճի առարկա է, այլ բացառապես վիճարկվող նորմերի կիրառման իրավաչափության հարց:

Ամփոփելով վերոգրյալը՝ պատասխանողն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումը պետք է պարունակի հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը», իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումներով գործի քննությունը (...) կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է (...):»:

Եզրափակելով՝ պատասխանողը գտնում է՝ «Գայանե Հայրոյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 105-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը ենթակա է կարճման:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) արդյոք վիճարկվող դրույթները ձևակերպված են բավարար չափով որոշակի և հստակ,

2) արդյոք աշխատանքի էական պայմանների փոփոխման հիմքով աշխատողին աշխատանքից ազատելը չի խախտում Սահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսված մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելու արգելքը,

3) արդյոք գործատուի վերակազմակերպման հանգամանքն իրավակիրառ պրակտիկայում որպես աշխատանքի էական պայմանների փոփոխման հանգամանք դիտարկելը և այդ հիմքով մինչև մեկ տարեկան երեխա փաստացի խնամող աշխատակցին աշխատանքից ազատելը չի խախտում Սահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսված մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելու արգելքը և չի խոչընդոտում աշխատողի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանվելու իրավունքի իրականացմանը:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավակիրառ պրակտիկայում Օրենսգրքի 109-րդ հոդվածով նախատեսված գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը, դիմողի պնդմամբ, փաստացի նույնացվում է Օրենսգրքի նույն հոդվածով սահմանված՝ աշխատանքի էական պայմանների փոփոխման հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման հետ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու նպատակով իրականացնել այդ հիմքերի համադրված վերլուծություն:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Աշխատանքային հարաբերություններն աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, որոնց ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, դրանց կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահ-

պանման պայմանները հանդիսանում են Օրենսգրքի կարգավորման առարկան: Ըստ այդմ, Օրենսգրքով սահմանվում են ինչպես աշխատանքային հարաբերությունների ծագման, այնպես էլ դրանց դադարման հետ կապված դրույթներ:

Հաշվի առնելով դիմողի դիտարկումներն Օրենսգրքի 109-րդ հոդվածով նախատեսված աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերի վերաբերյալ, Սահմանադրական դատարանը, համադրելով Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը նույն մասի 9-րդ կետով սահմանված աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում աշխատանքային պայմանագրի լուծման հիմքի հետ, արձանագրում է հետևյալը.

Օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների համաձայն՝ աշխատանքի էական պայմանների փոփոխություն թույլատրվում է իրականացնել, եթե փոփոխվել են արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանները, որի արդյունքում աշխատողի՝ նոր պայմաններով աշխատելու ցանկության բացակայությունը հիմք է աշխատանքային պայմանագիրը լուծելու համար: Մինչդեռ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում, որը պետք է պայմանավորված լինի արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման **և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ**: Միայն այն հանգամանքը, որ երկու դեպքում էլ կատարվելիք գործողությունները (մի դեպքում՝ աշխատանքի էական պայմանների փոփոխությունը, մյուս դեպքում՝ աշխատողների քանակի և կամ հաստիքների կրճատումը) տեղի են ունենում գրեթե նույն պայմանների վրա հասնելու դեպքում, դեռ չի նշանակում, որ գործ ունենք բացարձակապես նույնարժեքանոց իրավիճակների հետ:

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում խոսքն աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատման մասին է, որի արդյունքում գործատուն **իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկում է այլ աշխատանք**, իսկ էական պայմանների փոփոխու-

թյան դեպքում կարող են փոփոխվել աշխատանքի վայրը, աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը, արտոնությունները, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմը, տարակարգերը և պաշտոնների անվանումները, աշխատանքային պայմանագրի տեսակը, որի պարագայում աշխատողի՝ **փոփոխված պայմաններով աշխատելուց հրաժարվելու դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծվում է:**

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որ աշխատանքի էական պայմանների փոփոխությունն իրականացվում է գործատուի կողմից, ինչը նույնպես հանգեցնում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման, և այս առումով ևս աշխատողը պետք է հնարավորություն ունենա օգտվելու Օրենսգրքի 114-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն նախաձեռնում է աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում, այսինքն՝ գործատուի նպատակը, ի սկզբանե, որոշ աշխատողների հետ աշխատանքային պայմանագրի լուծումն է, մինչդեռ աշխատանքի էական պայմանների փոփոխության հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում գործատուն չի նախաձեռնում աշխատանքային պայմանագրի լուծում, քանի որ գործատուի նպատակը, առավելապես, աշխատանքի վայրի, աշխատանքի վարձատրության չափի և (կամ) այն որոշելու ձևի, արտոնությունների, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմի, տարակարգերի և պաշտոնների անվանումների, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի տեսակի փոփոխությունն է: Տվյալ դեպքում գործատուն այս կամ այն աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի լուծման նպատակ չի հետապնդում, մինչնայն ժամանակ չի կարող ստիպել աշխատողին աշխատել իր կողմից առաջարկված պայմաններով, եթե դրանք հարմար կամ ընդունելի չեն աշխատողի համար:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատումը և աշխատանքի էական պայմանները փոփոխելը տարբեր երևույթներ են, ուստի դրանց վերաբերյալ օրենսդրական կարգավորումները չեն կարող նույնաբովանդակ լինել:

4.2. Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս՝ օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումներն ամրագրված են Սահմանադրական դատարանի մի շարք մասնավորապես, ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1270 որոշումներում, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (ՄԴՈ-1357):

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ, մասնավորապես, որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՄԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի. իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՄԴՈ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՄԴՈ-1176):

Օրենսգրքի վիճարկվող 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանվում է, որ աշխատանքային պայմանագիրը լուծվում է աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում, իսկ 105-րդ հոդվածի 2-րդ մասով հստակ սահմանվում են, թե որոնք են աշխատանքի էական պայմանները: Բացի դրանից, Օրենսգրքը սահմանում է նաև, թե որ դեպքում է աշխատանքի էական պայմանների փոփոխությունը հանգեցնում աշխատանքային պայմանագրի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթները ձևակերպված են բավարար հստակությամբ և հնարավորություն են տալիս դրանց հասցեատերերին ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրանց հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող դրույթներով ամրագրված պահանջներին:

4.3. Սահմանադրության՝ «Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները» վերտառությամբ 57-րդ հոդվածը, որն ամրագրում է աշխատանքի ընտրության ազատությունը և երաշխավորում աշխատանքային իրավունքները, ի թիվս այլնի ամրագրում է յուրաքանչյուր աշխատողի՝ աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքը:

Աշխատանքի ընտրության ազատությունը ներառում է, ի թիվս այլնի, աշխատանք փնտրելու իրավունքը, որի մեկնաբանությունից բխում է նաև արդեն ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունքը (ՄԴՈ-902):

Աշխատանքից անհիմն ազատվելուց պաշտպանության սահմանադրական կարևորագույն երաշխիքներից է այն, որ աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ աշխատանքից ազատման հիմքերն օրենքով սպառիչ նախատեսելուց բացի, պետությունը պետք է ապահովի այդ հիմքերի համապատասխանությունը Սահմանադրության 75, 78, 79, 80 և 81-րդ հոդվածների պահանջներին, մասնավորապես, աշխատանքային պայմանագրերի լուծման հետ կապված իրավակարգավորումները պետք է պարունակեն անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, լինեն պիտանի և անհրաժեշտ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, համարժեք՝ սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը, լինեն բավարար չափով որոշակի, իսկ այդ կանոնակարգումներով հիմնական իրավունքների սահմանափակումները չզերազանցեն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Օրենսգիրքը, նախատեսելով աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը, միաժամանակ ամրագրել է յուրաքանչյուր հիմքի իրացման առանձնահատկությունները և այդ հիմքով աշխատանք-

քային պայմանագրի լուծման դեպքում կողմերի աշխատանքային իրավունքների պաշտպանության երաշխիքները: Մասնավորապես, Օրենսգրքի 113-րդ հոդվածով սահմանվում են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծմանը վերաբերող մի շարք առանձնահատկություններ, որոնց շարքին է դասվում նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, որով, մասնավորապես, սահմանվում է, որ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում: Մահմանվում է նաև, որ նշված հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Իսկ Օրենսգրքի 114-րդ հոդվածով սահմանվում են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքները, որոնք աշխատողների իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ են: Եթե գործատուն նախատեսում է աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատում և դրա արդյունքում այս կամ այն աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի լուծում, ապա այդ գործընթացը նախաձեռնելու պահից գործատուն պետք է ստուգի՝ արդյոք Օրենսգրքի 114-րդ հոդվածով նախատեսված այս կամ այն երաշխիքը տարածվում է տվյալ աշխատողի վրա:

Այսպիսով, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում առկա են ընդհանուր և հատուկ երաշխիքներ: Ընդհանուր երաշխիքը գործատուի կողմից իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առող-

ջական վիճակին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու պարտականությունն է: Միաժամանակ, օրենսդրությամբ նախատեսված են նաև հատուկ երաշխիքներ, որոնք արգելում են աշխատանքային պայմանագրի լուծումը, ուստի այդ պարագայում համապատասխան երաշխիքներից օգտվող աշխատողներին այլ աշխատանք առաջարկելու անհրաժեշտություն չկա, քանի որ նշված աշխատողների հետ աշխատանքային պայմանագրի լուծումն արդեն իսկ արգելված է:

Ինչ վերաբերում է աշխատանքի էական պայմանների փոփոխման հիմքով աշխատանքային պայմանագրի լուծմանը, ապա տվյալ դեպքում Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2.2-րդ կետով նախատեսված դրույթը, այն է՝ երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում աշխատանքային պայմանագրի լուծման արգելքը, չի գործում, քանի որ աշխատանքի փոփոխված պայմաններով աշխատելու ցանկություն հայտնած աշխատակիցը չի ազատվում աշխատանքից:

Սահմանելով նման իրավակարգավորումներ՝ օրենսդիրը նպատակ է ունեցել հավասարակշռել աշխատողի և գործատուի շահերը՝ հաշվի առնելով նաև այն, որ աշխատանքի կազմակերպման նոր մոտեցումների և զարգացող տեխնոլոգիաների ներդրման պարագայում մի շարք դեպքերում անխուսափելի են դառնում արտադրության ծավալների, ինչպես նաև տնտեսական, տեխնոլոգիական կամ աշխատանքային պայմանների փոփոխությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ աշխատանքից ազատումը դեռևս աշխատողի իրավունքների խախտում չէ, եթե այն ունի իրավական հիմք: Աշխատանքային հարաբերությունների դադարեցումը չի կարող լինել կամայական, սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այդ իսկ պատճառով օրենսդրությամբ հստակ և սպառիչ թվարկված են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում հնարավոր է լուծել աշխատանքային պայմանագիրը:

Այս առումով հարկ է վկայակոչել Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումն առ այն, որ «Աշխատանքով պայմանավորված հարաբերությունների կարգավորման պայմանագրային բնույթը միաժամանակ պահանջում է ոչ միայն իրավունքի

իրացման, այլն պարտականության կատարման անհրաժեշտություն, և կողմերի, տվյալ դեպքում գործատուի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունքի իրացումը չպետք է պայմանավորված լինի նպատակահարմարությամբ կամ սուբյեկտիվ բնույթի այլ գործոնով, այլ հետապնդի արդար, իրավաբանորեն ամրագրված որոշակի նպատակ՝ աշխատանքի իրավունքի իրացման սահմանադրորեն կանխորոշված սկզբունքներին համապատասխան» (ՄԴՈ-792):

4.4. Անդրադառնալով դիմողի նկատմամբ կիրառված՝ սույն գործով վիճարկվող դրույթների իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանություններին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ «իրավաբանական անձն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս նրանք համարվում են վերակազմակերպված միացած իրավաբանական անձի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից»։ Միննույն ժամանակ, քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձի միանալու դեպքում միացած իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն անցնում են վերջինիս՝ փոխանցման ակտին համապատասխան»։

Գործի նյութերի համաձայն՝ վերակազմակերպվող բանկերի փոխանցման ակտի «Այլ պայմաններ» 5-րդ հատվածում նշվում է, որ «ՀՀ կենտրոնական բանկի կողմից սույն փոխանցման ակտը գրանցելուց հետո Ընկերության աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները շարունակվում են Ընկերություն 1-ի կողմից նրանց առաջարկվող աշխատանքային պայմաններով, բացառությամբ եթե տեղի են ունենում աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատումներ»։

Մյուս կողմից, Օրենսգրքի «Աշխատանքային պայմանագիրը լուծելու սահմանափակումները կազմակերպությունը վերակազմակերպելիս» վերտառությամբ 126-րդ հոդվածով սահմանվում է, որ կազմակերպության վերակազմակերպումը, ինչպես նաև դրան կատարմամբ պարտավորական կամ այլ իրավունքներ ունեցող անձանց փոփոխությունը հիմք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե տեղի չի ունենում աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում։

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կազմակերպությունների վերակազմակերպումն ինքնին չի ենթադրում արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխում և դրանից բխող աշխատանքի էական պայմանների փոփոխություն: Ավելին, նպատակ ունենալով աշխատողներին ապահովագրել գործատուների հնարավոր չարաշահումներից, օրենսդիրը բացառել է գործատուի վերակազմակերպումը դիտել որպես աշխատանքի էական պայմանների փոփոխման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու հանգամանք, հաշվի առնելով, որ նման իրավիճակներում գործատուի նախաձեռնությամբ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատման հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում կգործեն Օրենսգրքով նախատեսված մի շարք երաշխիքներ, այդ թվում՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի լուծման արգելքը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխմամբ պայմանավորված գործատուի կողմից աշխատանքի էական պայմանները փոփոխելու իրավունքը չի ենթադրում վերջինիս լիակատար ազատություն՝ ցանկացած նոր պայման սահմանելու առումով: Գործատուի կողմից յուրաքանչյուր էական պայմանի փոփոխումը պետք է լինի ողջամիտ և անհրաժեշտ: Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքի էական պայմանների փոփոխության դեպքում աշխատանքային պայմանագիրը շարունակում է գործել, աշխատանքի էական պայմանները փոփոխելու գործատուի հնարավորությունները պետք է սահմանափակվեն նաև Օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված պահանջներով, համաձայն որոնց՝ «Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել **որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք....**»:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում

պաշտպանության իրավունք, Սահմանադրական դատարանը գտնում է, որ աշխատանքի էական պայմանների փոփոխության գործընթացը պետք է լինի իրավաբանորեն հստակ ձևակերպված. **աշխատանքի էական պայմանները փոփոխող ակտում պետք է հիմնավորվի փոփոխության անհրաժեշտությունը և համապատասխանությունն Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:** Նման մոտեցումը բխում է Սահմանադրության վերոհիշյալ նորմից, քանի որ նման պայմաններում աշխատողը հնարավորություն է ստանում արդյունավետ պաշտպանվել աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում:

Մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, եթե որոշ պաշտոնների մասով՝ իրենց բնույթով և առանձնահատկություններով պայմանավորված, պետք է նախատեսել կարգավորման առանձնահատուկ կարգ, ապա դրանք պետք է հստակ ամրագրվեն համապատասխան իրավական ակտերում՝ ապահովելով կանխատեսելիություն և որոշակիություն: Այս առումով հարկ է հիշատակել Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 28-ի ՄԴՈ-1316 որոշումը, որով, մասնավորապես, նշվում է. «Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով»: ... Ընդունելով հանդերձ, որ նման իրավակարգավորումը գտնվում է օրենսդրի իրավասության շրջանակներում, հարկ է ընդգծել, որ այս ոլորտի աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորելիս անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ ընթացակարգային երաշխիքներ՝ նման իրավահարաբերություններում հայտնված անձանց իրավունքների պաշտպանության համար»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ աշխատանքի էական պայմանները փոփոխվելու հիմքով աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել, երբ սահմանված կարգով տեղի է ունեցել աշխատանքի մեկ կամ մի քանի էական պայմանի փոփոխում՝ գործատուի կողմից համապատասխան ակտ կայացնելու միջոցով, որում հիմնավորվում է այդ պայմանների փոփոխության անհրաժեշտությունը՝ կապված գործատուի արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման հետ:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 մարտի 2019 թվականի
ՄԴՈ-1449



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՏԵՂԵԿՎԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մարտի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրեն Ա. Վանեցյանի,

Համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(93)2019
187

նոյեմբերի 30-ին ստորագրված՝ «Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2019 թվականի հունվարի 31-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի նոյեմբերի 30-ին՝ տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում ՀԱՊԿ անդամ պետությունների փոխգործակցության զարգացման նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել ՀԱՊԿ անդամ պետությունների տեղեկատվական անվտանգության համակարգի հետագա զարգացումը՝ Կողմերի միջպետական համագործակցության և միջգերատեսչական փոխգործակցության ամրապնդման հիման վրա, ինչպես նաև՝ տեղեկատվական ոլորտում սպառնալիքներին հակազդման մեխանիզմների կատարելագործումը, ՀԱՊԿ անդամ պետությունների տեղեկատվական տարածքում տեղեկատվական անվտանգության ամրապնդմանն ու անօրինական գործունեության հակազդմանն ուղղված համատեղ միջոցառումների անցկացումը, միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերում համագործակցությունը, համաձայնեցված դիրքորոշման մշակումը միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերով և միջազգային մակարդակում դրանք առաջ տանելը,

1(93)2019

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄԱԿ-ի հովանու ներքո տեղեկատվական տարածքում պետությունների պատասխանատու վարքագծի նորմերի ու սկզբունքների, համընդհանուր կանոնների մշակմանն ու շուտափույթ ընդունմանն աջակցությունը և փոխադարձ օգնությունը՝ Կողմերի տեղեկատվական անվտանգության ապահովման տեխնոլոգիական հիմքի զարգացման նպատակով (Հոդված 1),

- տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Կողմերի հետ իրականացնել փոխգործակցություն՝ համագործակցության իրավական հիմքերի մշակման և առաջխաղացման, միջազգային իրավական բազայի կատարելագործմանն աջակցման գործում, իրականացնել համագործակցություն տեղեկատվական անվտանգության սպառնալիքի դեմ համատեղ արձագանքման գործնական մեխանիզմների ձևավորման, տեղեկատվական անվտանգության ապահովման տեխնոլոգիական հիմքի կատարելագործման և տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում վստահության միջոցների ամրապնդման հիմնական ուղղություններով, ինչպես նաև Համաձայնագրի իրականացման նպատակով ստեղծել պայմաններ Կողմերի իրավասու մարմինների փոխգործակցության համար (Հոդված 4),

- տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Կողմերի հետ գործադրել միասնական ջանքեր՝ համագործակցության իրավական հիմքերի ձևավորման և միջազգային իրավական բազայի կատարելագործման համար՝ իրականացնելով Համաձայնագրի 5-րդ հոդվածում սահմանված գործողությունները (Հոդված 5),

- աջակցել տեղեկատվական անվտանգությանը սպառնացող վտանգներին համատեղ արձագանքման գործնական մեխանիզմների ձևավորմանը՝ իրականացնելով Համաձայնագրի 6-րդ հոդվածում սահմանված գործողությունները (Հոդված 6),

- զարգացնելով տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում վստահության ամրապնդման միջոցառումները՝ ապահովել տեղեկատվության փոխանակումը և փոխադարձ ազդարարումը տեղեկատվական անվտանգության սպառնալիքների և դրանց աղբյուրների, համակարգչային միջադեպերի, արձագանքման իրականացվող միջոցառումների, այդ թվում՝ հետևանքների վերացման մասին, ՀՀ օրենսդրության համաձայն՝ տրամադրել

հայցվող տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է Համաձայնագրի գործողության ոլորտում ոչ իրավաչափ գործողությունների քննության համար, իրականացնել փորձի փոխանակում ոչ իրավաչափ գործողությունների կանխման, իրավական քննության, հետևանքների վերացման գործում՝ տեղեկատվական անվտանգության սպառնալիքների հակազդման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ, նպաստել տեղեկատվության փոխանակմանը՝ նշանների, փաստերի, մեթոդների և միջոցների ընդհանուր օգտագործման կապերի ցանցերի ահաբեկչական և այլ անօրինական նպատակներով շահագործման վերաբերյալ, ՀՀ օրենսդրության համաձայն՝ տեղեկատվության անվտանգության ապահովման ոլորտում իրականացնել գիտահետազոտական աշխատանքների արդյունքների, տեղեկատվական-վերլուծական և տեղեկատու նյութերի, նորմատիվ իրավական ակտերի փոխանակում, ինչպես նաև խթանել տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում գիտատեխնիկական մշակումները (Հոդված 7),

- ձեռնարկել Կողմերի հետ համաձայնեցված միջոցառումներ՝ ուղղված տեղեկատվական անվտանգության ապահովման տեխնոլոգիական հիմքի կատարելագործմանը, աջակցել տեղեկատվական անվտանգությունն ապահովող համատեղ, ինչպես նաև համատեղելի համակարգերի ձևավորմանը, նպաստել տեղեկատվական անվտանգության ապահովման նկատմամբ տեխնիկական պահանջների ներդաշնակեցմանը, ինչպես նաև աջակցել Կողմերին տեղեկատվական անվտանգության և արդիականացման ծրագրային և տեխնիկական միջոցներով ապահովման հարցերում (Հոդված 8),

- ապահովել Համաձայնագրի շրջանակներում համագործակցության ընթացքում փոխանցվող կամ ստեղծվող տեղեկատվության պաշտպանությունը, որի մատչելիությունը և տարածումը սահմանափակված են ՀՀ օրենսդրության համաձայն և ստացված տեղեկատվությունը չբացահայտել, չփոխանցել երրորդ կողմի՝ առանց այդ տեղեկատվության աղբյուր հանդիսացող փոխանցող Կողմի գրավոր թույլտվության (Հոդված 10, մասեր 1 և 3),

- ինքնուրույն հոգալ Համաձայնագրի կատարմանն ուղղված համապատասխան միջոցառումներին ՀՀ ներկայացուցիչների և փորձագետների մասնակցության հետ կապված ծախսերը (Հոդված 15, մաս 1):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**:

1. 2017 թվականի նոյեմբերի 30-ին ստորագրված՝ «Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 մարտի 2019 թվականի
ՍԴՈ-1450

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 27.04.2019թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 100

ՀՀ ՄԴ տեղեկագիրը
ՀՀ բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(93)2019
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(93)2019
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 1(93)2019